Վիպակ, Արձակ, Հայ գրականություն

16+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՄՈՏԵՐՔՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

1

Հազար տարի առաջ, գուցե և հինգ հարյուր, հայ շինականների մի քանի ընտանիքներ եկել և բնակություն էին հաստատել Հայաստանի լեռնային մասի անբնակ և ամուլ մի անկյունում: Ո՞վ գիտե, ինչո՞ւ համար էին հեռացել նրանք իրենց ծաղկուն ծննդավայրից՝ ներքևում, Արարատյան դաշտավայրում: Գուցե օտար ասպատակողների՞ց էին ճողոպրել նրանք, գուցե հայրենի հարստահարողների՞ց էին լլկվել ու փախել:

Լեռնային Հայաստանում շատ կային ապրելու հարմար վայրեր բերդերի ապահով պաշտպանության տակ: Խաշնարածության համար կային արոտավայրեր, երկրագործության համար՝ բերրի հող, որսորդության համար՝ անտառներ... Բայց դրանք բոլորը վաղուց արդեն ունեին իրենց տերերը և իրենց ճորտերը: Տեղ չունեին նորեկներն այնտեղ և եթե նույնիսկ ունենային էլ, չէին ցանկանա հովտում քաշած իրենց լուծը քաշել նաև լեռներում: Ուստի և, դեգերելով վայրից վայր, նրանք կանգ էին առել այդ անբնակ և ամուլ անկյունում: Այդտեղ կար մի քարքարոտ լանջ՝ տներ կառուցելու, մի խոպան բարձրավանդակ՝ արտեր ցանելու, և մի նվազ առվակ՝ ջուր խմելու համար: Դա բավական էր: Կարելի էր ապրել աղքատ, բայց ազատ, չունենալ տեր և չդառնալ ճորտ:

Տեղեկացել էին պատահաբար, որ այդտեղով հոսող աննշան առվակն անվանվում էր Խուտուտ: Այդպես կոչել էին նաև գյուղը: Իսկ թե ի՛նչ էր նշանակում Խուտուտ՝ հայտնի չէր: Գուցե դա խալդական կամ հեթիթական բառ էր՝ աղավաղված ձևով: Գուցե, ընդհակառակը, Խուտուտ՝ հենց նշանակում էր խուտուտ: Ինչ կարևոր էր դա: Հանգիստ առաջին խուտուտցիների ոսկորներին, որ վարեցին փոքրիկ բարձրավանդակ խոպանը, հավաքեցին քարերն այնտեղից, պարարտացրին հողն իրենց քրտինքով և աճեցրին այնտեղ առաջին ցորենը: Աշխարհիս ստեղծագործությունից ի վեր անբնակ մի փոքրիկ անկյունում ևս ծխացին ծխանները և տրոփեց մարդկային կյանքը…

Շա՞տ էին ապրել խուտուտցիներն այդտեղ որպես մարդկային հավասար համայնք՝ հայտնի չէ: Հայտնի է սակայն, որ հազար տարի հետո, գուցե և հինգ հարյուր, երբ Հայաստանի վրա պարզվեց իսկական հավասարության դրոշակը, Խուտուտ գյուղում նույնպես, ինչպես ամեն տեղ, կային և՛ տերեր, և՛ ճորտեր:

Որտեղի՞ց էին ծագել տերերն այնտեղ: Գուցե դրսի՞ց էին եկել: Ավելի հավանական է, որ նրանք առաջացել էին հենց Խուտուտի ներսում: Գուցե թագավորի հարկահավաքն էր դարձել առաջին հարստահարողը, գուցե գյուղի նահապետը, գուցե քահանան, գուցե գյուղն ավազակներից պաշտպանող զորախմբի պետը... Դա կարևոր չէ: Կարևորն այն է, որ փախչելով անգամ այդ անմարդ լեռների խորքը, Խուտուտի համայնքը չէր կարողացել խուսափել իր աշխարհի օրենքից՝ տեր ու ճորտի օրենքից:

Գյուղը հեղափոխությանը հասավ մոտ հիսուն ընտանիքով, մոտ հիսուն խրճիթում բնակված: Հազար տարվա ընթացքում նա, իհարկե, կարող էր շատ ավելի մեծանալ, եթե նրա աճումը

սահմանափակված չլիներ հողերի նեղ տարածությամբ: Դրանք հազիվ էին կերակրում հիսուն ընտանիքի՝ կիսաքաղց, կիսակուշտ, և դեռ մի քանի էլ հարստահարողների՝ նրանց ուսերին նստած:

Խուտուտցիներն անընդհատ հեռանում էին իրենց գյուղից, գնում էին երկրի ուրիշ վայրերը՝ այնտեղ որոնելու իրենց ապրուստը: Ո՞ւր ասես, որ չէին գնում նրանք.— Բաքու՝ նավթահորերում աշխատելու, Արարատյան դաշտ՝ աշնանը խաղողի որթերը հողի տակ թաղելու և գարնանը նորից հանելու, Երևան ու Թիֆլիս՝ համբալություն անելու, Ալեքսանդրապոլ երկաթուղային բանվորներ դառնալու…

Դրսում շատ ու շատ ավելի կային խուտուտցիներ, քան գյուղում: Նրանց, ովքեր չէին տեսել Խուտուտը, կարող էր թվալ, թե դա մի մեծ գյուղ էր կամ նույնիսկ ավան, որը Հայաստանին և Անդրկովկասին անդադար մատակարարում էր բանվորական էժան ձեռքեր:

2

Իր աղքատ և գորշ կյանքում մի պայծառ կետ ուներ Խուտուտը: Չգիտես ինչու, այնտեղ շարունակ ծնվում էին գեղեցիկ աղջիկներ: Խուտուտի աղջիկների հռչակը տարածված էր ամբողջ Հայաստանում և նույնիսկ այդտեղից էլ դուրս: Գյուղերից, նույնիսկ քաղաքներից, տղամարդիկ գալիս էին Խուտուտ՝ ամուսնանալու, տանելու աղջիկներին այնտեղից, թողնելով գյուղն առանց իր այդ միակ զարդարանքին:

Տղամարդիկ շատ էին, իսկ Խուտուտը՝ մի հատ, փոքր: Ուստի և սրբում-տանում էին բոլոր աղջիկներին՝ հազիվ արբունքի հասած: Աղջիկները գնում էին հոժար, ուրախությամբ, ավելի մեծ ուրախությամբ նրանց ճանապարհ էին դնում ծնողները: Եվ չէր հիշում գյուղը մի դեպք, երբ գնացած աղջիկները վերհիշեին իրենց Խուտուտը և այցելեին այնտեղ, եթե, իհարկե, դրան չէր հարկադրում որևէ արտակարգ ուրախ կամ տխուր դեպք: Ծնողներն իրենք էին գնում նրանց տեսության: Բայց դա չէր նշանակում, թե նրանք բոլորովին մոռանում էին իրենց ծննդավայր գյուղը:

Լինում էին դեպքեր, երբ գործով Երևան կամ Թիֆլիս գնացած որևէ խուտուտցի մասնակից էր լինում մի այսպիսի տեսարանի: Անցնում էր փողոցով մի գեղեցկուհի՝ սպիտակ, հաղթանդամ, լճի պես խոշոր աչքերով, ընդգծված շրթունքներով, սքանչելի ուղիղ քթով: Հանդիպող բոլոր տղամարդիկ՝ դպրոցական հասակի երեխայից մինչև ձեռնափայտին հենվող ծերունին, կանգ էին առնում, նայում ուսերից հետ մերկ նրա թևերին, արքայական լայն լանջին, փոքրիկ և չքնաղ գլխիկին:

Խշխշացնելով իր դիպակե թանկագին հագուստը, շողշողացնելով ադամանդներն ականջների և կրծքի վրա, կինը, ընդհանուր հիացմունքին վաղուց ի վեր վարժված և անտարբեր, անցնում էր՝ առանց որևէ բան տեսնելու:

Բայց հանկարծ, չգիտես ի՛նչ կերպ, նրա կիսափակ աչքերը նկատում էին մարդկանց մեջ կանգնած մի աղքատ գյուղացու՝ խուրջինն ուսին: Կինը շեղում էր ճանապարհը, մոտենում էր նրան և կամացուկ հարցնում.

— Հայրիկ, դու խուտուտցի՞ ես:

Մարդը զարմացած, բերանը բաց նայում էր կնոջը, մինչև որ նա ասում էր.

— Ես էլ եմ խուտուտցի, հայրիկ: Դու ումոնցի՞ց ես:

Եվ համարյա միշտ պարզվում էր, որ նրանք՝ այդ չքավոր գյուղացին և հարուստ գեղեցկուհին, ազգականներ էին՝ հեռավոր կամ մոտիկ:

Կինը թևանցուկ էր անում շշմած գյուղացուն և տանում էր իր հետ՝ առանց ուշադրություն դարձնելու նախանձկոտ մարդկանց ծաղրական բացականչություններին:

Ոչ, խուտուտցի կինը երբեք չճանաչելու չէր դնում իր համագյուղացիներին՝ ինչպես այդ անում էին ուրիշ գյուղերից քաղաք հարս եկած շատ աղջիկներ:

Խուտուտցի երիտասարդները մնում էին առանց աղջիկների: Ուրիշ գյուղերից ոչ ոք չէր համաձայնում իր աղջկան կնության տալ Խուտուտի պես կորած-մոլորած մի վայր: Ուստի և, խուտուտցի երիտասարդը, թեկուզև գյուղում իր ապրուստը մի կերպ հայթայթող, եթե չէր ուզում ընդմիշտ մնալ ամուրի, թողնում-հեռանում էր իրենց գյուղից՝ ուրիշ վայրերում որոնելու համար իր ընտանիքը:

Ապրուստի պահանջը և կնոջ պահանջը դատարկում էին գյուղը՝ թողնելով այնտեղ դարերից ի վեր սահմանված հիսուն ծուխը…

3

Խորհրդային իշխանությունն առաջին իսկ օրից իր հոգատար ուշադրությունը դարձրեց նաև Խուտուտի վրա: Գյուղը դպրոց չուներ՝ բացվեց դպրոց: Ճիշտ է, դա բացվեց ոչ թե Խուտուտում, այլ Խնկանոսում, բայց Խնկանոսը շատ հեռու չէր, խուտուտցի երեխաները կարող էին հաճախել այնտեղ:

Խուտուտը բժիշկ չուներ՝ հայտնվեց նաև բժիշկ, թեև դարձյալ նույն Խնկանոսում: Այնտեղ էր գտնվում նաև գյուղխորհուրդը, որին ենթարկվում էր Խուտուտը:

Կոլեկտիվ տնտեսություն ստեղծվելուց հետո, առաջին մի քանի տարում, գյուղի նյութական վիճակը զգալի լավացավ: Խուտուտի հողերը, որ երբեք չէին տեսել պարարտանյութ՝ բացի գյուղի սակավաթիվ անասունների թրիքից, ստացան սուպերֆոսֆատ և սկսեցին տալ անհամեմատ ավելի առատ բերք: Գյուղի սակավաթիվ անասունները, որոնք սնվում էին համարյա միայն դարմանով և խիստ նիհար էին, համեմատաբար բազմացան՝ մնալով սակայն նույն նիհարները: Տնտեսությունն ստացավ որոշ ինվենտար, իսկ երբ ստեղծվեցին մեքենա-տրակտորային կայաններ, դրանցից մեկն սկսեց սպասարկել նաև Խուտուտի փոքրիկ տնտեսությանը:

Հենց այն է, խուտուտցիները պատրաստվում էին թևակոխել բարեկեցիկ կյանք, երբ ամեն ինչ միանգամից կանգ առավ:

Սկզբում կարծեցին, թե մեղավորը տնտեսության նախագահն է և նրան փոխարինեցին մի ուրիշով: Տեսնելով, որ այդ երկրորդը նույնպես չի կարողանում առաջ վարել գործը, հանեցին նաև նրան և ընտրեցին երրորդին:

Այդ երրորդն Արփիար Գալոյանն էր: Միջնակարգ կրթությունն ավարտած երիտասարդ, եռանդով լի, նա իսկույն ձեռնարկեց գյուղի վիճակի արմատական վերափոխությանը: Վերակազմեց բրիգադները, օղակները, վերաբաժանեց նրանց ամրացված հողամասերը, վերանայեց աշխատանքի մեթոդները և… ոչինչ չստացվեց:

Արփիար Գալոյանը չուզեց հանձնվել: Նա պահանջեց և ստացավ ընտիր սերմացու, պահանջեց և ստացավ երկարատև վարկ: Ի դեպ, մինչ այդ էլ տնտեսության ստացած սերմացուն միշտ ընտիր էր և մինչ այդ էլ պետությունն օգնում էր տնտեսությանը վարկերով և ամեն ինչով: Արփիար Գալոյանը ձեռք առավ ուրիշ շատ միջոցներ, և նորից ոչինչ չստացվեց:

Հենց այն է, խուտուտցիներն ուզում էին հանել նաև այդ երրորդ նախագահին, երբ սկսվեց Հայրենական պատերազմը: Գյուղի երիտասարդները զորակոչվեցին բանակ, իսկ Արփիարը, որպես արդեն միջին տարիքի մարդ, մնաց: Գյուղացիներն իրենց նյութական անմխիթար վիճակն այժմ սկսեցին ամբողջապես վերագրել պատերազմին, և Գալոյանը մնաց իր տեղում:

Պատերազմից հետո, սակայն, դրությունը չլավացավ: Խուտուտցիները հիշեցին, որ մի քանի տարի առաջ ուզեցել էին հանել իրենց նախագահին: Հենց այն է, պատրաստվում էին կատարել դա հիմա, երբ վերջապես հասկացան, որ Գալոյանն այդտեղ մեղավոր չէ: Ի՞նչ կարող էր անել մի մարդը, երբ գյուղի սակավաթիվ և քարքարոտ հողերը հասել էին իրենց բերքատվության սահմանին և այլևս չէին ուզում առաջ գնալ: Իզուր էին տարիներ շարունակ հանդիմանել նրան՝ թե՛ գյուղում, թե՛ շրջանում և թե՛ Երևանում: Իզուր էին մեղադրել նրան, թե նա իր մեղքն է գցում «օբյեկտիվ պատճառների» վրա: Իզուր էին նրա աչքը կոխել Վիլյամսի օրենքն այն մասին, թե «հողերի բերքատվությունը սահման չունի»: Խուտուտին հարկավոր էր ոռոգում: Խուտուտի հողերը շատ քիչ էին, ջուր չկար մոտակայքում, իսկ անձրևները գալիս էին սակավ և առանց ծրագրի:

Մտածելով, թե ի՛նչ հիմնական ելք գտնեն Խուտուտի համար, վերևներում, որպես մասնակի միջոցառում, իջեցրին գյուղի տնտեսության բոլոր պարտավորությունները, սահմանեցին բերքատվության ավելի ցածր նորմա, քան մյուս գյուղերում: Խուտուտցիները բոլորովին չուրախացան դրա համար: Ի՞նչ ուրախանալ, երբ քեզ արտոնություն են տալիս աղքատ ապրելու: Հիմնական ելք չէր նաև այն, որ պետությունը զիջեց տնտեսության բոլոր պարտքերը:

Խուտուտի մասին մարդիկ մտածեցին երկար տարիներ: Իսկ մինչ այդ, ամբողջ երկիրը Խուտուտի շուրջը ծաղկում էր և բարգավաճում: Գյուղերում ծավալվում էին ցանքսերը, բազմանում էին անասունները, կառուցվում էին նորանոր ֆերմաներ, արդյունաբերական ձեռնարկություններ... Գյուղերում բարձրանում էին բնակելի նոր շենքեր, ակումբներ, հիվանդանոցներ, բաղնիքներ՝ քաղաքներին հատուկ հարմարություններով, անց էին կացվում ջրմուղներ, կանոնավոր փողոցներ, որոնք ոչ սակավ դեպքերում ծածկվում էին ասֆալտով: Գյուղերում ծաղկում էին ամբողջ պուրակներ, շենքերը ողողվում էին էլեկտրական լույսով, գյուղերի պռունկներին կամ գլխավոր փողոցի վրա ստեղծվում էին ավտոբուսային կայաններ ու կանգառներ…

Խուտուտն ընկած էր այդ բոլորից հեռու, մի խուլ անկյունում, ինչպես աչքաթող արված զավակ: Մինչդեռ խուտուտցիները նույնպիսի մարդիկ էին, ինչպես բոլորը: Նրանք էլ էին ուզում ապրել բարեկարգ բնակավայրում, ավելի և ավելի բարեկեցիկ կյանքով:

Չէր կարելի ասել, թե խորհրդային կարգերում խուտուտցիները զրկված էին այդ հնարավորությունից: Նրանց առջև, ինչպես բոլորի, բաց էին բոլոր դռները, բայց երկրի այլ վայրերում: Կային բարձրագույն կրթություն ստացած խուտուտցի գյուղատնտեսներ, որոնք աշխատում էին հարևան գյուղերում: Կային խուտուտցի կոլտնտեսության նախագահներ, բրիգադիրներ, անվանի կովկիթներ, տրակտորավարներ՝ նույնպես հարևան գյուղերում: Քաղաքներում կային խուտուտցի գիտնականներ, կար ջութակահար, ցեխի հերթափոխության ինժեներ, բժիշկ, կային ուսանողներ... Կային, իհարկե, նաև խուտուտցի բյուրոկրատներ, դատարկապորտներ, բանսարկուներ:

Իսկ Խուտուտ գյուղում մնացածների աչքը շարունակ դուրսն էր: Նրանք աշխատում էին ժամանակի ընթացքում ստեղծել տարբական հնարավորություններ՝ նույնպես հեռանալու գյուղից: Ծնվում, աճում և մեծանում էին նորերը, հասնում որոշ տարիքի, որոշ կրթության, նյութական որոշ վիճակի, և նույնպես, իրենց հերթին, հեռանում էին գյուղից՝ երկրի այլ վայրերում շարունակելու իրենց կյանքը:

Ո՛չ գյուղում, ո՛չ շրջանում այլևս ոչ ոք չէր պատրաստվում հանել աշխատանքից Արփիար Գալոյանին, թեև բոլորը, հին սովորության համաձայն, հաճախ դժգոհելով շարունակում էին քննադատել նրան, մեղադրել, նախազգուշացնել:

Արփիար Գալոյանը, որը ոչ մեկից պակաս մարդ չէր, որը նույնպես կարող էր դասավորել իր կյանքը երկրի որևէ այլ վայրում, անմռունչ քաշում էր իր բեռը և աշխատում, որ իր ղեկավարած տնտեսության անդամներին հասցնի գոնե թևավորության աստիճանի, որպեսզի նրանք կարողանան թռչել-հեռանալ Խուտուտից: Կոլտնտեսության նախագահի կոչումից ավելի՝ նրան կսազեր կայարանապետի կոչումը:

Բայց միայն թևավորներ չէ, որ ծնվում էին Խուտուտում՝ մի օր այնտեղից թռչել-գնալու համար: Գյուղում կային բավական թվով մարդիկ, որոնք հաշտվել էին իրենց ոչ բարեկեցիկ կյանքի հետ և մտադրություն չունեին փախչելու այնտեղից: Դրանք ծույլ և եռանդազուրկ մարդիկ չէին, որոնք նախընտրում են քիչ աշխատել՝ թեկուզև քիչ ստանալու գնով: Դրանք լավ մարդիկ էին, գյուղից հեռացողներից ոչ պակաս լավ: Նրանց տանջում էր խիղճը: Նրանք մտածում էին, որ եթե բոլորը հեռանան, գյուղը հո կդատարկվի՞: Հարկավո՞ր է վերջապես, որ ոմանք մնան այնտեղ:

Եվ նրանք, իսկական անձնազոհությամբ, իրենց վրա էին վերցրել այդ ոմանքը լինելու անհրապույր դերը:

Նայելով նրանց, Արփիար Գալոյանը հաճախ ցանկություն էր զգում մոտենալու և շշնջալու նրանց ականջներին.

— Այ մարդիկ, մեղք եք, վեր կացեք հեռացեք էս անբախտ տեղից...

Ի միջի այլոց, դա միակ և ծայրահեղ բանն էր, որ չէր անում նա: Իսկ երբ գյուղացիներն իրենք էին դիմում նրան՝ կոլտնտեսությունից և գյուղից հեռանալու համար, նա համարյա միշտ մակագրում էր՝ «դիմումը հարգել»: Վերևներում բարկանում էին նրա վրա, մեղադրում էին նրան և խրատում, որ հարկավոր է «նյութական շահագրգռություն ստեղծել գյուղի աշխատավորության համար», հարկավոր է «կազմակերպել կոլտնտեսականների կուլտուրական հանգիստը» և այլն և այլն: Բայց նա միայն ձեռքն էր թափ տալիս այդ հանրածանոթ իմաստությունների վրա և խորհուրդ էր տալիս խրատողներին՝ գալ Խուտուտ, գոնե մի քանի ամսով անձամբ ղեկավարել տնտեսությունը և ցույց տալ, թե ինչպե՛ս պետք էր անել այդ:

Պատահում էր, իհարկե, որ մարդիկ այցելում էին Խուտուտ, և շարունակում էին ավելի սրտացավ մտածել նրա մասին: Բայց մտածում էին դանդաղ, երկար, բազմակողմանի, որովհետև գործն շտապ չէր, խուտուտցիների առջև բաց էին երկրի հարավն ու հյուսիսը, արևելքն ու արևմուտքը, իսկ գյուղում մնացածները չէին կազմում մի առանձին թիվ, որպեսզի հարցն ստանար կարևոր նշանակություն: Վերջ ի վերջո, հարցը վերաբերում էր հիսուն ընտանիքի:

Խուտուտը շարունակում էր իր կյանքը նույնությամբ և հայտնի էլ չէր՝ լինելո՞ւ էր այնտեղ որևէ փոփոխություն:

Իր արտաքին տեսքով գյուղը մնացել էր համարյա նախկինը: Ո՛չ գյուղում, ո՛չ գյուղից դուրս, չկար ոչ մի ծառ, ոչ մի թուփ: Խուտուտը փռված էր մերկ, ամեն կողմից տեսանելի: Միայն խանձված, դեղին խոտն էր շրջապատել այն, ցածրիկ, գետնահուպ խոտը...

Գյուղի կենտրոնում կանգնած էր սևաքար եկեղեցին՝ բարձր, փառահեղ: Դրա ստվերոտ կողմի պատերը միշտ հագեցած էին խոնավությամբ և ունեին մուգ-թարմ գույն՝ բացի այն տեղերից, որտեղ դրանք ծածկված էին կանաչ մամուռով: Իսկ այդպիսի տեղերը շատ էին, որովհետև եկեղեցին իր բազմազան ծավալներով գոյացրել էր մեծ ու փոքր շատ անկյուններ, ստվերի և խոնավության պատսպարաններ:

Կանգնել էր եկեղեցին՝ ինչպես հայոց պատմության մի կոթող: Դրա ճարտարապետությունից, ներդաշնակ ծավալներից, զարդաքանդակներից, բարձր զանգակատնից, ավելի բարձր կաթողիկեից, եկեղեցին շրջապատող լայն մայթերից, որոնց սալաքարերի արանքներում աճել էր խոտը, նրա ամբողջ տեսքից գալիս էր դարերի բույրը:

Ո՛չ եկեղեցու շուրջը, ո՛չ էլ ներսում, սովորաբար չէր լինում ոչ ոք: Խաղաղ լռության մեջ կանգնած եկեղեցու ամեն մի քար, ամեն մի քանդակ անխոս պատմում էր պատերազմների և դաղարների, եռուզեռների և ամայությունների, վերելքների և անկումների բազմաչարչար պատմությունը:

Եկեղեցու հարավային կողմի սպիտակ փոքրիկ դուռը քամուց բացվելիս երևում էր ներսի մթությունը, որի մեջ նկատվում էր երբեմնի սպիտակ, բայց վաղուց ի վեր մոմերի ծխից սևացած քառանկյունի մի սյուն: Դրա վրա կախված էր եղել սրբապատկեր: Մինչև հիմա էլ սյան ներքևի մասը փայլում էր մոմերի բազմաթիվ ու բազմաթիվ կաթոցներից:

Քամին նորից ճոճում էր սպիտակ, փոքրիկ դուռը, այն ծածկվում էր թեթևակի ճռինչով: Ներսի տեսարանի հետ միասին աչքից անհետանում էր կարծես նաև ամբողջ անցյալը:

Բայց ո՛չ, եկեղեցու շուրջը փռված էր գյուղը՝ իր տեսքով նույնպես անցյալի մի բեկոր: Թվում էր, թե դրա բոլոր տնակները կառուցվել էին քարի այն տձև, տափակավուն կտորտանքից, որ երբևէ գոյացել էր եկեղեցու համար քարեր տաշելուց հետո: Գունաթափվե՞լ էր քարի այդ կտորտանքը, թե՞ փոշին էր ներծծվել ծակոտկեն մակերեսներից ներս, այնուամենայնիվ գյուղը վաղուց ի վեր ստացել էր հողի գույն՝ գետնի փոշուց չզանազանվող:

Այնտեղ դեռ մինչև հիմա էլ հացը թխում էին թոնիրներում: Վաղ լուսաբացին, դեռ արևը չծագած, գյուղի վրա կանգնում էր աթարի ծխի մանուշակագույն, մշուշը: Քիչ հետո գյուղով մեկ տարածվում էր թարմ լավաշի համեղ, մի քիչ խանձախառն բույրը: Ճռնչում էր հնությունից չորացած մի դուռ, կանչում էր ուշացած մի աքաղաղ, և թվում էր, թե չէր դիպել այդ գյուղին դարերի պատմությունը, չէր կատարվել հեղափոխություն, չէին եղել նորաստեղծ խորհրդային տարիները...

Եթե վեր կենար գերեզմանից մի հին պատմագիր կամ ճանապարհորդ, որն անցյալ դարերում շրջելով երկրից երկիր, մոլորվել, շեղվել էր մեծ ճանապարհների և անցել Խուտուտ գյուղով, եթե վաղ լուսաբացին նորից անցներ այդտեղով, նա հազիվ թե նկատեր իր երկու այցելությունների միջև ընկած ժամանակաշրջանի հսկայական մեծությունը: Խուտուտ գյուղում նա պիտի տեսներ էլի նույն հիսուն տնակները՝ տափակ կտուրներով, կտուրների վրա՝ խոտի դեզերով, և դռների մոտ՝ աթարի շեղջերով: Գրաբարի լուրջ ոճի մեջ ամենայն լրջությամբ գործածելով ծիծաղելի Խուտուտ անունը, նա պիտի գրեր:

«Դարձյալ տեսի Խուտուտն: Փոփոխությունք այլևայլք՝ ոչ տեսանեմ: Խուտուտ հաղթահարյալ է զժամանակս և զպատմությունս: Ազգք բազում ելանին և անկանին ի վերա աշխարհի մերույն,

անապատք ծաղկին և ծաղկունք անգոյանան, թագավորք մեռանին և մանկունք ծնանին, կրեն փոփոխություն ամենայն իրք, մնա անեղծ ի սկզբանե անտի-զԽուտուտն»:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1

Ճռնչաց հնությունից չորացած մի դուռ: Տնակներից մեկից փողոց դուրս ելավ մի աղջիկ: Տնեցիների ուշադրությունը չգրավելու համար նա կամացուկ ծածկեց դուռն իր ետևից և նայեց շուրջը: Համոզվելով, որ փողոցում ոչ ոք չկա, նա արագ քայլեց դեպի աջ: Հասնելով անկյունին, կանգ առավ, զգուշությամբ նայեց դեպի հատող փողոցը: Ապահովվելով, որ այնտեղ ևս ոչ ոք չկա, նա թեքվեց այնտեղ և քայլեց ավելի արագ:

Խուտուտը կառուցված էր սարալանջն ի վեր: Որքան էլ որ թեք էր վերելքը, այնուամենայնիվ աղջիկը շուտով հոգնեց և կարմրեց: Նա մի պահ մտածեց դանդաղեցնել քայլերը, բայց նայեց երկնքին, որոշեց ժամանակը և սկսեց համարյա վազել: Լուսամուտների մոտով անցնելիս նա կռացնում էր գլուխը կամ շուռ էր տալիս դեմքը, բակերի մոտով անցնելիս զգույշ նայում էր դարպասներից ներս, թե չկա՞ արդյոք որևէ մեկն այնտեղ, որը կարողանա ցածրիկ պարիսպների ետևից տեսնել իրեն:

Աղջիկը հագել էր չթե բարակ շրջազգեստ՝ կարճ թևերով, մոխրագույն, վրան իրարից հեռու-հեռու շաղ եկած վարդերով: Նա գլխաբաց էր և նրա ոտքերը, մաշված կիսակոշիկների մեջ, մերկ էին: Հայաստանի լեռնային շրջանի մեղմ, բայց ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուստ արևը կիզել էր նրան, համարյա սևացրել: Բայց դա այն հաճելի բրոնզագույն կիզվածքը չէր, որ ստանում է կնոջ սպիտակ մարմինը՝ ծովափում հանգստանալիս: Դա սրճագույն, անհրապույր կիզվածք էր՝ դաշտային աշխատանքների ժամանակ վաստակած: Դադարի ժամերին գետնի վրա հանգչելիս, այդպիսի մարմինը չի զանազանվում հողից:

Նույն արևը կիզել, տեղ-տեղ գունաթափել էր աղջկա սև մազերը՝ դարձնելով դրանք շագանակագույնի տարբեր երանգների տգեղ խառնուրդ: Աղջկա շրթունքները նույնպես, չոր, ճաքճքված և բաց վարդագույն, համարյա սպիտակ, կարծես արևից էին գունաթափվել:

Եթե չլիներ այդ բոլորը, աղջկան կարելի էր համարել գեղեցիկ, նույնիսկ շատ գեղեցիկ, որովհետև նա ուներ բացառիկ կանոնավոր դիմագծեր: Նա նման էր հնադարյան վարպետի նկարած պատկերի, պատկերի պես էլ ժամանակից գունաթափված, բուրվառների կամ հրդեհների ծխից սևացած, տեղ-տեղ ճաքճքած…

Վերջապես դուրս գալով գյուղից, նա կանգ առավ բարձրում, խոր շունչ քաշեց և ժպտաց: Շուռ գալով դեպի գյուղը, նա նայեց ներքև: Գյուղը չէր երևում, երևում էր միայն այն փողոցը, որով նա եկել էր: Այնտեղ դարձյալ ոչ ոք չկար:

Գյուղի վերջին տնակները դեպի լանջի բարձունքը նայում էին իրենց ետին, խուլ պատերով: Այդ կողմից աղջիկն ապահով էր: Մի քիչ շեղելով ճանապարհը՝ փողոցից մի կողմ քաշվելու համար, նա շարունակեց բարձրանալ դատարկ լանջով, որն այժմ արդեն բավական դիք էր: Գետինն աղջկա ոտքերի տակ քարքարոտ էր, պնդացած և խոտից համարյա զուրկ:

Արևը դեռ չէր ծագել: Լանջը գտնվում էր ստվերի մեջ: Համարյա ցուրտ էր: Իր չթե բարակ զգեստի մեջ, մերկ թևերով ու ոտքերով, աղջիկը մրսում էր: Քայլելուց տաքացել էր նրա միայն դեմքը:

Նա շուտ-շուտ նայում էր վերև՝ տեսնելու համար, թե որքա՛ն է մնացել մինչև կատարը: Այնտեղ, լանջի վերևում, բերդի անառիկ պարսպի նման, ձգվել էր ժայռերի դիք, համահավասար շարքը: Իսկ թե ի՛նչ կար դրա վրա՝ չէր երևում:

Ետևից՝ գյուղից, լսվեց աքաղաղի ուշացած կանչ: Աղջիկը ներողամտաբար ժպտաց և օրորեց գլուխը: Դա, իհարկե, նրանց հիմար աքաղաղն է կանչում մի ավելորդ անգամ: Գյուղում այլևս ոչ ոք քնած չէ, շուտով բոլորը կհավաքվեն՝ աշխատանքի գնալու համար:

Աղջիկը նորից նայեց ետ: Այժմ արդեն, ավելի բարձրից, գյուղը երևում էր ամբողջովին: Բայց երևում էին համարյա միայն կտուրները՝ շարունակ իրարից ցածր: Այնուամենայնիվ որևէ տեղից կարող էին նկատել աղջկան: Ուստի և լավ էր, որ նա գտնվում էր ստվերի մեջ և, բացի դրանից, զգուշության համար հագել էր իր ամենաքիչ ծաղկավոր զգեստը: Պետք էր շտապել՝ քանի դեռ արևը չէր ծագել…

Դժվար վերելքից արագ-արագ շնչելով, աղջիկն ընդհուպ մոտեցավ ժայռերի պարսպին՝ դեռ հեռվից քայլերն ուղղելով դեպի դրա միակ ճեղքվածքը: Պարիսպն այնտեղ կարծես փլվել էր, իրար վրա թափթփված ժայռերի մի քանի անկանոն խորանարդները գոյացրել էին սանդուղքի պես մի բան: Կարող էր նույնիսկ թվալ, թե մարդիկ էին այդպես դրել քարերը: Բայց ո՞ւմ էր հարկավոր բարձրանալ այնտեղ: Լանջի վրա չկար ոչ մի ոտնահետք:

Աղջիկը մագլցեց ժայռերն ի վեր և հանկարծ նրա ամբողջ կերպարանքը ողողվեց արևի լույսով: Նա մի պահ կանգ առավ պարսպի եզրին: Արևով թափանցած հագուստի մեջ հստակ երևաց նրա բարեձև մարմինը: Նա կանգնել էր կարծես մերկ, իսկ չթե շրջազգեստը՝ նրա շուրջ նման էր լույսով թափանցված գորշ մշուշի:

Աղջկա դիմաց փռված էր մի տարօրինակ բարձրավանդակ՝ ամբողջովին ծածկված մեծ ու փոքր ժայռերով: Կարծես այդտեղ երբևէ կանգնած էր եղել ցիկլոպյան մի մեծ բնակավայր, որը հետո քանդել էին և քարերը շաղ տվել դաշտով մեկ: Եկեղեցու քարերի նման դրանք ևս տեղ-տեղ ծածկված էին մամուռով, բայց մամուռն այդտեղ կանաչ չէր, այլ՝ կապտավուն ու դեղին, համարյա սպիտակ: Եվ ոչ էլ խոնավ էր, այլ բոլորովին չոր և, ճիշտն ասած, մամուռ էլ չէր, այլ՝ քարաքոս:

Աղջիկն ավելի շուտ զգաց, քան թե տեսավ, որ մեկը քարերի միջից նայում է նրան.

— Նանա՞ր...— ձայն տվեց երիտասարդը նստած տեղից:

Աղջիկը ցնցվեց:

— Ես եմ, Նանար, մի՛ վախենա:

— Իսկ ես կարծում էի, թե դու դեռ չես եկել:

— Կես ժամ է որ սպասում եմ քեզ: Նստիր, նստիր,— անհանգստացավ երիտասարդը,— կնկատեն ներքևից:

Նանարն իսկույն նստեց վախեցած, առանց հարմար տեղ ընտրելու: Նրա մարմինը քարերի արանքում ընդունեց ինչ-որ ծուռումուռ դիրք, շրջազգեստը վեր քաշվեց և բաց արեց նրա ծնկները,

որոնք անսպասելիորեն լիքն էին և անսպասելիորեն սպիտակ: Նանարն արագ վար քաշեց փեշը և անհանգստացած նայեց տղային՝ չնկատե՞ց արդյոք:

Բայց տղան նայում էր աղջկա երեսին՝ լուռ, անթարթ:

— Ինչո՞ւ ես կանչել ինձ, Մամբրե,— հարցրեց աղջիկը, բայց նրա խոշոր, սև աչքերի մեջ, որոնք ունեին մի փոքր խորամանկ տեսք, չկար իսկական հետաքրքրություն: Ըստ երևույթին նա լավ գիտեր, թե ինչու են կանչել իրեն:

— Նստիր էս կողմ, էստեղ ավելի հարմար է,— առանց նրան պատասխանելու, ասաց տղան:— Սպասիր, Նանար ջան, գետինը չոր է, նստիր պիջակիս վրա, իսկ թևդ դիր պայուսակիս:

— Հարկավոր չէ,— մերժեց աղջիկը,— ես լավ եմ նստած:

Եվ միայն հիմա ուշադրություն դարձնելով, հարցրեց.

— Դու պայուսակո՞վ ես: Ուրեմն արդեն գնո՞ւմ ես:

— Այո, հենց դրա համար էլ կանչել եմ քեզ…

Նրանք լռեցին: Նանարն սկսեց ուշադիր զննել տղային: Մամբրեն հագնված էր ամառնավարի թեթև, գյուղավարի հասարակ, և, ինչպես ամեն երիտասարդ, աշխատել էր տալ իր հագուստին ըստ հնարավորին վայելուչ տեսք: Խիստ արևառ և մի քիչ պզուկոտ դեմքով, կարճ ու հարթ մազերով, որոնք իջել էին նրա ճակատին, ծոծրակի և մասամբ էլ ականջների վրա, նա ավելի շուտ տգեղ էր, քան գեղեցիկ: Նրա լայն կզակավոր լիքը դեմքի վրա գծագրվել էին հարկ եղածից բարակ շրթունքները, հարկ եղածից մի քիչ փոքր քիթը: Գեղեցիկ էին նրա միայն աչքերը՝ ոչ խոշոր, բայց սև, թախծոտ ու երազկոտ:

Աղջկա հայացքը, բարձրանալով դեպի տղայի աչքերը, դարձավ հարցական՝ ինչո՞ւ չես խոսում:

— Կանչեցի, որ մնաս բարև ասեմ քեզ,— բացատրեց տղան:

— Արժե՞ր դրա համար,— դժգոհեց աղջիկը:— Իսկ եթե գյուղում նկատեին, որ էս կողմն եմ գալիս, չէի՞ն ասի, թե տեսնես ո՞ւր է գնում էս աղջիկը: Մի՛ մոռանա, որ մենք, համենայն դեպս, գյուղ տեղ ենք: Կտեսնեն մեզ իրար հետ ու կկարծեն, թե սիրահարված ենք…

Վերջին խոսքերի վրա տղան տխուր նայեց աղջկան:

— Իսկ հետաքրքիր է, ինչո՞ւ ես էդպես նայում ինձ, Մամբրե,— մի քիչ գրգռված, հարցրեց Նանարը:

Մամբրեն պաուզա տվեց այնքան, որ պատասխանած չլինի նրա հարցին, ապա ասաց հանդիմանաբար.

— Իբրև թե չգիտե՞ս, թե ինչու համար եմ կանչել քեզ:

— Ինչո՞ւ չգիտեմ: Դու ինքդ ասացիր՝ մնաս բարովի համար: Ի՞նչ ես քմծիծաղ տալիս:

— Լավ, Նանար, վերջ տուր: Դու լավ գիտես, թե ինչու համար եմ քեզ կանչել: Չգիտենայիր՝ չէիր գա:

— Այսի՞նքն...— վիրավորված ինքնասիրությամբ լարվեց աղջիկը:

— Այսինքն՝ դու գիտես, որ ես բան ունեմ քեզ ասելու:

— Գիտեմ,— հանձն առավ աղջիկը։— Դե ուրեմն ասա։

— Ասել եմ, Նանար, հազար անգամ եմ ասել։ Իսկ հիմի դու պիտի ասես, ոչ թե ես։ Ախր գնում եմ…

Աղջիկը ոչինչ չասաց։ Տղայի աչքերը սպասողական ու հլու, պատասխան էին հայցում։

Բարձրավանդակի վրա ընկավ արևի լույսը։ Քարերը, որ մինչ այդ սառն էին, համարյա իսկույն տաքացան։ Երիտասարդները նստել էին ինչ-որ կլոր սկուտեղի մեջ՝ հողե հատակով և իրար վրա կուտակված քարե պռունկներով։ Ոչ ոք նրանց տեսնել չէր կարող ո՛չ ներքևից, ո՛չ էլ այդ քարքարոտ բարձրավանդակից, եթե, իհարկե, գտնվեր այդտեղ բարձրանալու ախորժակ ունեցող էլի մի երրորդ մարդ։

— Քանի՞ տարով ես գնում, Մամբրե,— հարցրեց աղջիկը՝ ժայռերի ստվերից փոխադրվելով արևի տակ։

— Հինգ։

— Իսկ ի՞նչ ինստիտուտ։

— Գիտես, էլ ի՞նչ ես հարցնում։

— Ծիծաղելու բան է,— գլուխն օրորեց և իրոք ծիծաղեց Նանարը։

— Իսկ ինչո՞ւ է ծիծաղելու բան…— Մամբրեի հաստ կզակը ցնցվեց վիրավորանքից։

— Բա ի՞նչ է։ Խուտուտի նման մի փոքրիկ գյուղից երկու երկրաբան, երկուսի անունն էլ Մամբրե։ Իսկ մյուս Մամբրեն՝ ընկերդ, չի՞ գալիս քեզ հետ, որ դառնաք երեք…

Երիտասարդը չափազանց վիրավորվեց, բայց ավելի շատ վշտացավ այն բանի համար, որ աղջկան տիրեց այդպիսի մի անպատեհ զվարթ-ծաղրական տրամադրություն։ Մինչդեռ նրանք այնպիսի՛ կարևոր խոսակցություն ունեին…

Որպեսզի աղջիկը նորից վերստանա իր լրջությունը և հարգանքը դեպի նրան, Մամբրեն ասաց հանգիստ՝ ճիգ գործադրելով իր վրա.

— Նախ և առաջ, առաջին Մամբրեն, այսինքն՝ Մամբրե Բլանցը, երեսուն տարի է, ինչ հեռացել է մեր գյուղից։ Այնպես որ, դու նրան մի՛ հաշվիր։

— Ինչպե՞ս չհաշվեմ,— ծիծաղեց Նանարը,— հենց նրանից է սկսվել ամեն ինչ։

— Ի՞նչ անենք,— բարկացավ Մամբրեն,— բա ի՞նչ ես կարծում։ Աղքատ, հետամնաց գյուղ է եղել Խուտուտը և հանկարծ մեր միջից դուրս է եկել մի խոշոր երկրաբան։ Դե, մեր ծնողներն էլ, խավար աշխարհի մարդիկ, մտածել են, որ եթե իրենց տղաների անունն էլ դնեն Մամբրե, ուրեմն նրանք էլ դուրս կգան երկրաբան։ Հեղափոխությունից առաջ քի՞չ էին անուն դնում՝ Նապալեոն, Կնյազ, Մանթաշով…

— Ի՛նչ են մտածել մեր ծնողները՝ էդ իրենց գործն է,— ձեռքը թափ տվեց Նանարը,— բայց դո՞ւ ինչու ես շարժվում նրանց խոսքով։ Մի՛ ասա, լավ, գիտեմ։ Պիտի ասես, որ փոքրուց էնքան ես լսել՝ «տղաս երկրաբան է դառնալու», որ ինքդ էլ ես ընկել դրա ազդեցության տակ։

— Չէ, Նանար, մենակ դա չէ,— արդարություն հայցող հայացքով ասաց Մամբրեն,— ես սիրում եմ երկրաբանությունը:

— Վերջապես դա քո գործն է,— վիրավորական անտարբերությամբ եզրափակեց աղջիկը։— Դու քո հիմնական նյութն ասա:

Բայց Մամբրեն զգաց, որ չի կարող այդ նյութն այդպես կիսատ թողնելով անցնել «հիմնականին»: Ուստի և հարցրեց.

— Ուրեմն երկրաբանությունը քեզ դուր չի՞ գալիս:

— Ինչո՞ւ չէ: Իրեն համար գիտություն է, էլի: Մենակ թե մի քիչ ծիծաղելի է դուրս գալիս: Մի՛ նեղանա, Մամբրե: Եթե Բլանցը չլիներ՝ ուրիշ բան:

— Իսկ ի՞նչ է արել Բլանցը մեր գյուղի համար,— անսպասելի ցասումով հարցրեց Մամբրեն։— Աղքատ ծնողներն իրենց բերանի հացը կտրելով ուսումի են տվել նրան, սպասել են, որ կրթությունն ավարտի ու վերադառնա գյուղ, իսկ նա ի՞նչ է արել: Մոռացել է գյուղը, գնացել է Ուրալ, կարծես էնտեղ երկրաբան չկար:

— Դու իզուր ես ասում,— վրդովվեց աղջիկը։— Հայրիկը պատմում էր, որ նա աշխատանքի անցնելուն պես ծնողներին տեղափոխել է իր մոտ: Նրանք հենց էնտեղ էլ մեռել են:

— Իսկ գյուղը նրա ծնողը չէ՞,— ավելի և ավելի բորբոքվելով, հարցրեց Մամբրեն։— Իսկ նա Խուտուտի զավակը չէ՞: Թե՞ նա մեր գյուղը երկիր չի համարում: Եթե վերադառնար, ուսումնասիրեր, գուցե մի բան էլ գտներ մեր գյուղի մոտերքում, դրա պատճառով մեր գյուղն էլ զարգանար, առաջ գնար... Հազար տարվա գյուղ է Խուտուտը: Լավ, թող լինի հինգ հարյուր: Ի՞նչ ես կարծում, բավական չէ՞, որ մնա էս վիճակում, այսինքն՝ ուղտի պոչի պես, ո՛չ կարճանա, ո՛չ երկարի: Քանաքեռը մեր գյուղից շատ մեծ է եղել Աբովյանի ժամանակ: Իսկ հիմի՞: Էլեկտրակայան, գործարան, հանգստի տուն, տուն-թանգարան... Գյուղն աճել, դարձել է համարյա քաղաք... Չէ, Նանար, դու Բլանցին իզուր ես հաշվում: Մեր գյուղի առաջին երկրաբանը ես եմ լինելու։ Իսկ նա էգոիստ է:

Մտածելով, որ աղջիկը կարող է չհասկանալ «էգոիստ» բառը, նա բացատրեց՝ ուրիշ ձայնով, ավելի հանգիստ:

— Էգոիստ, այսինքն՝ թող աշխարհը վառվի, մենակ թե իմ մի խորոմ խոտը չվառվի։

Այժմ արդեն բավական հանգստացած, Մամբրեն հաշտ հայացքով նայեց աղջկան:

Նանարը, զգալով նրա հայացքն իր վրա, աչքերը բարձրացրեց վեր, ապա ավելի վեր, նայեց երկնքին և ցնցվեց՝ որոշելով ժամանակը:

— Ես ուշացա, Մամբրե, գնամ,— ասաց նա:

— Ո՞ւր գնաս,— սառեց տղան,— ես դեռ ոչինչ չեմ ասել քեզ...

Համարելով, որ դա քիչ է՝ աղջկան պահելու համար, նա ավելացրեց.

— Հիմի էլ ինչպե՞ս գնաս, ամբողջ գյուղը ոտքի վրա է: Սպասիր, մինչև դուրս գան աշխատանքի։

Նրանք սկսեցին ականջ դնել: Ներքևից՝ գյուղից, լսվեցին ավտոմեքենայի հոնդոց, եզան բառաչ։

— Այսինքն՝ ես մի ժամով թույլտվություն ունեմ բրիգադիրից,— հայտնեց աղջիկը։

— Էլ ուրեմն ի՞նչ կա,— ուրախ բացականչեց տղան,— էլ ինչո՞ւ ես շտապում...

Աղջիկը նորից նայեց երկնքին և համոզվելով, որ թեև ուշ է, բայց դեռ ժամանակ կա, որոշեց մնալ։

— Տուր պայուսակդ, Մամբրե,— ասաց նա,— թևս ցավեց հող ու քարի վրա։ Ի՞նչ կա մեջը։ Չճխլեմ հանկարծ։

— Թեկուզ ճխլես։ Իսկ որ սիրտս ես ճխլել, դա ոչի՞նչ։

— Վերջ տուր, Մամբրե,— ընդհատեց աղջիկը։— Դու ուրիշ բան էիր ասում։

— Ուրիշ բանը վերջացրինք։ Դեռ շատ էլ վատ արեցինք, որ էդքան ժամանակ կորցրինք դրա վրա։

— Սխալ ես, Մամբրե։ Ես չպիտի՞ իմանամ, թե դու ի՛նչ ծրագիր ունես կյանքում։ Ես հո չե՞մ կարող ամեն մարդու սիրել։

— Ուրեմն դու ծրագրո՞վ ես սիրում,— ցավակցաբար գլուխն օրորեց Մամբրեն։

— Իսկ դու ուզում էիր, որ գլխից դո՞ւրս սիրեմ։

Մամբրեն ուզեց հակաճառել, ապացուցել, որ սխալվում է, որ հարկավոր է սիրել ոչ թե ծրագրով, այլ զգացմունքով։ Բայց դա կարող էր գժտեցնել նրանց։ Ուստի և նա կուլ տվեց դժգոհությունը, մի պահ լռեց և ասաց.

— Դու ինձանից լավ գիտես իմ ծրագիրը, Նանար, էլ ինչո՞ւ ես հարցնում, կարծես առաջին անգամն ենք տեսնում իրար։ Քանի-քանի անգամ եմ դպրոց գնալ-գալիս ականջդ տարել ճանապարհին. «Այ, Նանար, ես որ մեծանամ՝ է՛ս կանեմ, է՛ն կանեմ»... Դու հո գիտե՞ս, թե ես ինչքան եմ սիրում մեր կորած-մոլորած Խուտուտ գյուղը։ Մամբրե Բլանցի նման ես չեմ մտածում, թե՝ «ո՛րտեղ հաց՝ էնտեղ կաց»։ Ես իմ գյուղի մասին եմ մտածում։ Վերջապես մեր գյուղն էլ պիտի զարգանա՞, թե ոչ։

— Մենք դաշտավարական գյուղ ենք,— հիշեցրեց աղջիկը։— Եթե Արփիար Գալոյանը լավ աշխատի՝ մեր գյուղն էլ կզարգանա։

— Խեղճ Արփիար Գալոյան,— տխուր ծիծաղեց Մամբրեն։— Բոլորը նրան դեմ, հիմի էլ դո՞ւ։ Չէ, Նանար, դու սխալ ես։ Տնտեսության նախագահն էլ մեղավոր չէ, մենք էլ մեղավոր չենք։ Ինչ որ գալիս է մեր ձեռքից՝ մենք անում ենք։ Կարելի է ասել, որ աշխատում ենք հերոսաբար։ Այո, հերոսաբար։ Իշխանություն էլ, իհարկե, մեզ օգնում է ամեն ինչով։ Բայց էլի Հայաստանը մեր չորս կողմում ծաղկում է, իսկ մենք էս չոլ ու քռա տեղում մնացել ենք հազար տարի առաջվա Խուտուտը։ Ինչո՞ւ։ Որովհետև մեր ունեցածը մի բան չէ։ Դու գոնե մի անգամ վար նայե՞լ ես էստեղից։ Դու ձեռքդ թափ մի՛ տա, այլ նայիր։ Մի՞տքդ է, երեխա ժամանակներս ես կանչում էի քեզ էստեղ, դու չէիր գալիս։ Երևի առաջին անգամն ես բարձրացել կյանքիդ մեջ։ Նայիր…

Նանարը դժկամությամբ վեր կենալու շարժում արեց։

— Վեր մի՛ կենա, այլ ետ դարձիր։ Նստածդ տեղից էլ է երևում։

Աղջիկը շուռ եկավ։ Քարե կլոր սկուտեղը, որի մեջ նստած էին նրանք, կորցրեց իր հաճելի ներփակությունը։ Սկուտեղի պռունկը կոտրված էր, երկու քարերի արանքից երևում էր ներքևի

տեսարանը: Այնուամենայնիվ, Նանարը բարձրացավ, չոքեց՝ նախապես ետ տանելով ծնկներից շրջազգեստը, որ չփչանա: Նրա կողքին չոքեց նաև Մամբրեն, և նրանք սկսեցին նայել:

Ամբողջ Խուտուտն այժմ նրանց աչքի առաջ էր: Գյուղի փողոցներում և փոքրիկ հրապարակում երևում էին արագ-արագ շարժվող մարդիկ: Եկեղեցին գյուղի կենտրոնում բարձրացել էր տափակ կտուրներից շատ վեր և նրա խաչը կարծես ձգվել էր՝ նկատելու քարերի մեջ թաքնված երիտասարդներին:

Ներքևում Խուտուտի տնակները գնում հասնում էին լանջի համարյա ամենացածը, որից այն կողմ արդեն, ձորի հատակին, ձգված էր ճահճի ոչ այնքան լայն մի շերտ: Ճահճից այն կողմ հոսում էր սակավաջուր Խուտուտ առվակը: Ջուրն այնտեղ վճիտ էր, ճահճի կողմում՝ բավական սառը, իսկ հակադիր կողմում, որտեղ խիճեր էին, խիստ տաք:

Հակադիր կողմում, որտեղ խիճեր էին, լայն ձգված էր հեղեղատը: Այն թողնում էր փառահեղ և տխուր տպավորություն: Գարնանն այդտեղով հոսել էր մեծ ջուրը՝ փրփրադեզ հեղեղով, իսկ այժմ չկար: Մեկ էլ աշնանը պիտի պոռթկար այն, երբ սարերում նորից սկսվեին անձրևները:

Ամբողջ հեղեղատը ծածկված էր ոտքերի տակ խշրտացող մանր ու խոշոր, մանավանդ խոշոր խճաքարերով՝ կլոր, ողորկ, չորացած կավի սպիտակավուն կճեպով պատած: Գարնանից ի վեր չէր եկել ոչ մի անձրև, որպեսզի լիզեր կավը դրանց վրայից:

Խճաքարերի լայն շերտը գնում և դեմ էր առնում դիմացի ափի զառիվայրին՝ պատի պես դիք: Զառիվայրը, մարդու հասակի քառապատիկ բարձրությամբ, համարյա ամբողջովին բաղկացած էր նույն խճաքարերից: Միայն դրա ամենաբարձրում նկատվում էր քարքարոտ շեկ հողի բարակ շերտը, որը և մշակում էին խուտուտցիք: Այդ շերտի պռունկից կախվել էին հացահատիկների ամենավերջին հասկերը՝ ամեն րոպե պոկվել-ընկնելու պատրաստ:

Հեղեղատի բարձր պատը դիք կանգնել էր գյուղի դիմաց՝ ինչպես անանցանելի պատվար: Բայց Խուտուտի բոլոր հողերը գտնվում էին դրա վրա: Ուստի և պատը մի քանի տեղով, իրարից հեռու, քանդված էր, այդ տեղերով անցնում էին դիք ճանապարհներ, որոնք տանում էին դեպի բարձրավանդակը: Դրա վրա փռված փոքրածավալ արտերի սահմանները ձախից և աջից կազմում էին ճիշտ այնպիսի քարքարոտ վայրեր, ինչպիսին փռված էր երիտասարդների շուրջը: Դիմացը արտերի տարածությունը սահմանափակում էր բլուրների մի երկար շարք: Ճիշտ է, այդ բլուրների վրա փռված էր էլի մի բարձրավանդակ, բայց դա արդեն պատկանում էր Խնկանոսին և ուրիշ գյուղերի:

— Ահա մեր ամբողջ ունեցածը,— ասաց Մամբրեն ընկճված ձայնով՝ ձեռքը մեկնելով դեպի փոքրածավալ դաշտերը:— Դրա համար էլ մեր գյուղը եղել է Խուտուտ և կմնա Խուտուտ...

Նանարը ոչինչ չասաց: Նա լուռ էր և մտածկոտ շարունակում էր նայել: Չոքած դիրքով, մի ձեռքը սկուտեղի քարե պռունկին հենած, իսկ մյուսը՝ իր կողքին չոքած Մամբրեի ուսին, նա չէր զգում, թե ինչպես խորդուբորդ քարը ցավեցնում էր նրա ծնկները: Կարկատանված ներբաններով կիսակոշիկներից մեկից դուրս էր պրծել նրա սիպ-սպիտակ թաթը, որն արևակեզ սրունքի սևության մոտ երևում էր ձյունափայլ: Թվում էր, թե դա սպիտակ թռչուն էր՝ իր անպաճույճ բնից մի պահ դուրս եկած:

— Ես Նոյի ագռավ չեմ,— շշնջաց Մամբրեն աղջկա կողքին,— ես կվերադառնամ Խուտուտ: Ուրիշ ծրագիր չունեմ: Ինչպես ամեն մարդ իր հայրենիքն է զարգացնում, էնպես էլ ես իմ ուժերը կնվիրեմ իմ գյուղին: Ո՞վ գիտե, գուցե թե մի օր ես ու դու նորից նստենք էստեղ…

«Նստենք» բառի վրա նա սթափվեց, աղջկան նստեցրեց իր տեղը, նստեց նաև ինքը և շարունակեց.

— Նորից նստենք էստեղ, բայց ոչ թե էսպես տափակ, գետնի վրա, այլ նստարանի, շրջապատված լինենք ծառ ու ծաղիկներով, նայենք ներքև՝ մեր նախկին փոքրիկ գյուղի մեծամեծ շենքերին, լայն փողոցներին, զբոսանքի այգիներին, գեղեցիկ հրապարակներին, կինո ու թատրոնին, գուցե թե տրամվայ ու տրոլեյբուսին, Խուտուտ գետի վրա գնացող-եկող նավակներին, ու ես ասեմ քեզ. «Մի՞տքդ է, Նանար, էն օրը...»:

Եվս մի պահ մտքի մեջ երազելուց հետո Մամբրեն ցնցեց գլուխը, ժպտաց, դիմեց աղջկան.

— Դու իմ պզուկներին մի՛ նայիր, Նանար, ես համարյա բանաստեղծ եմ:

— Գիտեմ, գիտեմ,— ակամայից ժպտաց նաև աղջիկը,— դու մի ժամանակ ոտանավորներ էիր գրում:

— Եվ շատ էլ վատ էի անում: Խուտուտը ոտանավորներով չի զարգանա: Խուտուտին, ինչպես Արքիմեդն է ասել, հիշո՞ւմ ես, հենարան է հարկավոր: Ճիշտ է, Նանար, մենք մեծ գետ չունենք, որ էլեկտրակայան կառուցենք, մեր տեղը տաք չէ, որ խաղող մշակենք, մրգի ծառեր տնկենք ու պահածոյի գործարան բաց անենք, բայց ո՞վ գիտե, թե ի՛նչ հանքեր կան թաքնված մեր գյուղի մոտերքում... Դու ի՞նչ գիտես, թե հենց էստեղ, մեր տակ, ի՞նչ կա գետնի խորքում: Պիոներ ժամանակս ես պատանի բնասեր էի, բայց գետնի երեսի քարերն էի հավաքում, ուղարկում Երևան: Եվ պատասխանը միշտ բացասական էր լինում: Իսկ գետնի տա՞կ...

— Էնտեղ էլ երևի էս քարերն են,— ենթադրեց աղջիկը:

— Չէ, Նանար, ամբողջ Հայաստանը հազար ու մի տեսակ հանքի վրա է նստած: Ես անպայման մի բան կգտնեմ մեր գյուղի մոտերքում…

Նա լռեց մի րոպե, ապա ասաց կամացուկ, հուզված ձայնով.

— Հիմի իմացա՞ր իմ ծրագիրը, Նանար: Դե ուրեմն ասա...

Նա թուքը կուլ տալու շարժում արեց և շարունակեց.

— Ասա, կսպասե՞ս ինձ՝ մինչև ավարտեմ, գամ: Խոսք տալի՞ս ես…

— Խոսք տալիս են՝ երբ սիրում են:

— Իսկ դու չե՞ս սիրում ինձ, Նանար... Բոլորովի՞ն…

Աղջիկը լռեց մի պահ՝ պատասխանի մեղմ ձև գտնելու համար, ապա ասաց.

— Ես դեռ ոչ ոքի չեմ սիրում:

— Ուրեմն չե՞ս սպասի…

— Սպասեմ թե չսպասեմ, ես դեռ մի հինգ տարի ամուսնանալու միտք չունեմ,— խուսափողական և խորամանկ պատասխանեց աղջիկը:— Կգնաս-կգաս՝ կտեսնես, որ ես դեռ իմ մոր տանն եմ:

— Ախր հինգ տարին քիչ ժամանակ չէ, Նանար…

— Ամեն ամառվա արձակուրդին կգաս գյուղ՝ կտեսնես:

— Հենց բանն էլ էն է, որ հազիվ թե գամ: Ասում են՝ երկրաբանական ինստիտուտն ամառներն իր ուսանողներին ուղարկում է զանազան կողմեր՝ թե՛ պրակտիկայի, թե՛ հանգստանալու: Էնպես որ, մենք բաժանվում ենք հինգ տարով…

Մամբրեն նրա հայացքի մեջ նկատեց ինչ-որ տխուր մեղմություն թե կարեկցություն: Դրանից քաջալերված, նա նորից, խնդրական և համառ, դիմեց աղջկան, և նրա ծնոտը ցնցվեց հուզմունքից.

— Սպասիր ինձ, Նանար... Խոսք տուր... Թե չէ, առանց խոսք տալու, մի օր էլ կվերցնես ու կամուսնանաս…

— Չէ, Մամբրե, մի՛ ստիպիր,— կտրուկ մերժեց աղջիկը:

— Մի՞թե դու իմ մանկության ընկեր Նանարն ես,— զարմացած նայեց Մամբրեն:— Դու միշտ բարի էիր, մեղմ, ինձ հետ էնքան սիրով: Բայց ի՞նչ է պատահել քեզ էսօր: Էնպես կոպիտ ես խոսում հետս, կարծես օտարներ լինենք…

— Բա ի՞նչ ես կարծում,— իր հերթին զարմացավ աղջիկը,— իմ կյանքի հարցն է լուծվում: Իսկ խոսք տալ չեմ կարող:

— Ուրեմն ես ճիշտ էի,— հառաչեց տղան,— ուրեմն դու իսկապես սիրում ես ուրիշին՝ իմ հակառակորդ Շեկ Մամբրեին:

— Ախր ասացի, որ ոչ ոքի չեմ սիրում:

— Էդ էր պակաս, որ սրտիդ գաղտնիքն ասեիր ինձ:

— Ինչո՞ւ չէ, կասեի հենց թեկուզ նրա համար, որ ձեռք քաշեիր ինձնից:

— Իսկ հիմի չե՞ս ուզում, որ ձեռք քաշեմ,— ուրախացավ տղան:

— Դա քո գործն է: Ես ոչ ոքի չեմ սիրում: Ես երկու Մամբրեներիդ էլ հավասար եմ նայում: Սո՞ւտ եմ ասում: Նկատած կա՞ս, որ մեր երեխա ժամանակվանից մինչև հիմի ես մի որևիցե խտրություն դնեմ ձեր մեջ: Իսկ դուք միշտ կռվել եք ինձ համար:

— Ոչ թե մենակ քեզ համար, Նանար: Նա ամեն բանի մեջ խանգարում է ինձ, մրցում է ինձ հետ: Իսկ ես ինչո՞վ եմ պակաս, որ զիջեմ նրան:

— Իսկ նրան որ հարցնես,— ընդհատեց Նանարը,— դու ինքդ ես նրա հետ մրցելով ապրում, նրան խանգարում: Ի՞նչ եք ուզում իրարից՝ չեմ հասկանում: Մի՞տքդ է, դեռ երեխա ժամանակ գյուղի բոլոր երեխաներին էլ որ հաղթեիք կռվի մեջ՝ դա ոչինչ, ձեզ հարկավոր էր, որ անպայման իրար հաղթեիք: Ի՞նչ է, Խուտուտը նե՞ղ էր ձեր երկուսիդ համար:

— Ես ի՞նչ մեղավոր եմ,— սրտնեղեց Մամբրեն:— Մեր ծնողներն են մեզ փոքր ժամանակ լարել իրար դեմ՝ երկու շնիկների պես, միշտ երեսով են տվել իրար, օրինակ են բերել, մեկիս նախատել են՝ մյուսիս հետ համեմատելով... Դրա համար էլ մրցումը մտել է մեր արյան մեջ ու դուրս չի գալիս:

— Գիտեմ, գիտեմ: Բայց գոնե երկուսովդ էլ չսիրահարվեիք մի աղջկա վրա:

— Ի՞նչ երկուսով,— քմծիծաղեց տղան:— Քո ասելով Մամբրեն է՞լ է սիրահարված քո վրա: Չհավատաս: Նա դիտմամբ է անում, որ մեր գյուղի ամենալավ աղջիկն ինձ չհասնի:

— Մեր գյուղի...— տխուր կրկնեց Նանարը։— Մե՞ծ բան է, եթե ես մեր գյուղի ամենալավ աղջիկն եմ։ Աշխարհը հո մեր գյուղով չի՞ վերջանում։

— Ինձ համար վերջանում է, Նանար,— սիրով ու հառաչանքով արտասանեց Մամբրեն։— Շատ էլ որ Բաղդադում խուրմա շատ կա, ի՞նձ ինչ։ Բայց թեկուզև ձեռքս ընկնի, ուրեմն մենք թողնենք մեր գյուղի աղջիկներին, գնանք ուրիշների՞ն առնենք։

— Դու իմ մասին մի՛ մտածի,— խիստ վիրավորված, բարկացավ աղջիկը,— ինձ առնող կճարվի։

— Նանար ջան, դու ինձ սխալ հասկացար, ազնիվ խոսք,— անհանգստացավ տղան։— Ես ոչ քեզ եմ ուզում բարեգործություն անել, ոչ Խուտուտին։ Երկուսիդ էլ սիրում եմ անկեղծ սիրով։ Ես իմ սիրու համար եմ ուզում մեր գյուղը զարգացնել, իմ սիրու համար եմ ուզում քեզ առնել։ Էնպես որ, ասա…

— Գնա արի՝ կտեսնենք,— սառը և դատողաբար նորից պատասխանեց աղջիկը։

Երիտասարդի բարակ շրթունքները սեղմվեցին վիրավորանքից, դարձան ավելի բարակ։

— Վերջին ասելի՞քդ է, Նանար։

— Իհարկե։

— Ուրեմն դու ինձ չես սիրում...— հայտնագործեց տղան՝ կարծես մինչ այդ աղջիկը մի քանի անգամ ինքը չէր ասել այդ մասին։ Եվ քմծիծաղով ավելացրեց.

— Երևի պզուկնե՞րս են խանգարում։

— Առանց պզուկների, իհարկե, ավելի լավ է,— համաձայնեց աղջիկը։

— Եվ բացի դրանից,— ավելի և ավելի բորբոքվելով, շարունակեց տղան,— երևում է, որ քեզ գյուղացի տղա հարկավոր չէ։ Դու կա՛մ քաղաքից ես մարդ առնելու, կա՛մ թե չէ, եթե գյուղից էլ առնես, ուրեմն Բլանցի պես մարդու, որ քեզ տանի ավելի լավ մի տեղ։

— Ի՞նչ կա որ,— ասաց աղջիկը սիրտ հոշոտող զարմանաքով,— ես հո ամբողջ կյանքս էս փոքրիկ գյուղում չե՞մ անցկացնելու։ Կա՛մ գյուղը կմեծանա՝ ինչպես դու ես ուզում, կդառնա մարդավարի ապրելու տեղ, կա՛մ ես ինքս կթողնեմ, կգնամ մի ավելի լավ կյանքի։

— Դե ուրեմն էդպես ասա,— բացականչեց տղան,— ասա, որ դու էլ միայն քո մասին ես մտածում, ուզում ես, որ հա՛մ ամուսինդ գեղեցիկ ու խելոք լինի, հա՛մ ապրածդ տեղը փառավոր։

— Ի՞նչ կա որ,— նորից զարմացավ աղջիկը։— Իհարկե։

— Չէ,— ասաց տղան՝ հողն արմունկից թափ տալով,— երևում է, որ իմ ու քո ջուրը մի առվով չի գնալու։ Ես տգեղ, պզուկոտ տղա եմ, ինքս էլ՝ կորած-մոլորած Խուտուտ գյուղից։ Էլ ինչո՞ւ ես սար ու քար գցում։ Ասա, որ մերժում ես։

— Ոչ մերժում եմ, ոչ խոսք եմ տալիս։ Գնա արի՝ կտեսնենք։

— Ի՞նչ տեսնենք, Նանար։ Որ գնամ գամ՝ ուրի՞շ մարդ եմ դառնալու, ի՞նչ է։

— Որ ուզենաս՝ կդառնաս։ Մենակ պզուկներդ կմնան, էն էլ ոչինչ։ Բայց էն էլ, ասում են՝ զանազան դեղերով վերացնում են։ Իսկ իմ մասին դու վատ բան մի՛ մտածի, Մամբրե, ամոթ է, մի գյուղի երեխաներ ենք, հին ընկերներ ենք։ Ես ո՛չ գյուղից եմ փախչում, ո՛չ դժվար աշխատանքից։ Բայց ես

իրավունք չունե՞մ մտածելու իմ ապագայի մասին: Մեր Խուտուտը, իսկապես որ, ուղտի պոչի պես է, ո՛չ երկարում է, ո՛չ կարճանում: Եթե մի քանի տարի էլ էսպես գնա՝ դու կարծում ես մենակ ե՞ս կհեռանամ գյուղից: Մարդ չի մնա Խուտուտում: Եվ ոչ ոք էլ իրավունք չի ունենա մեզ մեղադրելու…

Աղջկա ձայնը դառնում էր հետզհետե ավելի և ավելի հաշտ: Մի պահ խոսքն ընդհատելուց հետո նա շարունակեց.

— Հիմի գանք ամուսնությանը: Ես ինչո՞ւ պիտի մի անբան-անգործի մեկին առնեմ, որ գոհանա Խուտուտի ապրուստով, իսկ անուն էլ դնեմ, թե սիրեցի, դրա համար էլ առա: Ի՞նչ եմ անում էդ տեսակ ամուսինը: Ես ինքս իմ գլուխը կպահեմ, դեռ մորս ու պապիս էլ ինձ հետ: Գիտեմ, գիտեմ ինչ պիտի ասես, դու անբան, անգործ չես, դու ինստիտուտ ես գնում: Իսկ ո՞վ չի գնում: Քո ընկեր Մամբրե՞ն չի գնում, հորեղբորդ տղա՞ն չի գնում, մեր հարևանի երկու տղանե՞րը չգնացին: Ու բոլորդ էլ կարծես խոսքը մեկ եք արել, գնալուց առաջ ինձ քարշ եք տալիս բարձրացնում էս քարափի գլուխը, սեր եք բացատրվում: Դու կարծում ես, թե մենակ դո՞ւ ես: Շուտով ես էս քարափի մասնագետ կդառնամ կամ թե տուրիստի շքանշան կստանամ, էնքան բարձրացել-իջել եմ հուլիսից էս կողմ: Դուք շատ եք, իսկ ես՝ մի աղջիկ: Որի՞դ սիրեմ: Ուզեմ թե չուզեմ՝ պիտի ընտրեմ: Դե ես էլ ընտրում եմ: Իսկ հարցնո՞ւմ ես, թե ինչպես եմ ընտրում: Գլխով որ ընտրեմ՝ բոլորդ էլ լավ տղաներ եք, բոլորիդ էլ կառնեմ: Բայց ես սրտով եմ ընտրում: Ջոկել-ջոկջկել եմ, բոլորին «չէ» եմ ասել, մնացել եք երկու Մամբրեներդ: Ձեզ չեմ մերժել ու չեմ էլ մերժի: Ձեզնից մեկնումեկին ես անպայման կառնեմ, հասկացա՞ր: Գնացեք սովորեք եկեք՝ կտեսնենք: Քեզ բարի ճանապարհ: Դե վեր կաց:

— Ուրեմն Շեկ Մամբրեն է՞լ է քեզ սեր հայտնել,— բոլորին մոռանալով և միայն իր հավիտենական ախոյանի մասին մտածելով, հարցրեց երիտասարդը.

— Քո ի՞նչ գործն է: Ինչ որ ասելու էր՝ ասացի, իսկ ինչ որ չի կարելի՝ չի կարելի:

Աղջիկը վեր կացավ կանգնեց, նայեց գյուղին: Այնտեղ փողոցներում հիմա դարձյալ ոչ ոք չկար, բոլորը գտնվում էին գյուղից այն կողմ՝ դաշտերում, որտեղ, ինչպես պառկեցրած էկրանի վրա, այժմ երևում էին մի կոմբայն, մի բեռնատար մեքենա, այս ու այն կողմ շարժվող մարդիկ՝ մրջյունների պես մանր և նրանց պես էլ գորշ:

Վեր կացավ կանգնեց նաև տղան: Հեռանալու պատրաստված մարդու տխուր և գուրգուրալի հայացքով նա նայեց ոտքերի տակ ձգված ձորակին, որի այս լանջի վրա գտնվում էր նրա հայրենի Խուտուտ գյուղը: Ձորակի վերին ծայրը, մոտավորապես կես կիլոմետր այն կողմ, կտրուկ նեղանում էր՝ նմանվելով արհեստական ջրանցքի: Այժմ այն համարյա ցամաք էր, միայն հատակի վրա էր փայլում նվազ ջուրը:

Ձորակի ներքևի ծայրը չէր նեղանում, այլ մոտավորապես մի կիլոմետր հեռավորության վրա պատնեշված էր հողե բարձր լիցքով, որի վրայով անցնում էր լայն ճանապարհ: Լիցքը գյուղի և դիմացի բարձրավանդակները միացել էր իրար, բայց գյուղը կտրել անջատել էր ձորի շարունակությունը կազմող ընդարձակ և ծաղկուն հովտից, որը, ի դեպ ասած, նույնպես պատկանում էր ոչ Խուտուտին:

Խուտուտ առվակը, հասնելով լիցքին, մտնում էր բետոնե մի մեծ կամարի տակ և անցնում այն կողմ: Ծիծաղելի էր տեսնել, թե ինչպես այդ նվազ առվակն ամենայն լրջությամբ անցնում էր փառահեղ, համարյա հաղթական կամարի տակով: Բայց կամարն այդքան լայն ու բարձր կառուցված էր ոչ թե սովորական Խուտուտի, այլ գարնանային ու աշնանային հեղեղների համար:

— Մնաք բարով, հայրենի վայրեր,— բացականչեց Մամբրեն,— ես բաժանվում եմ ձեզանից, բայց նորից կվերադառնամ ձեզ մոտ…

— Դու ո՞ր կողմով ես դուրս գալու դեպի ճանապարհը,— հարցրեց Նանարը առօրյա և գործնական տոնով:

Մամբրեի վրա կարծես սառը ջուր շրմփացրին: Նրա ոգեշնչված տրամադրությունն իսկույն չքացավ: Նա հանդիմանությամբ նայեց աղջկան: Բայց հարկավոր չէր խռովել նրա հետ հրաժեշտի պահին: Նա ասաց.

— Ինձ հարկավոր է հասնել բենզինի կետին: Ավտոբուսներն էնտեղ կանգ են առնում:

— Մնաս բարով ասել ե՞ս ձերոնց,— հոգատարությամբ հետաքրքրվեց աղջիկը:

— Այո:

— Ուրեմն էլ չես իջնելու գյուղ,— չգիտես ինչու, հանգստացավ Նանարը:

— Ինչո՞ւ իջնեմ: Բենզինի կետի ճանապարհն էս կողմով է:

— Դե, գնաս բարով:

— Մնաս բարով…— Մամբրեն դանդաղում էր գնալ: Վերջապես նա ասաց՝ չափազանց հուզվելով.

— Նանար... Չե՞ս թողնի մի հատ համբուրեմ քեզ…

— Ի՞նչ ես անում համբույրը, երբ որ մեջը սեր չկա: Երեխա ժամանակս դու էլ, Մամբրեն էլ շատ եք համբուրել ինձ, հերիք է: Երեխա էի, չէի հասկանում, թույլ էի տալիս:

— Դու որ երեխա էիր, բա մե՞նք ի՛նչ էինք,— տխուր ժպտաց տղան: Մի վերջին հայացքով աղջկան նայելուց հետո նա պինդ թափ տվեց նրա ձեռքը, վերցրեց բաճկոնն ու պայուսակը և անցնելով քարից քար, հեռացավ:

2

Բարձրավանդակի պռունկին կանգնած, Նանարը նայում էր հեռացող Մամբրեի ետևից: Հազիվ մի քանի քայլ արած, երիտասարդը ձուլվեց քարերի գորշության հետ և այժմ հարկավոր էր լարել տեսողությունը՝ նրան աչքից չփախցնելու համար: Բայց երբեմն քարերն իրոք ծածկում էին նրան:

Մամբրեն գնում էր մեծ զիգզագներով՝ փնտրելով անցնելու հարմար տեղեր: Բայց որքան էլ մեծ էին զիգզագները, այնուամենայնիվ նրա բռնած ուղղությունը որոշ էր, նա գնում էր շեղակի՝ հետզհետե հեռանալով ձորակից: Նրա դիմաց, ինչ-որ տեղում, գտնվում էր ճանապարհը, ճանապարհի եզրին՝ բենզինի կետը: Սպասելով անցնող ավտոբուսի, նա պիտի նստեր, ետ գար, անցներ երկու բարձրավանդակներն իրար կապող լիցքի վրայով, անցներ Խնկանոս գյուղով և դուրս գար դեպի մայրաքաղաք տանող մեծ ճանապարհը:

Միայն մի անգամ ետ նայեց Մամբրեն: Նանարը որոշակի նկատեց նրա լայն դեմքը: Ըստ երևույթին երիտասարդը նույնպես տեսավ աղջկան, որովհետև անմիջապես նորից շուռ չեկավ և չշարունակեց ճանապարհը, այլ մի երկու րոպե մնաց այդպես կանգնած: Երևի նա տարակուսում

էր, թե ինչու համար Նանարը, նրան չսիրող Նանարը, իսկույն չի վերադարձել գյուղ, այլ կանգնել և նայում է նրա ետևից: Նա գուցե մտածեց, թե աղջիկը զղջացել է նրան չսիրելու համար կամ հանկարծակի սեր է զգացել իր մեջ: Նա գուցե մի պահ որոշեց՝ ետ վազել, մոտենալ, փաթաթվել աղջկան: Բայց երկու րոպե այդպես կանգնած մնալուց հետո, այնուամենայնիվ, շուռ եկավ և շարունակեց ճանապարհը:

Տղայի կերպարանքը վաղուց էր անհետացել քարերի մեջ, հեռվում, բայց աղջիկը դեռ կանգնել էր և նայում էր նրա ետևից՝ կարծես ապահովվելու համար, որ իրոք, նա այլևս մոտակայքում չէ և չի վերադառնալու: Ապա շուռ եկավ դեպի ձորակը, բայց դարձյալ շարունակեց մնալ կանգնած: Չնայած նրան, որ նա շուտ-շուտ նայում էր երկնքին՝ ժամանակը որոշելու համար, բայց և այնպես չէր շտապում գնալ: Նա կանգնել էր և այլևս մոռանալով, որ դատարկված գյուղից որևէ մեկն այնուամենայնիվ կարող էր նկատել իրեն, անհամբեր նայում էր ներքև՝ աջ ու ձախ, կարծես ինչ-որ բան էր որոնում այնտեղ:

Նանարի դեմքը, որ հետզհետե պաշարվում էր թախիծով, հանկարծ պայծառացավ ուրախությունից և նա բղավեց դեպի ներքև.

— Մամբրե՛…

Առանց նայելու իր ոտքերի տակ, դիպչելով քարերի, նա սկսեց վազել քարափի եզրով:

— Էս կողմով, Մամբրե ջան, էս կողմով, բարձրանալու տեղն էս է…

Կռանալով դեպի նա, աղջիկն իր զույգ ձեռքերը պարզեց ներքև.

— Բռնիր, ես քեզ վեր քաշեմ…

Առանց աղջկա վրա ուշադրություն դարձնելու, Մամբրեն, որին բաց շագանակագույն մազերի համար անվանում էին Շեկ Մամբրե՝ Սև Մամբրեից զանազանելու համար, հեշտությամբ մագլցեց ժայռերն ի վեր և բարկացած կանգ առավ աղջկան դեմ առ դեմ, համարյա ընդհուպ:

— Սա ի՞նչ կինոնկար ես սարքել, Նանար, ինչո՞ւ ես կանչել ինձ էստեղ:

Առանց պատասխանելու, աղջիկը սիրով ու հիացմունքով նայում էր երիտասարդի աչքերի, ուղղակի բիբերի մեջ: Մամբրեն, ոչ այնքան նիհար, որքան որ սուր դիմագծերով, ոսկրոտ քթով, շեշտակի գծագրված շրթունքներով, ծնոտներով ու կզակով, սպասողական ու բարկացած նայում էր Նանարին:

— Մի՛ բարկանա, Մամբրե ջան, ուզում էի սրտով մնաս բարով ասեի քեզ:

Եվ աղջիկը բուռն շարժումով բռնեց նրա ձեռքը:

Մամբրեն բավական կոպիտ ազատեց իր ձեռքը և ցույց տվեց դեպի ներքև.

— Էնտեղ չէ՞իր կարող:

— Չէ, Մամբրե ջան, ինչքան չլինի՝ գյուղ տեղ ենք…

— Իսկ դու վախենո՞ւմ ես բամբասանքից:

— Ես ոչ մի բանից չեմ վախենում, Մամբրե ջան: Այ, օրը կգա՝ կտեսնես: Իմ ուզածն էն էր, որ մեր մնաս բարովը ոչ ոք չտեսներ: Իսկ վարն ամեն տեղ՝ պառավ ու երեխա, նրանք էլ հո չե՞ն գնացել դաշտ: Իսկ դու գիտե՞ս պառավների բամբասանքն ու երեխաների բացբերանությունը:

— Ուրեմն վախենում ես,— քմծիծաղեց Մամբրեն:

— Չէի վախենա, Մամբրե ջան, եթե մեջտեղը սեր լիներ: Իսկ ինչո՞ւ բամբասեն, երբ որ դու ինձ չես սիրում: Ինչո՞ւ տեսնեն, միգուցե ես լաց եմ լինում…

— Ի՞նչ լաց,— բարկացավ երիտասարդը:

— Դե ես դա հենց էնպես եմ ասում,— բռնազբոսիկ ծիծաղեց աղջիկը՝ նորից բռնելով նրա ձեռքը:

Երիտասարդն այս անգամ ձեռքը չքաշեց:

— Դե ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ասում,— շտապեցրեց նա:

— Նստենք, Մամբրե ջան…

— Կանգնած էլ լավ է,— մերժեց երիտասարդը՝ նորից ազատելով իր ձեռքը:

— Ինչո՞ւ ես էդպես վարվում, անխիղճ,— հառաչեց աղջիկը,— չէ՞ որ մանկության ընկերներ ենք…

— Ի՞նչ եմ անում որ,— բռնվեց Մամբրեն:

— Ծեծո՞ւմ եմ թե հայհոյում:

Աղջիկը լուռ նայեց նրա երեսին և թվաց, թե իրոք, հիմա լաց կլինի: Օրորելով գլուխը, նա ասաց.

— Էհ, Մամբրե... Կա՛մ չես հասկանում, կա՛մ չհասկանալու ես դնում քեզ...

Պառուզա տալով և պատասխանի չսպասելով, նա հարցրեց.

— Գնո՞ւմ ես:

— Այո:

— Ե՞րբ:

— Հիմա: Հենց որ խոսքդ ասես-պրծնես:

— Օյ, հիմա...— հառաչեց աղջիկը:— Իսկ ես կարծում էի, թե էգուց, մյուս օրը... Բա իրերդ որտե՞ղ են, Մամբրե ջան:

— Մեծ եղբայրս երեկ տարավ Երևան: Դե, Նանար, թե բան ունես ասելու՝ ասա, թե չէ՝ քեզ մնաս բարով:

— Վայ, չէ, Մամբրե ջան, մի՛ գնա,— վախեցավ աղջիկը:— Շատ բան ունեմ ասելու և կասեմ: Բայց եկար՝ լեզուս կապվեց: Գոնե նստիր, անգութ, հո չե՞մ ուտի քեզ: Կանգնած էլ խոսե՞լ կլինի լուրջ բանի մասին:

Մամբրեն, աչքերով փնտրելով մի հարմար քար, դժգոհ նստեց: Նանարը նստեց մի ուրիշ քարի վրա՝ նրա դիմաց:

— Տեղդ հարմա՞ր է, Մամբրե ջան: Եթե հարմար չէ՝ եկ իմ տեղը:

— Հարմար է, հարմար, մի՛ անհանգստանա:

— Ի՞նչն է հարմար,— հանդիմանեց աղջիկը:— Արևն ընկել է ուղիղ աչքերիդ մեջ: Շուռ եկ մի քիչ, իսկ ես ուրիշ տեղ կնստեմ, որ նայեմ քեզ:

— Այ Նանար,— զսպված բարկությամբ ասաց երիտասարդը,— դու էնպիսի պատրաստություն ես տեսնում, կարծես մինչև իրիկուն ճառ պիտի կարդաս: Խոսքդ ասա՝ վեր կենանք գնանք: Ես էլ եմ շտապ, դու էլ: Մեկը հարցնի, թե ինչո՞ւ ես թողել փախել աշխատանքից:

— Չեմ փախել, այլ թույլտվություն ունեմ բրիգադիրից՝ երկու ժամով:

— Տեսնես ինչ սուտ ես փչել,— ծիծաղեց երիտասարդը:

— Ոչ մի սուտ,— վիրավորվեց աղջիկը:— Բրիգադիրն իմ ընկերուհին է, ես նրան ուղղակի ասել եմ, որ գնում եմ Մամբրեին մնաս բարով ասելու: Բայց թե ո՞ր Մամբրեին՝ դա իքս եմ թողել: Թող մի քիչ տանջվի:

— Դու գիտե՞ս, Սև Մամբրեն էլ է էսօր առավոտ գնում,— հայտնեց երիտասարդը:

— Իսկապե՞ս,— զարմացավ Նանարը:— Իսկ նա ո՞ւր է գնում:

— Չգիտե՞ս: Ուր որ ես՝ էնտեղ էլ նա:

— Ուրեմն դու է՞լ ես երկրաբանական ինստիտուտ գնում...— սառեց աղջիկը:

— Ոչ թե ես էլ, այլ առաջինը՝ ես, իսկ երկրորդը՝ նա:

— Լավ, Մամբրե ջան,— ժպիտով մեղմելով իր հանդիմանությունը, ասաց Նանարը,— դուք ինչո՞ւ եք ուզում ծաղրատեղ դառնաք գյուղում: Մի գյուղից երեք երկրաբան, երեքն էլ՝ Մամբրե…

— Ուզում է՝ թող քսաներեքը լինի, ի՞նձ ինչ: Ես դրա համար չգնա՞մ իմ սիրած ինստիտուտը: Եվ ո՞վ պիտի ծիծաղի: Կավարտենք, ո՞վ գիտե որ մեկս որտեղ աշխատի՝ հարավ ու հյուսիս: Բայց հենց թեկուզ երկուսս էլ գնանք Ուրալ, Բլանցի հետ միասին դառնանք երեք Մամբրե: Ի՞նչ կա որ: Քի՞չ Նանար կա հենց մեր փոքրիկ գյուղում: Չորսին մենակ ես գիտեմ: Դեռ մեծ եղբորս կինն էլ որոշել է, որ եթե աղջիկ բերի՝ անունը դնի Նանար՝ քո անունով:

— Ինչո՞ւ իմ անունով,— զարմացավ աղջիկը:

— Չէ՞ որ քեզ գյուղի ամենասիրուն աղջիկն են հաշվում: Դե, նա էլ ուզում է, որ իր աղջիկը քեզ նմանվի:

Նանարը բավականությամբ ժպտաց:

— Իսկ ինձ որ հարցնեն, դու բոլորովին էլ սիրուն չես, Նանար,— ասաց Մամբրեն՝ չգիտես ինչու հառաչելով:

Աղջկան կարծես խփեցին ճիպոտով: Նա ապշած ու վշտահար նայեց տղային:

— Այսինքն,— նրա հայացքից խղճահարված, իսկույն ավելացրեց տղան,— դու, իհարկե, մեր գյուղի ամենասիրուն աղջիկն ես: Բայց մի՞թե դա սիրունություն է, որ դու ունես: Իհարկե, քո քիթ ու բերանդ էլ են լավը, աչքերդ էլ և այլն, ոտքից գլուխ: Բայց օգո՞ւտն ինչ, քանի որ կուլտուրա չունես: Դու ինձանից մի՛ նեղանա, Նանար, այլ լսիր: Այ, էս րոպեիս մի հայելի լիներ, մեջը նայեիր քեզ: Բա դա աղջկա նստվա՞ծք է, որ դու ես նստել:

Նանարը վախեցած փոխեց իր դիրքը:

— Չէ,— հառաչեց տղան,— ավելի վատ նստեցիր: Լավ նստելու, լավ շարժուձև ունենալու համար կուլտուրա է հարկավոր: Դա էնքան էլ հեշտ չի: Վերցնենք քու քայլերդ: Մարդու նայելը չի գալիս, որ նայի…

Նանարը, կծկված, խեղճացած, նրան տգեղացնող բութ հայացքով, լսում էր ընկերոջը:

— Ես հո չե՞մ ասում, թե զոռով քեզ կոտրատես կամ հնարքներ թափես, որ սիրուն երևաս: Ես ուզում եմ, որ քո բնական սիրունությունն ինքն իրեն երևա:

Մամբրեին թվաց, թե աղջիկը լաց էր լինում: Ու թեև իսկույն էլ տեսավ, որ նրա աչքերը չոր էին, բայց նկատեց, թե ինչպես վիշտը քարացրել էր նրա դեմքը:

— Դու չկարծես, Նանար, թե ես էս բոլորը մենակ քեզ եմ ասում,— շտապեց բացատրել նա։— Իսկ ե՞ս ով եմ, ե՞ս ինչ եմ: Ամեն անգամ Երևան գնալիս ման եմ գալիս փողոցներով, ախ եմ քաշում էնտեղի սիրուն-սիրուն աղջիկների ետևից, բայց չգիտեմ, թե, օրինակի համար, ո՛ւր չքեմ ձեռքերս՝ թա՞փ տամ, գրպաննե՞րս դնեմ, պարոնի պես վեր-վե՞ր թռցնեմ, թե ինչ անեմ: Կամ վերցնենք դեմքս: Ես քաղաքում ման գալիս մեկ՝ շշմած դեմք եմ առնում, մեկ էլ, չգիտես ինչու, քիթս եմ կախում, մեկ էլ գժի պես ինքս ինձ համար ծիծաղում եմ, իբր թե ինչպես մի ոտանավորի մեջ է գրված, «նոր կյանքի խընդությունն է իմ ջահել դեմքի վրա»: Ինձ պահել չգիտեմ, կուլտուրաս պակաս է: Բացի դրանից, հենց որ նայում եմ մաշված կոշիկներիս, էժան շալվարիս, կնկա կոֆտայի կտորից կարված շապիկիս ու պապիս տարվա ձևի կեպկայիս, կանգ եմ առնում ու մի լավ հայհոյում, բայց թե ո՞ւմն եմ հայհոյում՝ հայտնի չէ: Բա էս կյա՞նք է, որ մենք ենք ապրում: Ի՞նչ է, ես տղա չե՞մ, չե՞մ ուզում լավ հագնվել, սիրուն երևալ: Բայց գործը մենակ հագնվելը չէ, հագուստը պահել պիտի իմանաս: Այ, վերցնենք հիմա: Ես նստեցի քարի վրա մի հինգ րոպե հետո հազիվ հիշեցի, որ շալվարս մի քիչ վերև պիտի քաշեի, որ ծնկներս փուչիկ չտան: Իսկ ինչո՞ւ էնպես չլինի, որ ամեն անգամ էդ մասին ես ինքս չհիշեմ, այլ դա ինքնիրան հիշվի: Դրա համար հարկավոր է, որ կուլտուրան էնքան խոր մտնի մարդու մեջ, որ դառնա հոգու պես մի բան... Չէ, Նանար, առանց կուլտուրայի սիրունություն չկա, չհավատաս: Սիրունությունն առանց կուլտուրայի, ոնց որ, ինչպե՞ս ասեմ, ոնց որ չտաշած տուֆ…

— Մամբրե ջան,— տխուր ժպտաց աղջիկը,— քո խելք ու միտքդ սիրունության վրա է ու քո վրա։ Երևում է, որ դու էգոիստ ես…

— Այ, տեսնո՞ւմ ես, Նանար: Դու ասում ես՝ էգոիստ, իսկ ես վայ թե առաջին անգամն եմ լսում էդ բառը: Բայց ինչքան որ հասկացա, այո, ճիշտ է, ես էգոիստ եմ: Ես իմ մասին էլ եմ էգոիստ, քո մասին էլ, ամբողջ Հայաստանի ու Խորհրդային Միության մասին էլ: Եթե հաստատ իմանալ՝ ես ամբողջ աշխարհի մասին եմ էգոիստ: Հենց դրա համար էլ գնում եմ սովորելու: Երկրաբանություն չլիներ՝ ֆիզիկա պիտի սովորեի, ֆիզիկա չլիներ՝ քիմիա, մենակ թե պետքական մարդ դուրս գամ, հա՛մ

աշխարհին մի օգուտ տամ, հա՛մ ինձ: Կավարտեմ, կգամ Հայաստան՝ աշխատելու: Հայաստան չեկա՝ կգնամ ընկեր Բլանցի մոտ, կգնամ Հնդկաստան, Վիետնամ…

Ավարտելով իր ոգևորված խոսքը, նա մեղմ նայեց աղջկան:

— Նանար ջան... Ես մենակ մի բան եմ խնդրում քեզանից՝ գնալուցս առաջ: Դու էլ մի՛ մնա էսօրվա աստիճանիդ վրա, կուլտուրադ շատացրու: Գնա համալսարան, թեկուզ որոշ կուրսեր, դարձիր, օրինակ, կոմբայնավար…

Այժմ ինքը բռնելով աղջկա ձեռքը, շարունակեց.

— Ես դա նրա համար եմ ասում, որ սիրտս ցավում է քեզ համար: Չէ՞ որ երեխա ժամանակվանից ընկերներ ենք: Լավ կլինի՞, որ մենք ավարտենք գանք, իսկ դու մնաս էլի էս Խուտուտի գեղացի աղջիկը... Այ, փող ես հավաքել, կտոր ես առել, բայց կարել-փչացրել ես: Գուցե չես էլ փչացրել, բայց էդ ֆասոնի հագուստը քեզ կսազի՞, Նանար: Ճաշակ ձեռք բեր: Դու ինչո՞վ ես պակաս Երևանի աղջիկներից: Բայց նրանց տեսնելիս խելքս գնում է, իսկ քեզ տեսնելիս էլի գալիս է տեղը: Դու կարծում ես չգիտե՞մ, թե ինչու ես ինձ կանչել էս քոի գլուխը: Գիտեմ: Դու ինձ վրա սիրահարված ես ու ուզում ես գնալուցդ առաջ խոստում առնես ինձնից: Տեսնո՞ւմ ես, ամաչեցիր: Չէ, Նանար, դու ինձ հասկացիր ու մի՛ նեղանա, ես ինչպե՞ս կարող եմ Երևանի աղջիկներին տեսնելուց հետո քեզ սիրել: Հիմի էլ Մոսկվա եմ գնում: Դու գիտե՞ս, որ Մոսկվայի աղջիկներն աշխարհի մեջ առաջին տեղն են բռնել... Լավ որ մտածես, Նանար, դու ինքդ էլ չես կարող ինձ իսկապես սիրել՝ քանի դեռ ես էս Մամբրեն եմ: Ի՞նչ է, դու ինքդ աչքեր չունե՞ս, Երևան գնացած չկա՞ս: Վայ թե դու էլ քիչ ախ չես քաշել էնտեղի տղաների ետևից…

Նանարը լուռ, գլուխը կախ, լսում էր ընկերոջը: Նրա ձեռքը Մամբրեի ձեռքի մեջ ուներ հուսաբեկ և անկենդան տեսք:

— Ի միջի այլոց,— ժպտաց հանկարծ Մամբրեն,— անցած անգամ մի աղջիկ տեսա Երևանում՝ իմ բոլոր տեսածներից լավ: Քիչ մնաց, որ սիրահարվեի վրան, մեկ էլ մտածեցի թե այ տղա, էս ի՞նչ եմ անում, ախր ես սովորելու պիտի գնամ: Որոշեցի մի անգամ էլ նայեմ երեսին ու հեռանամ: Նայեցի՝ ո՞վ լինի, որ լավ լինի: Մեր խուտուտցի աղջիկ, ձեզ էլ բարեկամ է գալիս: Մի ականջի վրա՝ խալ, անունը մոռացել եմ: Գյուղում ո՞վ էր ուշք դարձնում վրան: Տեսնո՞ւմ ես ի՛նչ է անում կուլտուրան...

Նանարը ոչինչ չասաց:

— Էնպես որ,— եզրափակեց տղան,— եկ խոսք բաց չանենք սիրո մասին: Ոչ ես եմ քեզ պետք՝ էս վիճակով, ոչ էլ դու՝ ինձ: Եկ նախ էնպես անենք, որ դու արժանի դառնաս ինձ, ես էլ քեզ: Հետո կտեսնենք:

— Որ ուզենաս, Մամբրե ջան, մենք էսպես անկուլտուրական-անկուլտուրական կսիրենք իրար ու կամաց-կամաց իրար հետ կզարգանանք...— հառաչեց աղջիկը:

— Բա մենք չե՞նք սիրում իրար,— հանդիմանությամբ ժպտաց Մամբրեն:— Որ չսիրեի քեզ, կկարդայի՞ գլխիդ էս քարոզը: Մենակ թե՝ դա ուրիշ սեր է, քո ասածը չէ: Եկ քո ասածը թողնենք հետո: Կավարտենք կգանք՝ շատ բան կպարզվի…

— Էդ ինչո՞ւ դարձար հոգնակի,— կասկածով հարցրեց աղջիկը:

— Որովհետև Սև Մամբրեի մասին էլ եմ ասում: Այ, նա է քեզ վրա սիրահարված, Նանար: Դու դա գիտե՞ս:

— Գիտեմ,— խոստովանեց աղջիկը,— գլխի եմ ընկնում:

— Ո՞վ իմանա, գուցե նրան կառնես:

— Կարող է և էդպես լինի, նա ոչ մեկիցդ պակաս տղա չէ,— համաձայնեց աղջիկը՝ տղային մի փոքր խոցելու համար: Նա հասավ իր նպատակին: Մամբրեն թողեց նրա ձեռքը և փնչաց դժգոհ.

— Ուրեմն դու նրան հավանո՞ւմ ես, Նանար: Բա որ ասում եմ՝ ճաշակ չունե՞ս: Չկարծես, թե ես նրան սևացնելու համար եմ ասում: Նա էլ մանկության ընկեր է, քանի տարի երեքով ենք դպրոց գնացել-եկել: Բայց Մամբրեն գյուղացի է՝ բառիս իսկական իմաստով, այսինքն՝ հին գյուղացի: Խուտուտը տեսած՝ նրան տեսած, մի հաշիվ է:

Նանարը՝ լուռ, բավարարված հրճվում էր՝ տղայի խոսքերը վերագրելով խանդին:

— Լավ մտածիր, Նանար,— խորհուրդ տվեց Մամբրեն:— Ու մի՛ շտապիր, դեռ խոսք մի՛ տա նրան՝ մինչև ավարտի գա…

Աղջկա աչքերը շողացին ուրախությունից:

— Չէ,— Նանար,— գլուխն օրորեց Մամբրեն,— դու ինձ սխալ հասկացար: Ես սիրահարված չեմ քեզ, որ խանդեմ: Ես քո մասին եմ մտածում: Ես ուզում եմ, որ դու լավ մարդ առնես, երջանիկ լինես: Դրա համար էլ դու դեռ ոչ ոքի խոսք մի՛ տա, սպասիր: Կսպասե՞ս…

— Որ չսպասեմ՝ ի՞նչ պիտի անեմ,— հառաչեց Նանարը:— Խուտուտի բոլոր լավ տղաներդ գնացիք գյուղից:

— Էդ չեղավ, Նանար,— դժգոհեց Մամբրեն,— Խուտուտից դուրս ուրիշ տեղ տղա չկա՞, ի՞նչ է: Որ խոսք չտաս՝ մի օր էլ կգնաս, ուրիշին կառնես: Քի՞չ ուզողներ են գալիս քեզ ամեն կողմից…

— Քե՞զ ինչ,—հանդիմանական հայացքով, բայց տխուր, հարցրեց աղջիկը:

— Ի՞նձ...— Մամբրեն ինքն էլ չգիտեր, թե ինչու էր խնդրում աղջկան՝ խոսք չտալ ոչ միայն Սև Մամբրեին, այլև ընդհանրապես ոչ ոքի:— Ինձ՝ ոչինչ, իհարկե:

— Չէ՞ որ դու էլ կարող է հանկարծ ամուսնանաս էնտեղ:

— Չէ, Նանար, չհավատաս: Ես խելքս տալու եմ սովորելուն:

— Էդ էլ քո գործն է,— անտարբեր ձեռքը թափ տվեց աղջիկը,— իսկ իմ թևը բռնող չկա, ուզեմ՝ հենց էգուց էլ կամուսնանամ...

— Խնդրեմ,— վիրավորված, իսկույն բացականչեց Մամբրեն:— Ես առաջին ուրախացողը կլինեմ:

— Կուրախանա՞ս որ

— Ինչո՞ւ չէ:

— Ասա՝ մեծ ախպորս արևը վկա:

Մամբրեն ձայն չհանեց:

— Չե՞ս երդվում...— խելահեղ ուրախության պատրաստությամբ, սպասողական ու անհամբեր հարցրեց Նանարը՝ խորամանկ նայելով տղայի ուղիղ բիբերի մեջ:

— Գիտե՞ս ինչ, Նանար...— ասաց Մամբրեն դանդաղ և կշռադատորեն,— եթե գամ տեսնեմ, որ ամուսնացել ես ու էլի էս Նանարն ես մնացել՝ իհարկե կուրախանամ, երդվում եմ մեծ ախպորս արևով:

Նանարն ամբողջ իրանով ձգվեց դեպի նա՝ լարված սպասելով շարունակությանը:

— Բայց եթե գամ տեսնեմ, որ ամուսնացել ես, բայց ուրիշ Նանար ես դարձել, իմ ուզած Նանարը, ինչո՞ւ պիտի ուրախանամ…

— Մամբրե...— ուրախ բացականչեց Նանարը,— Մամբրե ջան... Ուզո՞ւմ ես, հենց էս րոպեիս երդվեմ ու խոսք տամ քեզ…

— Չէ, Նանար…

— Բա ինչո՞ւ…

— Էլի սկսենք նորի՞ց,— թեթևակի ժպտաց տղան:— Չէ՞ որ ասացի, որ չեմ սիրում քեզ…

Նանարը խճճվեց, դադարեց հասկանալուց:

— Կգնամ, կավարտեմ կգամ՝ կտեսնենք,— եզրափակեց Մամբրեն:— Իսկ դու, ուզում ես՝ ամուսնացիր, ուզում ես՝ ոչ: Եթե խոսք չեմ տալիս, ուրեմն իրավունք էլ չունեմ խոսք վերցնելու քեզանից:

— Խոսք տամ, թե չտամ՝ ես դեռ մի հինգ տարի ամուսնացողը չեմ,— կրկնեց աղջիկը՝ քիչ առաջ մյուս Մամբրեին ասած իր խոսքերը:

Տղան վեր կացավ: Վեր կացավ նաև աղջիկը:

— Մնաս բարով, Նանար:

— Գնաս բարով, Մամբրե:

— Ես մեկ-մեկ նամակ չգրե՞մ քեզ, Նանար: Զուտ ընկերաբար:

— Բա ես չէի՞ ուզի, Մամբրե ջան: Բայց, ինչքան չլինի՝ գյուղ տեղ ենք, կխոսեն: Պետք որ լինի՝ ես քո մասին ձերոնցից կիմանամ: Խորամանկ կերպով:

— Դե գնա, Նանար:

— Առաջ դու ինքդ գնա: Ուզում եմ նայեմ ետևիցդ: Դու բենզինի կետի մո՞տ ես դուրս գալու:

— Այո:

— Մեր խոսակցության մասին բան չասես Մամբրեին: Մոսկվայում չմրսես, չհիվանդանաս, Մամբրե ջան: Ու խելքդ էլ աղջիկներին չտաս, այլ քո ուսումին: Ես քեզ համար եմ ասում...

Նանարը դանդաղ շարժումով վերցրեց տղայի ձեռքը, սեղմեց իր կրծքին և նրա աչքերից դուրս պրծավ երկու կաթիլ արցունք՝ կամացուկ, գաղտագողի:

Մամբրեն զգուշությամբ, աշխատելով չվշտացնել աղջկան, քաշեց իր ձեռքը, շուռ եկավ և հեռացավ դանդաղ քայլերով: Ցատկելով առաջին քարի վրայով, նա կարծես սթափվեց և այժմ շարունակեց քայլել արագ-արագ: Նա զիգզագներ չէր անում, այլ գնում էր ուղիղ՝ բարձրանալով ու իջնելով

հանդիպած քարերի վրա: Սակայն կես ճանապարհին, զգալով որ ճիշտ չի ընտրել ուղղությունը, նա կտրուկ շեղեց իր ճանապարհը: Նանարն այդ չնկատեց և շարունակեց նայել այն ուղղությամբ, որով գնում էր երիտասարդը քիչ առաջ: Նա սպասում էր, թե քարերի ետևից ահա կերևա Շեկ Մամբրեն և ինքը վերջին անգամ կտեսնի նրան: Նանարը նույնիսկ բարձրացավ մի մեծ քարի վրա:

Իսկ Մամբրեն գնում էր նրա տեսողությունից դուրս: Բավական էր, որ աղջիկը մի քիչ շուռ տար հայացքը, որպեսզի տեսներ նրան: Բայց նա չգիտեր այդ և չտեսավ, թե ինչպես Մամբրեն նայեց ետ, թափահարեց ձեռքը՝ հրաժեշտ տալու ձևով, և անհետացավ:

Նանարի դիմաց փռված էր քարքարոտ բարձրավանդակը՝ դատարկ, վայրենի, կուսական: Հազարավոր տարիներ դա մնացել էր անփոփոխ: Իսկ նրա ետևում, ներքևում, համարյա նույնքան անփոփոխ արտաքին տեսքով, ընկած էր Խուտուտ գյուղն իր տնակներով, սևաքար բարձր եկեղեցիով:

Դեռ նոր էին երկու Մամբրեները հեռացել գյուղից, բայց Նանարն արդեն սպասում էր նրանց վերադարձին…

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1

Անցան տարիներ: Հետևեցին նորանոր դեպքեր ու երևույթներ՝ Նանարի գիտակցության մեջ թուլացնելով հին հուշերը: Նոր դեպքերն ու երևույթները կա՛մ իրոք ավելի մեծ էին ու կարևոր, կա՛մ, լինելով թարմ ու անմիջական, թվում էին ավելի մեծ ու կարևոր, քան այն ամենը, ինչ եղել էր նրա անցյալում:

Մի օր, վաղ առավոտյան, երբ Նանարը դեռ քնած էր, նրա լուսամուտը թխթխկացրին: Աղջիկը վեր ցատկեց անկողնից, մոտեցավ լուսամուտին և վարագույրի ճեղքից ստուգելով, որ թխթխկացնողը տղամարդ չէ, այլ հարևանի կինը, բացեց փեղկերից մեկը.

— Բարի լույս, Նանար,— ողջունեց հարևանուհին:— Ջուր էի բերում առվից, հանդիպեց Արփիարը, ասաց, որ հայտնեմ քեզ, քաղաք չգնաս: Մարդ է գալիս, պիտի դիմավորեք:

— Լավ,— պատասխանեց Նանարը՝ խիստ դժգոհ, որ իրեն զրկեցին կիրակի օրը քաղաք գնալու բավականությունից: Ապա հարցրեց անտարբեր,— իսկ ո՞վ է գալիս:

— Մամբրեն:

— Ո՞վ, ո՞վ...— Նանարն անսպասելիությունից միանգամից սթափվեց և նրա դեմքն ամբողջովին կարմրեց հուզմունքից:

— Մամբրեն,— կրկնեց հարևանուհին:

— Ո՞ր մեկը,— դուրս թռավ նրա բերանից և նրան թվաց, թե նա տվեց իրեն մատնող հարց: Նա կասկածանքով նայեց հարևանուհու երեսին: Բայց քանի որ հարցն արդեն տրված էր, նա անհամբեր սպասեց պատասխանի:

— Էդ արդեն չգիտեմ,— ասաց հարևանուհին, կռացավ, վերցրեց իր դույլերը և գնաց:

Նանարը մնաց լուսամուտի մոտ՝ սառած, անշարժ, հուզմունքից անկարող՝ ո՛չ ուրախանալ, ո՛չ մտածել:

Ուրեմն Մամբրեն վերադառնում է... Այո, արդեն ժամանակն է: Բայց ո՞ր Մամբրեն…

Չնայած իր զգացմունքների տարբերությանը՝ Մամբրեներից յուրաքանչյուրի նկատմամբ, նա երկուսին էլ սպասում էր հավասար հուզումով: Բայց այժմ նրան տանջում էր անորոշությունը: Ախր ո՞ր, ո՞ր Մամբրեն…

Լուսամուտի մոտով անցավ մի մարդ: Ու թեև նա չնկատեց Նանարին, այնուամենայնիվ աղջիկը բնազդական շարժումով ետ քաշվեց, ապա բոլորովին հեռացավ սենյակի խորքը: Նրա մոր անկողինը դատարկ էր: Ինչպես ամեն առավոտ, պառավը վեր էր կացել իր աղջկանից վաղ:

Նանարը դուրս եկավ նախասենյակ, լվացվեց և, վերադառնալով, սկսեց հագնվել:

Մամբրեն գալիս է... Որքա՜ն հուշեր փոթորկվեցին նրա ուղեղում և որպես դեռ երեկվա դեպքեր, հստակ կանգնեցին նրա աչքի առաջ: Հինգ տարի է, ինչ Նանարը չի տեսել նրան, այսինքն՝ նրանց: Ճիշտ է, Սև Մամբրեն ամեն ամառը ձգտել է գոնե մի քանի օրով ընկնել Խուտուտ, բայց այդ նրան չի հաջողվել: Առաջին երկու ամառները նրան ուղարկել էին սանատորիա, որովհետև, ինչպես պարզվել էր, արտաքինից այդքան առողջ այդ տղայի թոքերը խիստ կարիք ունեին բուժման: Այժմ նա միանգամայն առողջ է: Հաջորդ երկու ամառները նա հետախուզական արշավախմբի հետ մեկնել է Հեռավոր Արևելք:

Շեկ Մամբրեն նույնպես, երեք ամառ անցկացրել է գիտարշավի մեջ՝ Ալթայի երկրամասում, իսկ մի տարի, անցյալ տարի, վերադարձել էր Երևան, իջևանել էր իր մեծ եղբոր տանը, որտեղ այժմ ապրում են նաև նրա ծնողները: Նա ոչ մի անգամ չէր եկել Խուտուտ և ոչ ոքի էլ չէր տեղեկացրել իր մասին: Նանարը նրա մասին իմացել էր միայն այն ժամանակ, երբ նա արդեն մեկնել էր: Աղջիկը նույնիսկ արտասվել էր վիրավորանքից: Չուզենալ գոնե մի անգամ հանդիպել իր մանկության ընկերուհուն, չգրել նրան գոնե մի քանի տող…

Ճիշտ է, Շեկ Մամբրեն գրել էր Նանարին մի քանի անգամ, բայց դա շատ վաղուց էր, առաջին տարում: Տղան այնտեղ նկարագրում էր իր կյանքը, ինստիտուտը, բարևում էր Նանարին և ուրիշ ոչինչ: Այո, նաև այն, որ յուրաքանչյուր նամակում նա այս կամ այն առիթով հեգնում էր մյուս Մամբրեին: Իսկ հետո ընդհատվեցին նաև այդ կցկտուր նամակները: Ի դեպ, Նանարը նույնիսկ գոհ էր դրա համար, որովհետև գյուղում մարդիկ կարող էին իմանալ նամակագրության մասին, իսկ Շեկ Մամբրեն գլխի չէր ընկնում՝ գրել քաղաքի փոստի հասցեով, ցպահանջ: Այժմ ամեն կիրակի Երևան գնալիս Նանարը կենտրոնական փոստում ստանում էր միայն Սև Մամբրեի նամակները: Իսկ ինքը, իրեն հատուկ զգուշությամբ, ոչ մի անգամ չէր գրել ո՛չ մեկին, ո՛չ մյուսին:

Սև Մամբրեն աղջկան գրում էր կանոնավոր կերպով, համարյա ամեն շաբաթ: Նա յուրաքանչյուր նամակում նորից և նորից արտահայտում էր իր սերն աղջկա նկատմամբ խնդրում էր նրան չամուսնանալ, սպասել նրան: Խնդրում էր գոնե մի անգամ գրել իր մասին և, իհարկե, Խուտուտի մասին: Տեղեկանալով, որ Խնկանոսում սկսել են հրատարակել մի փոքրիկ լրագիր, նա խնդրել էր աղջկան՝ բաժանորդագրվել իր համար, որպեսզի միշտ ընթացքի մեջ լինի, թե ի՛նչ է կատարվում իրենց գյուղում և շրջանում: Աղջիկը կատարել էր նրա խնդիրը: Վերջին նամակը նրանից Նանարն ստացել էր մի ամիս առաջ: Տղան այնտեղ գրում էր, որ հաջող ավարտել է ուսումը և շուտով վերադառնալու է հայրենիք՝ Խուտուտ: Նա նույնպես առիթ չէր փախցնում իր նամակներում

ծիծաղելու իր ընկերոջ և ախոյանի՝ Շեկ Մամբրեի վրա, որը, ի դեպ ասած, նույնպես հաջողությամբ ավարտել էր ուսումը:

Ինչպիսի՜ խնամքով հագնվեց Նանարը... Նա նախ և առաջ հանեց սնդուկից իր ամենալավ ներքնաշապիկը՝ գունատ վարդագույն, հագավ, մոտեցավ շրջանակավոր հայելուն, որը նկարի նման կախված էր պատից՝ մի քիչ դեպի առաջ թեքված: Հայելու միջից Նանարին նայեց մի շատ գեղեցիկ աղջիկ: Ոչ մի համեստություն չէր կարող խանգարել նրան՝ նկատելու այդ: Նրա սև մազերը՝ կոհակ-կոհակ, լայն բոլորել էին գլուխը՝ ինչպես դանդաղ հոսած ձյութի թանձր ու ծանր զանգվածներ: Նրա աչքերի բացվածքն այնքան մեծ էր , որ թվում էր ոչ թե զգուշությամբ ու խնամքով կտրված, այլ համարձակ շարժումով պատռված: Այդտեղից նայում էին երկու խոշոր, սև աչքեր: Բայց, զարմանալի բան: Չնայած իրենց ահագին մեծությանը և մուգ գույնին, ոչ թե աչքերն իրենք էին տպավորվում մարդկանց վրա, այլ դրանց հայացքը՝ համատարած ու խոր:

Հիշո՞ւմ էր արդյոք Նանարը, որ մի ժամանակ նրա դեմքը և մարմնի ամբողջ մաշկը սևացած ու տգեղացած էին եղել լեռնային արևից: Այժմ նա իր դիմաց տեսնում էր միայն մի քիչ թուխ դեմքը, որը սև մազերի և սև աչքերի համադրությամբ թվում էր բոլորովին սպիտակ: Ոչ միայն վերջին տարիներում արևի տակ չաշխատելուց էր նրա մաշկը վերստացել իր բնական տեսքը, այլև նրանից, որ դեռ հինգ տարի առաջ, Մամբրեների մեկնելուց համարյա անմիջապես հետո, նա սկսել էր մեծ ուշադրություն դարձնել իր արտաքինին: Արևի տակ աշխատելիս նա ամեն հնարավոր միջոցներով պաշտպանել էր դեմքը նրա ճառագայթներից և ամեն գիշեր երեսին, թևերին ու ոտքերին քսել էր ինչ-որ լավ կրեմ:

Նանարը շուռ եկավ հայելուց: Այժմ նրա աչքերի առաջ այլևս գեղեցիկ աղջիկը չէր, այլ անհրապույր սենյակը: Խիստ ցածր առաստաղ՝ վեց գերաններով և դրանց միջև՝ արկղներից պոկված տախտակներով: Խառնիխուռը խփված, դրանք իրենց վրա կրում էին սև ներկով արված մակագրությունների պատառներ, առանձին տառեր ու թվեր, դրանց մասեր: Հատակ՝ բաղկացած համարյա նույնպիսի կարճ ու նեղ տախտակներից՝ անկանոն, անհավասար: Մի փոքրիկ լուսամուտ՝ չափազանց հաստ պատի մեջ, այնքան հաստ, որ լուսամուտի գոգում կարելի էր երեխայի անկողին փռել լայնակի: Մնդուկ: Ամանեղենի ցածրիկ պահարան՝ խեղճ, խարխուլ, երևի հարյուր տարի առաջ շինված: Պատի վրա՝ մեխերից կախված և սպիտակ սավանով ծածկված հագուստներ:

Նանարը մոտեցավ պատին, վար առավ սավանը, կանգ առավ մտածկոտ: Ո՞ր զգեստն ընտրել: Մամբրեն գալիս է…

Նրա գեր ուսերի վրա մետաքսե նեղ փայլով թույլ հանգչում էին ներքնաշապկի ուսակալ ժապավենները: Դրանց տակից երևում էին մի զույգ այլ ժապավեններ՝ մի փոքր ավելի նեղ, մարմնի գիրության մեջ խրված: Դրսում՝ արև էր, դրսում՝ ամռան սկիզբ, բայց հաստ պատեր և փոքրիկ լուսամուտ ունեցող այդ սենյակում զով էր, համարյա ցուրտ: Նանարը սրսփաց, բայց ոչ ցրտից: Նա ժպտաց, նայեց սեղանիկի վրա դրված իր թևի ժամացույցին և շտապեց հագնվել:

Մամբրեն գալիս է…

Բայց այդ միտքը չէր առաջացնում նրա մեջ մի որոշակի զգացում, որովհետև նա չգիտեր, թե ո՛ր Մամբրեն է գալիս: Մի դեպքում նա հանդիպմանը կսպասեր սրտատրոփ, հուզված, որովհետև սիրում էր տղային: Մյուս դեպքում նույնպես, սրտատրոփ, հուզված, որովհետև տղան սիրում էր նրան: Սակայն տարբեր էին սրտի այդ տրոփյունները և տարբեր էին հուզումները: Ո՞ր մեկը դրանցից պաշարեր աղջկան, երբ նա չգիտեր, թե ո՛ր Մամբրեն էր գալիս: Ուստի և առայժմ նրան

պաշարել էր միայն հետաքրքրությունը: Մյուս զգացմունքները, սպասելով վերադարձած երիտասարդի ով լինելը պարզելուն, դարան էին մտել՝ առաջին իսկ րոպեին դուրս պոռթկալու պատրաստ:

Մամբրեն գալիս է…

2

Չնայած կիրակի օրվան, Արփիար Գալոյանն արթնացավ շատ վաղ, հագնվեց և շտապեց կոլտնտեսության գրասենյակը: Նա վաղ վեր կացավ ըստ իր ամենօրյա սովորության, իսկ գրասենյակ գնաց պարզապես նրա համար, որովհետև հարկավո՞ր էր որևէ տեղ գնալ թե ոչ:

Նա քայլում էր սարալանջի երկարությամբ ձգվող մի ուղիղ և բավական երկար փողոցով: Մի երկու տեղով այդ փողոցը հատում էին այլ փողոցներ, որոնք նրա մի կողմում իջնում էին ձորն ի վար: Ներքևում երևում էին կանայք, որոնք ծանր դույլերը թևերից կախ, ջուր էին բերում Խուտուտ առվակից:

Արդեն մի քանի տարի էր, ինչ գյուղն ուներ էլեկտրական լուսավորություն: Փողոցներում կանգնած էին սյուներ՝ հաղորդալարերով: Լամպեր ունեին բոլոր բնակարանները, բոլոր շենքերը, բայց ոչ մի լամպ չկար փողոցներում: Ո՞ւմ էր հարկավոր...

Ցածրիկ ու տափակ կտուրների վրա տեղ-տեղ ցցված էին փայտեր, որոնք կրում էին ռադիոյի անտենաներ: Փողոցի անկյուններից մեկում կանգնած էր դպրոցի շենքը: Որպեսզի փոքր երեխաներն ստիպված չլինեին ամեն օր գնալ գալ Խնկանոս, Խուտուտում բացվել էին տարրական երեք դասարաններ:

Վերևում, բարձրավանդակի ետևից, ծագում էր արեգակը: Դրա շողերը, դեռ առանց դիպչելու գյուղին, դրա գլխի վրայով խոսում էին Խնկանոսի բարձրավանդակի բլուրների հետ: Գյուղի զովության մեջ հաճելի գալիս էր թխվող լավաշի հոտը:

Գրասենյակում, որն ակումբի հետ միասին տեղավորված էր գյուղի երկրորդ և առայժմ վերջին նորակառույց շենքում, իհարկե, ոչ ոք չկար և դուռը փակ էր: Ճիշտ է, ակումբի դռան վրա կողպեքն արդեն բաց էր և ներսից լսվում էին Արփիարի նման շուտ արթնացած մի քանի երիտասարդների ձայները, բայց կոլտնտեսության նախագահը չմտավ այնտեղ: Կանգ առնելով միջանցքում՝ պատի լրագրի նոր համարի դիմաց, նա սկսեց կարդալ:

Կլորիկ մարմնով, ոտքերով և ձեռքերով, արևառ ու թուխ դեմքով, որը խիստ կոնտրաստ էր կազմում բոլորովին սպիտակած մազերի հետ, նա ուշադրություն դարձրեց մի բանաստեղծության վրա, որը կոչվում էր «Մեծ Խուտուտի ուղին»: Բանաստեղծը, ինչ որ Հայնե Խուտուտացի, խիստ անպաճույճ տողերով գրում էր այն մասին, որ «Խուտուտը ողողվել է բյուր հազար լույսերով», որ նրա «լայնարձակ դաշտերում հոնդում են տրակտորներն ու կոմբայնները»՝ հոգնակի թվով, իսկ «գյուղի փողոցներով ու հրապարակներով սրընթաց սլանում են ավտոները»՝ նույնպես հոգնակի թվով: Նա հեգնանքով էր նշում, որ գյուղի եկեղեցու «երբեմնի վսեմ հասակը» սքմել-իջել էր նոր Խուտուտի նորակառույցների՝ դպրոցի և վարչության ու ակումբի շենքերի համեմատությամբ: Բանաստեղծությունը վերջանում էր այսպես, «Շուտով կջնջվի որևէ տարբերություն փոքր Խուտուտի և մեծ Խնկանոսի միջև», որովհետև «Խուտուտը քայլում է լայն ուղիով՝ դեպի հաղթ Խուտուտավան»…

Ավարտելով ընթերցումը, Գալոյանն էլ մի պահ նայեց բանաստեղծությանը՝ դրա ընդհանուր տեսքին, վերնագրին, ստորագրությանը, օրորեց գլուխը և կիսաբաց անելով ակումբի դուռը, հարցրեց դեպի ներս.

— Տղաներ, ո՞վ է էդ հիմար Հայնեն:

Չափազանց զարմացած միջանցք դուրս ելավ մի երիտասարդ, բայց նայելով պատի լրագրին, հասկացավ, թե ո՛ր Հայնեի մասին է խոսքը, և պատասխանեց.

— Մեր Հովակի տղան է՝ Հայկը: Ինչո՞ւ, ընկեր Գալոյան, սահուն չի՞ գրել:

Որովհետև գրասենյակում ոչինչ չուներ անելու, Արփիարը դուրս ելավ փողոց և սկսեց շրջել՝ տանտիրոջ հոգատար աչքով զննելով հանդիպող ամեն շենք, պատերի տակ բուսած խոտը, փողոցի մեջտեղում երբեմն հանդիպող ցեխը, դարպասների առջև նստած շներին:

Անցնելով Հովակի տան մոտով, և բաց դարպասով տեսնելով բակում տանտիրոջն իրեն, Արփիարը բարևեց: Հովակը սիրալիր պատասխանեց և չսպասելով, թե կոլտնտեսության նախագահը կանգ է առնելու, շարունակեց իր գործը: Նա գետնին փռված և բավական չորացած թրիքը բահով կտրատում էր աղյուսակների՝ դրանք կողքի վրա կանգնեցնելու և վերջնականապես չորացնելու:

— Լսիր, քո Հայկը Երևանը տեսած կա՞,— հարցրեց Արփիարը:

— Չէ,— չոր պատասխանեց գյուղացին՝ միանգամից ընդունելով մռայլ տեսք:

— Ինչո՞ւ չես տանում հետդ մի անգամ:

— Իսկ ինչո՞ւ տանեմ...— Հովակն առաջ եկավ, մոտեցավ և դեմքը համարյա ընդհուպ մոտեցնելով Արփիարի դեմքին, անբարյացակամ, համարյա, թշնամաբար, նայեց ուղիղ նրա աչքերի մեջ:— Ինչո՞ւ տանեմ: Որ սիրտը պղտորվի՞: Հազիվ իրեն համար վեր է ընկել էս քամբախ տեղում, խելքը տվել է ուսումի:

— Բա նա վերջ ի վերջո չի՞ տեսնելու Երևանը,— ճիգով ժպտաց կոլտնտեսության նախագահը:

— Չէ,— հեգնեց Հովակը,— հավիտյան մնալու է քո թագավորության տակ:

— Ի՞նչ ես դուրս տալիս,— զայրացավ Արփիարը:

— Մի՛ գոռա, նախագահ, դու իմ տղային ինձնից շատ չես սիրում: Ժամանակը որ հասնի՝ Երևան էլ կգնա, Մոսկվա էլ: Էն ժամանակ որ սիրտը պղտորվի՝ վնաս չունի, կգնա, էնտեղ էլ կապրի: Բայց հիմի որ պղտորվի՝ լա՞վ կլինի: Դու ինձ էն ասա, քա՞նի բուռ հաց ես տալու մեզ էս տարի՝ մի աշխօրին…

Առանց նրան պատասխանելու Արփիար Գալոյանը հեռացավ: Օրը, որ դեռ նոր էր սկսվում, համարյա փչացավ նրա համար: Այլևս ոչ թռչուններն էին ճռվողում կամ սլանում նրա գլխավերևով, ոչ արևն էր իջել և դիպել գյուղի տնակներին, ոչ հավն էր գործնականորեն կչկչում ինչ-որ բակից՝ պատրաստվելով, չնայած ոչ աշխատանքային օրվան, ածել իր հերթական ձուն:

Արփիար Գալոյանի վատ տրամադրության բիծը կարող էր մեծանալ և ամբողջովին ծածկել նրան՝ եթե նույն րոպեին նա չնկատեր դիմացից եկող Նանարին:

Նանարի լոկ տեսքն անգամ ընդունակ էր խնդությամբ լցնել յուրաքանչյուր մարդու հոգին, հաճելի դարձնել կյանքը նրա աչքում, հպարտությամբ լցնել կուրծքը՝ այն բանի համար, որ աշխարհում կան ոչ միայն թունոտ լեզվի տեր Հովակներ, այլև այսպիսի հմայիչ Նանար...

Նանարի մաքուր և գեղեցիկ դեմքից բուրում էր առողջ թարմությունն ու բնական գեղեցկությունը: Նրա լիքը այտերը, որոնք մի ուրիշ դեպքում կարող էին մնալ որպես գյուղացի աղջկա կլորիկ թշեր, այժմ նրան տալիս էին կիրթ գեղեցկության հմայք: Ո՛չ նրա խիստ լայն և հարկ եղածից ավելի կարմիր շուրթերը, ո՛չ գեր կզակը, որի մի կողմում, համարյա ծնոտի տակ, գտնվում էր մի խոշոր խալ, չէին գռեհկացնում նրա գեղեցկությունը, ընդհակառակը, հատկապես այդ ամենի շնորհիվ նա չափազանց նման էր մեծ վարպետների նկարած հռչակավոր գեղեցկուհիների, որպիսիք, ինչպես հավատում էին մի ժամանակ, կարող էին ծնվել միմիայն ազնվատոհմ ընտանիքներում:

Նանարը հագել էր տոնականորեն շքեղ, ուղղակի շլացուցիչ: Այսպես էր թվում: Իսկ որ ուշադրություն դարձնեիր՝ նա հագել էր ընդամենը սպիտակ կրեպ-սատինից կարված մի անթև շրջազգեստ, ինչպիսիք հագնում են ուրիշ շատ աղջիկներ՝ գեղեցիկ թե տգեղ: Ոտքերին նա ուներ նուրբ, բայց բոլորովին էլ ոչ արտակարգ, այլ ամեն խանութում վաճառվող գուլպաներ, սպիտակ լաքից կիսակոշիկներ: Ուրիշ բացարձակապես ոչինչ՝ եթե չհաշվենք նրա սեփական գեղեցկությունը, որը հենց, ոչ միայն ինքն էր շլացուցիչ, այլև այդպիսին էր դարձնում նաև նրա հագուստը: Նրա երկար ու լիքը թևերն իրենց անփայլ թխությամբ արքայականորեն դուրս էին պրծել անթև զգեստի սպիտակության միջից: Նրա կուրծքն ուռեցրել-բարձրացրել էր հագուստը, որը, թվում էր, թե կարված էր անկուրծք աղջիկների համար և նեղ էր գալիս նրան: Մարմնի և հագուստի այդ անհամապատասխանությունը հմայիչ էր դարձնում ոչ միայն աղջկան իրեն, այլև նրա հագուստը: Իսկ նուրբ գուլպաները, անկարող մեղմելու նրա ոտքերի, ճիշտ է, բարեձև, բայց կուշտ լիքությունը, կազմում էին մի այլ, նույնքան հաճելի, անհամապատասխանություն:

Բայց ամենամեծ անհամապատասխանությունը, այս անգամ՝ տխուր ու ցավալի, այն էր, որ կար աղջկա և նրա շրջապատի միջև: Նանարը գալիս էր փոքրիկ Խուտուտի անբարեկարգ փողոցով, որի երկու կողմերում կանգնած էին քարակտորների և հողի խառնուրդից կազմված ցածրիկ, գորշ պատերը, իսկ ոտքերի տակ փոշոտ գետինն էր իր բազմաթիվ մանր քարերով: Աղջկա կիսակոշիկները, որքան էլ որ նա սակավ էր հագնում դրանք գյուղում և քայլում էր խնամքով, տեղ-տեղ քերծվել էին այդ քարերից:

Արփիար Գալոյանն այլևս չէր քայլում, կանգ էր առել, նայում էր թաքցրած հիացմունքով և սպասում էր աղջկա մոտենալուն: «Լավ է, որ նա ինձ բանի տեղ չի դնում որպես տղամարդու,— մտածում էր նա,— թե չէ կմոռանայի կին ու երեխա, տուն ու գործ, կգնայի նրա ետևից՝ շվաքի պես...»:

— Բարև, նախագահ,— ասաց Նանարը՝ մոտենալով, և մեկնեց իր ձեռքը: Ոչ, այնուամենայնիվ, նա աղջիկ էր և բացառություն չէր կազմում մյուս աղջիկների մեջ,— պարֆյումերիան կպել էր նաև նրան: Նրա եղունգները մանիկյուր էին արված՝ ճաշակով, վարդագույն-արծաթավուն երանգի, թեև, առանց նրան տեսնելու կարող էր թվալ, թե այդ գույնը կսազեր միայն շիկահերներին:

Արփիարը, ինչպես ամեն անգամ Նանարին հանդիպելիս, մի պահ չվստահեց բռնել նրա ձեռքը: Ապա, իր միանգամայն մաքուր ձեռքը քսմսելով գրպանի մոտերքը, կարծես սրբելով ինչ-որ թաց բանից, վերջապես մեկնեց աղջկան:

— Բարև, Նանար: Դու հո չե՞ս նեղացել, որ ես քեզ ետ պահեցի քաղաք գնալուց:

— Ոչ, ընդհակառակը:

— Դե գիտես, էլի, գալիս է կուլտուրական մարդ: Ո՞վ նրա հետ կխոսակցի ավելի լավ, քան թե դու: Ինքդ գիտես, որ խոսելու հետ ինքս էնքան գլուխ չունեմ: Բայց դու շուտ ես դուրս եկել, Նանար: Ես կգայի, իմաց կտայի քեզ: Մի քանի հոգու էլ մեր կոմերիտականներից եմ իմաց տվել: Իսկ ուսուցիչները մեղք են, թող հանգստանան, քննության օրեր են:

— Իսկ ես ուսուցիչ չե՞մ,— ժպտաց Նանարը:

— Դե, դու մեր Նանարն ես և…

Արփիարը խոսքը թողեց կիսատ և նայեց տարակուսանքով: Նրա բառերը, ընկնելով իր իսկ ականջների մեջ, զարմացրին նրան: Մի՞թե, իսկապես, այդ աղջիկը նրանց Նանարն է, նրանց խուտուտցին, որին կարելի է այդպիսի առիթներով, առանց քաշվելու, անհանգստացնել…

— Ե՞րբ է գալու,— հարցրեց Նանարը:

— Երեկոյան զանգ տվեց Երևանից, ասաց, որ առավոտվա ժամը ինևի ավտոբուսով դուրս է գալիս: Ուրեմն, տասնմեկից մի քիչ անց՝ կլինի կամուրջի մոտ: Մենք կգնանք տասնմեկին, կսպասենք:

— Դեռ երեք ժամ կա,— ակամա հառաչեց Նանարը՝ նայելով ժամացույցին:

— Առայժմ գնա տուն, գործ-մործ կունենաս անելու,— հոգատարությամբ ասաց Արփիարը՝ աղջկա հառաչանքը վերագրելով ափսոսանքի՝ ժամանակի կորուստի համար:

— Ոչ, այլևս տուն չեմ գնա:

— Բա ի՞նչ անենք:

— Գնանք դպրոց, միացնենք ընդունիչը,— առաջարկեց Նանարը,— ես քեզ համար լավ երաժշտություն կբռնեմ եթերից, ընկեր նախագահ:

— Խելոք առաջարկ է,— համաձայնեց նախագահը՝ ոչ այնքան ցանկանալով լսել երաժշտություն, որի սիրահար չէր, որքան որ բավականություն զգալով Նանարի ընկերակցության մեջ մնալու մտքից: Գեղեցիկ աղջկա հետ միևնույն բանով զբաղվելու միտքը շոյում էր նրա հպարտությունը, բարձրացնում էր նրան իր աչքում, գեղեցկացնում:

Նրանք քայլեցին դեպի դպրոց: Բայց հազիվ էին արել մի քանի քայլ, երբ ետևից լսվեց արագ քայլերի, համարյա վազքի թմբմփոց: Մեկը ձայն տվեց.

— Ընկեր Արփիար…

Մոտ վազեց մի երիտասարդ.

— Ընկեր Արփիար, մենք հյուրին սպասում էինք ժամը տասնմեկին, իսկ նա վեր է կացել, եկել է ժամը վեցի ավտոբուսով: Գնանք…

— Որտե՞ղ է նա,— միաբերան հարցրին Գալոյանն ու Նանարը:

— Եկել էր գրասենյակ, հիմա դուրս ելավ ակումբում հավաքված տղաների հետ, գալիս է էս կողմ…

Նանարն առանց իրեն հաշիվ տալու վազեց մի քանի քայլ, ապա կտրուկ կանգ առավ՝ զգալով, որ դա կարող էր տեղիք տալ կասկածի: Բայց քանի որ արդեն կատարել էր անզգույշ քայլը, նա իսկույն շարունակեց այն, որպեսզի այժմ էլ կանգ առնելը տեղիք չտար նոր կասկածի: Կատարելով ևս մի քանի արագ քայլ, նա գնաց դանդաղ, որովհետև տեսավ դիմացից եկող խումբը: Թող Մամբրեն չկարծի, թե աղջիկը վազքով է գնում նրան ընդառաջ…

Մամբրեն գալիս էր երիտասարդներով շրջապատված: Դա Շեկ Մամբրեն չէր: Բայց դա Սև Մամբրեն էլ չէր: Դա Մամբրե Բլանցն էր…

Նանարը սառեց-մնաց իր տեղում:

Իր երիտասարդ տարիների ինչ-որ շրջանում Մամբրե Բլանցը հագել էր գալիֆե շալվար՝ կոշիկներով ու գետրիներով, վերնաշապկի օձիքը դուրս էր ծալել բաճկոնի վրա, գլխին դրել էր լայն հովարով կեպի և, ըստ երևույթին, չուզենալով այլևս հետագայում ուշադրություն նվիրել իր արտաքինի հետ կապված հարցերին, ամբողջ կյանքում մնացել էր այդ հագուստով: Անցել էին տասնամյակներ, այլևս ոչ ոք չէր կրում գետրիներ ու գալիֆե, կեպիի փոխարեն մարդիկ մեծ մասամբ կրում էին շլյապաներ, կապում էին փողկապ և այլն, բայց Մամբրե Բլանցը կարծես չէր էլ նկատում այդ ամենը: Նա չէր նկատում նաև այն, որ գետրիներն ու գալիֆեի պիրկ փողերը, որոնք մի ժամանակ գրկել էին նրա ամուր սրունքներն ու լիքը ազդրերը, այժմ թույլ պատել էին նրա բավական սքմած մարմինը: Վերնաշապկի օձիքից, որտեղից մի ժամանակ երևացել էր նրա առողջ, բարձր, երիտասարդական կուրծքը՝ սև մազերի դուրս պրծած ծայրերով, այժմ երևում էր կարմրավուն մի տախտակ՝ ցանցառ սպիտակ մազերով, իսկ դրանցից բարձր՝ ծերացած բարակ պարանոցի ջլերով: Կեպու հովարը նրա արդեն չորուկ գագաթի վրա այժմ խիստ մեծ էր և անհամապատասխանորեն լայն:

Մամբրե Բլանցը մոտ վաթսուն տարեկան էր: Նրա դեմքը՝ այժմ նիհար ու ոսկրոտ, իր կարճլիկ ու սուր մորուքով նման էր նախահեղափոխական մեղվաբույծի դեմքի: Այտերն ու վերին շրթունքը մաքուր սափրված էին և երևում էր, որ նա սափրվում էր ամեն օր: Նրա աչքերը՝ մանր ու գունաթափ, ունեին աշխույժ արտահայտություն: Այժմ, տեսնելով Նանարին, դրանք դարձան ավելի աշխույժ: Դուրս գալով երիտասարդների խմբի միջից, նա արագ մոտեցավ աղջկան, բռնեց նրա ձեռքը և երիտասարդ կավալերի համարձակությամբ անելով հնացած մի կոմպլիմենտ, ասաց էլեգանտ ժպիտով.

— Ես երջանիկ եմ՝ դրանով ասված է ամեն ինչ: Եթե այս երիտասարդների մեջ չկա նաև ձեր սիրեցյալը, որ խանդի, ուրեմն թույլ տվեք թևանցուկ անել ձեզ…

Նանարը ժպտաց, մեկնեց թևը: Մամբրե Բլանցը կրթված մարդու տակտով և խելոք մարդու լրջությամբ ընդգծում էր իր հաճոյախոսության և հաճոյակատարության ոչ լուրջ լինելը: Իհարկե, նրան՝ ծերունուն, կարելի է անել այդպիսի կատակներ:

— Բարև ձեզ, ընկեր Բլանց,— ասաց Գալոյանը՝ մոտենալով:— Բարով եք եկել: Վերջապես:

— Մեր կոլտնտեսության նախագահն է,— ներկայացրեց Նանարը:

— Շատ ուրախ եմ: Ներեցեք...— նա հարցական նայեց Նանարին:

— Նանար,— ժպիտով թելադրեց աղջիկը:

— Ներեցեք, Նանար:—Նա ձեռքը հանեց աղջկա թևի միջից և բարևեց Գալոյանին: Ապա հառաչեց.

— Չեմ ճանաչում: Չեմ հիշում:

— Իսկ գյուղն ինչպե՞ս գտաք,— հպարտությամբ հետաքրքրվեց Հայնե Խուտուտացին:

— Նույնն է: Կարծեք չեմ հեռացել բոլորովին:

— Ի՞նչ ենք կանգ առել,— ասաց նախագահը,— գնանք ինձ մոտ, նախաճաշենք:

— Դա հետո: Առայժմ գնանք այն տունը, որտեղ ես եմ ծնվել ու մեծացել: Իսկ ո՞վ է ապրում այնտեղ: Ահա այն փողոցում է, գնանք:

Երիտասարդներից մեկն անվանեց Բլանցի նախկին տան ներկա ապրողներին:

— Չեմ ճանաչում: Չեմ հիշում: Իսկ մի՞թե դուք գիտեք, թե ո՛րտեղ եմ ապրել ես:

— Իհարկե գիտենք, ընկեր Բլանց: Մենք միշտ հիշում էինք ձեր մասին:

— Ես առաջարկել եմ, որ ձեր ապրած տան պատին հուշատախտակ խփվի,— հայտնեց Հայնեն:

— Պետք չէ, երիտասարդ: Ես ուրախ կլինեի, եթե իմ տան փոխարեն կանգնած լիներ մի նոր շենք: Ասում են՝ հաճելի է, երբ վերադառնալով տեսնում ես ամեն ինչ նույնությամբ իր տեղում: Ո՞վ է ասում: Իմ կարծիքով դա տխուր բան է: «Դու դեռ այստե՞ղ ես, խեղճ իմ տնակ»... Կարդացե՞լ եք:

Նա տվեց հեղինակի անունը՝ երկրորդական բանաստեղծ, բոլորին անծանոթ:

Երբ հասան տանը, Մամբրեն կանգ առավ, լուռ նայեց բավական երկար, ապա սթափվեց, հարցրեց.

— Իսկ հարմա՞ր է մտնել: Չէ՞ որ դեռ վաղ առավոտ է: Այն էլ՝ կիրակի: Քնած կլինեն: Բայց ոչ, ահա տեսնում եմ թոնիրի ծուխը, որ ելնում է երդիքից: Տխուր իդիլիա: Բայց լավաշը համեղ հաց է: Ի դեպ՝ վաղուց չեմ կերել: Երիտասարդ, մտեք ներս, հարցրեք: Եթե հարմար է... Եվ նախապես խնդրեցեք իմ ներողությունը:

Երիտասարդը մտավ տնակ և իսկույն դուրս գալով, երկրաբանին հրավիրեց մտնել:

Մտան բոլորը:

Մամբրե Բլանցը՝ բավական բարձրահասակ, մտնելիս կռացրեց գլուխը: Միջանցքում նա քայլեց տեղին ծանոթ մարդու վստահությամբ, անցավ հացատան դռան մոտով և թխկթխկացնելուց հետո բաց արեց սենյակի դուռը՝ մյուս թևի վրա: Բայց հազիվ ներս նայած, նա վրա քաշեց դուռը և, չնայած տանտիրուհու թախանձագին հրավերին, արագ դիմեց դեպի փողոցի դուռը.

— Գնանք, ընկերներ, գնանք... Ոչ մի նմանություն... Այնտեղ, որտեղ անցյալում իմ մահճակալն էր դրված... Իսկ այնտեղ, որտեղ... Ոչ, ոչ, թող մնա հիշողությանս մեջ՝ ինչպես որ եղել է... Խնդրեմ, անցեք, գեղեցկուհի Նանար…

Դուրս գալով փողոց, նա թևերը կանթեց մեջքին.

— Իսկ հիմա՞ ո՛ւր գնանք... Այո, նախաճաշելու: Շատ ներողություն եմ խնդրում, ընկեր նախագահ, մի անգամ ևս հիշեցրեք ինձ՝ Արփիա՞ր, թե՞ Արփիարյան:

— Արփիար Գալոյան:

— Շնորհակալություն: Այլևս չեմ մոռանա: Արփիար Գալոյան: Սպասեցեք... Գալոյա՞ն... Սպասեցեք. սպասեցեք... Արփիա՞ր…

Նա արագ թողեց Նանարի թևը, բուռն թափով նետվեց դեպի կոլտնտեսության նախագահը, գրկեց նրան.

— Էհ, Արփիար, Արփիար... Ես քեզ հիշեցի: Մենք մտերիմներ չենք եղել, դու ինձանից տասը տարով փոքր էիր, բայց ես քեզ հիշեցի: Հիշո՞ւմ ես, մեր փոքր ժամանակ ես մի քանի անգամ թվաբանական խնդիրներ եմ լուծել քո փոխարեն:

— Այո, մինչև որ հայրս ծեծեց ինձ ու ահ տվեց ձեզ:

— Իսկ ինչո՞ւ սկզբից չասացիր, թե ո՛վ ես դու:

— Ասացի, ընկեր Բլանց, լրիվ անվանեցի ինձ, բայց դուք...

— Բայց ես ի՞նչ: Չուզեցի՞ ճանաչել: Հիմարություն: Արփիար, Արփիար... Ծերունիները կա՞ն: Նրանք էլ անպայման կճանաչեն ինձ: Տարօրինակ է, որ ծերունիները պիտի ճանաչեն ինձ: Չէ՞ որ ես երիտասարդ էի, երբ հեռացա գյուղից: Ես այն ժամանակ կարծեմ սիրահարված էի մի գեղեցիկ աղջկա: Ոչ իհարկե ձեր չափ, Նանար, բայց և այնպես գեղեցիկ: Նա ամուսնացավ, գնաց գյուղից: Կլինի ձեր տարիքին: Այսինքն՝ այն ժամանակ էր ձեր տարիքին: Բայց վերջ: Գնանք նախաճաշելու: Դուք կբարեհաճե՞ք ուղեկցել ինձ, գեղեցկուհի Նանար:

— Այո, իհարկե:

— Ապահովված է՝ սոված եմ մնալու: Շարունակ նայելու եմ ձեզ՝ ամեն ինչ մոռացած: Իսկ դուք գալի՞ս եք, երիտասարդներ:

Երիտասարդները հրաժարվեցին, բայց Գալոյանը նրանց նույնպես տարավ իր հետ: Չգնացին միայն երկուսը, որոնք շտապ գործ ունեին ակումբում, և չգնաց Հայնե Խուտուտացին, որն շտապում էր տուն՝ Մամբրե Բլանցի մասին բանաստեղծություն գրելու:

3

Նախաճաշից անմիջապես հետո երիտասարդները ցրվեցին՝ հնարավորություն տալու հյուրին՝ հանգստանալու: Նանարը, նստելով ևս մի քիչ, ավարտեց զրույցը և նույնպես ելավ դուրս:

Նա համարյա ատեց Մամբրե Բլանցին, որը եկել էր մյուս Մամբրեների փոխարեն — միևնույնն էր, թե ո՛ր մեկի: Նրան նույնիսկ վիրավորական էր թվում, որ երիտասարդի հագուստ կրող այդ սքմած ծերունին նույնպես կոչվում է Մամբրե՝ գյուղի երկու լավ տղաների անունով:

Նանարը որոշեց այնուամենայնիվ մեկնել Երևան՝ թեև զգալի ուշացումով: Հերթական ավտոբուսի մոտենալուն դեռ կար մի ժամից ավելի, ուստի նա քայլում էր և մտածում, թե ի՞նչ կերպ անցկացնի այդ ժամանակը: Նա տխուր էր, հիասթափված: Նրա մեջ բորբոքվել էին բոլոր հին հուշերը, որոնք այժմ այդքան անսպասելի կերպով մնացել էին չգոհացած:

Նայելով շուրջը՝ աջ, ձախ, ներքև, վերև, նա հայացքը պահեց գյուղի բարձրում ընկած քարքարոտ բարձրավանդակի վրա: Ահա այնտեղ, հինգ տարի առաջ, Սև Մամբրեն հրաժեշտ տվեց Նանարին և Նանարը հրաժեշտ տվեց Շեկ Մամբրեին: Դրանից հետո աղջիկը ոչ մի անգամ չի եղել այնտեղ…

Հետաքրքիր է, ինչպիսի՞ն էր Նանարն այն ժամանակ... Չի հիշում: Հիշում է միայն այն, որ հագել էր չթե շրջազգեստ և խիստ մաշված կիսակոշիկներ: Տղաներին նա հիշում է հստակ, այսօրվա պես, իսկ իրեն չի հիշում, ոչ: Ի միջի այլոց, նա հստակ հիշում է նաև վիրավորական քննադատության այն խոսքերը, որ ասել էր Շեկ Մամբրեն նրա արտաքինի և հագուստի մասին: Մի՞թե, իրոք, այդքան տգեղ և անճաշակ է եղել նաև այն ժամանակ... Չի կարող պատահել: Պարզապես նա դուր չի եկել Շեկ Մամբրեին և դրա համար էլ նա փնովել է աղջկան: Իսկ Սևը հիացած էր նրանով…

Նանարը նկատեց, որ քայլում է դիք փողոցով, լանջն ի վեր: Իսկապես, ի՞նչ կլինի, եթե նա այսօր բարձրանա այնտեղ: Ավտոբուսին հասնելու դեռ շատ ժամանակ կա: Ճիշտ է, կիսակոշիկները կարող են քերծվել, բայց նա զգույշ կքայլի:

Հազիվ էր Նանարն ընդունել բարձրավանդակ գնալու որոշումը և արագացրել քայլերը, երբ զարմացած հարց տվեց իրեն, թե ինչպե՞ս էր պատահել, որ նա ոչ մի անգամ այդ հինգ տարվա ընթացքում չէր բարձրացել այնտեղ, չէր էլ մտածել այդ մասին: Տղաների մասին նա հաճախ էր մտածել, համարյա միշտ, բայց այնտեղ բարձրանալու մասին՝ ոչ:

Ճիշտ է, նա առաջ էլ չի բարձրացել այնտեղ ոչ մի ժամանակ, բայց չէ՞ որ Մամբրեներից հետո այդ վայրը կապվել էր նրա հիշողությունների հետ: Ընդհանրապես տարօրինակ տարի էր այդ տարին: Գյուղի բոլոր երիտասարդները, կարծես խոսքը մեկ արած, սիրահարվել էին նրա վրա: «Նանար ջան, արի գնանք քարափի գլուխը, քեզ բան ունեմ ասելու...»: Ամեն անգամ Նանարը բարձրանում էր անտեղյակ դեմքով, թեև լավ գիտեր, թե ի՛նչ են ասելու իրեն: Իսկ բարձրանում էր նրա համար, որ սիրո բացատրությունները շոյում էին նրա ինքնասիրությունը: Բայց տղաներն իրենք նրան պետք չէին, աղջիկն իր մտքում ծիծաղում էր նրանց բոլորի վրա՝ բացի երկու Մամբրեներից: Իր մանկության այդ երկու ընկերներն էին, որոնք այժմ ստիպում էին նրան՝ նորից բարձրանալ «քարափի գլուխը»: Զարմանալի է, ուղղակի անհավատալի, որ դեռ մինչև երեկ նա ցանկություն չի ունեցել գնալու այնտեղ, չի էլ մտածել, այդ մասին…

— Ո՞ւր էդպես, ուսուցչուհի:

Սպիտակ ներկած մի փոքրիկ լուսամուտից նայում էր մի կին:

— Վերև...— Նանարն անվանեց գյուղի վերին ծայրում ապրող մի ընտանիքի:— Աշակերտ երեխայի գործով…

Դուրս գալով գյուղից բաց լանջ, նա նայեց իր ոտքերի տակ՝ փնտրելով ոտնահետք: Բայց, ինչպես հինգ տարի առաջ, ոտնահետք չկար: Նույն պնդացած հողն էր՝ սակավ բուսականությամբ և քարքարոտ: Ահա իրար վրա սանդուղքաձև թափթփված քարաժայռերը, ահա վերջապես նաև բարձրավանդակը…

Կատարվեց մի տարօրինակ բան: Հազիվ էր Նանարը նայել քարե սկուտեղին, որի մեջ հինգ տարի առաջ նստել էր՝ նախ մի Մամբրեի հետ, ապա մյուս, երբ իսկույն, միանգամից, հիշեց ամեն ինչ՝ ամենաչնչին մանրամասնություններով: Հիշեց իրեն, իր նստած դիրքը, իր խոսքերը, և ամոթի շառագույնը պատեց նրա դեմքը: Նստելով մի քարի վրա, նա երեսն առավ ձեռքերի մեջ:

— Օ՛յ, ի՜նչ խայտառակություն... Իսկապես, ի՜նչ տգեղն ու անկուլտուրական եմ եղել ես այն ժամանակ... Ինչպե՜ս պիտի նայեմ տղաների երեսին, մանավանդ՝ Շեկ Մամբրեի... Ինչպե՜ս էի չռվել-փռվել գետնի վրա՝ գորտի պես, ինչե՜ր էի դուրս տալիս…

Եթե Նանարն իմանար, որ քարե սկուտեղն այդպիսի տհաճ հուշեր պիտի արթնացներ նրա մեջ, նա ոչ մի դեպքում չէր բարձրանա այդտեղ: Մի՞թե դրանք իր խոսքերն են՝ «Երկուսիցդ մեկին կառնեմ անպայման, գնացեք եկեք՝ կտեսնենք...»: «Եկ էսպես անկուլտուրական–անկուլտուրական սիրենք իրար...»: Ամո՛թ... Խայտառակությո՛ւն…

Չնայած իր շփոթությանը, Նանարը բարձր ծիծաղեց երբևէ արտասանած իր խոսքերի վրա:

— Սպասիր,— մտածեց նա՝ բավական զվարթացած,— այսպե՞ս էի նստել…

Նա փորձեց ընդունել անճոռնի դիրք և նորից ծիծաղեց իր արարքի վրա:

— Ավելի ճիշտ՝ այսպես... Օ՛յ, ամոթ քեզ... Մի՞թե դա ես եմ եղել: Իսկ Մամբրեն նստած էր այստեղ: «Նստիր կողքիս, անգութ-անջիգյար, խո չե՞մ ուտի քեզ...»: Ինչպիսի՛ ստորացում... Ոչ, ես այլևս չեմ հանդիպի Շեկ Մամբրեին: «Լավ եմ անում, որ կոպիտ եմ խոսում հետդ, բա ի՞նչ ես կարծում, իմ կյանքի հարցն է վճռվում...»: Ի՛նչ գռեհկություն... Ոչ, ոչ, Սև Մամբրեին նույնպես, ես այլևս չեմ հանդիպի…

Մի պահ մտածելուց հետո նա մխիթարեց իրեն.

— Մոռացած կլինեն:

Ապա, ևս մի պահ հետո.

— Որտեղի՞ց: Իսկ դո՞ւ ուրեմն ինչու չես մոռացել…

Կես ժամի չափ այդտեղ նստած, Նանարը մտածում էր և վերհիշում, երբ լսեց լանջով վերև մագլցող ինչ-որ մեկի հանած աղմուկը, և ցատկեց ոտքի:

Քարափի պռունկին կանգնած էր Մամբրե Բլանցը:

— Գեղեցկուհի Նանա՞ր...— ապշեց նա:— Դո՞ւք…

— Մի՞թե դուք չպառկեցիք հանգստանալու,— հարցրեց Նանարը շփոթված:

— Այո: Այսինքն՝ այդպես ստիպեցին տանտերն ու տանտիրուհին: Ծերունի, ճանապարհ եկած, հոգնած... Հիմարություն: Ես վեր կացա և ելա դուրս: Նրանք չտեսան, հայտնեցեք իմ ներողությունը Գալոյաններին:

— Մի՞թե դուք չեք վերադառնալու…

— Ոչ: Հարկավոր է պահպանել մասշտաբը: Աշխարհը մեծ է, Խուտուտը՝ փոքր: Մի ժամը լիուլի հերիք էր նրան: Եվս մի կես ժամ՝ այս բարձրավանդակին: Ի՞նչ շերտերից է բաղկացած: Դուք պատահաբար երկրաբանական կրթություն չունե՞ք:

— Ոչ, մանկավարժական:

— Ցավալի է: Իսկ ուրեմն ինչո՞ւ եք բարձրացել այստեղ: Ներեցեք հարցիս համար:

— Երևան պիտի գնամ:

— Ուղեկիցներ ենք: Բայց մի՞թե այս կողմով է ճանապարհը:

— Ոչ: Ես ուզում եմ հասնել մինչև բենզինի կետը, ընկեր Բլանց: Զբոսանքի համար:

— Զբոսանք: Քարերի մեջ: Դուք երկրաբանի ջիղ ունեք, գեղեցկուհի Նանար:

— Դժբախտաբար այդպես չէ, ընկեր Բլանց: Նստեցեք, ինչո՞ւ չեք նստում:

— Ոչ, ոչ, նախ պետք է նայել շրջակայքի քարերին: Ես չէի ենթադրում, թե դրանց մեջ ադամանդ կա:

— Ադամա՞նդ...— սառեց Նանարը:

— Այո: Դուք:

— Շնորհակալություն,— ժպտաց աղջիկը:— Որքան անհեթեթ է կոմպլիմենտը՝ այնքան ավելի լավ:

— Այո...— մեքենայորեն համաձայնեց ծերունին՝ այլև առանց ուշադրություն դարձնելու աղջկա վրա: Նա նայում էր իր ոտքերի տակ՝ քարերին: Կռացավ, վերցրեց մի քարակտոր, շուռումուռ տվեց: Վերցրեց մի ուրիշ քարակտոր, խփեց դրանք իրար, ջարդեց, նայեց կոտրվածքին: Նանարը լարված հետևում էր նրա շարժումներին:

— Դատարկություն: Գնա՞նք:

— Կարելի է գնալ,— ասաց Նանարը:

— Ուրեմն կարելի է և չգնա՞լ: Դեռ շո՞ւտ է: Այդ դեպքում ներեցեք ինձ: Ոչ, ոչ, դուք նստեցեք: Ես իսկույն…

Հոտմտելով քարերը, Մամբրե Բլանցն սկսեց շրջել քարափով և բավական հեռացավ աղջկանից:

Նանարը, նորից սկուտեղի մեջ նստած, զվարճությամբ նայում էր երկրաբանի ետևից՝ մինչև որ նա անհետացավ: Ոչ, ինչո՞ւ, այնքան էլ վատ մարդ չի երևում Մամբրե Բլանցը: Ավելի շուտ՝ նա լավ մարդ է: Նույնիսկ շատ լավ: Միայն թե ունի տարօրինակություններ՝ ինչպես երևի բոլոր գիտնականները և ծերունիները. ավելի շուտ՝ գիտնական ծերունիները: Մի՞թե մյուս Մամբրեներն էլ պիտի դառնան այդպիսին: Չեկան... Բայց ոչինչ, կգան, այժմ արդեն շատ չի մնացել: Հետաքրքիր է, ինչպիսի՞ն են նրանք հիմա: Եվ ինչպե՞ս պիտի գտնեն Նանարին…

Ինչ էլ որ լինի՝ Նանարը շնորհակալ է Շեկ Մամբրեից՝ նրա դաժան քննադատության համար: Տղաների մեկնելուց հետո նա մի քանի գիշեր լալիս էր վիրավորանքից: Նա այնքան լացեց, որ վերջապես որոշեց ստանալ բարձրագույն կրթություն: Գնաց Երևան, ընդունվեց մանկավարժական ինստիտուտ, սովորեց չորս տարի, ավարտեց: Ինստիտուտը նրան տվեց ընդհանուր կրթություն ու գիտելիքներ, չորս տարվա կյանքը Երևանում՝ կուլտուրա: Մինչև հիմա նա չգիտեր, չէր մտածել այն մասին, թե որքան էր փոխվել, որքան տարբեր էր դարձել հիմիկվա Նանարը երբեմնի Նանարից: Իսկ այսօր նա հիշում է և հստակ համեմատում: Դե թող վերադառնա Շեկ Մամբրեն, տեսնենք Նանարի ի՛նչն է քննադատելու նա հիմա:

Երևանում տղաների ամբողջ հանրակացարանը սիրահարված էր Նանարի վրա: Իհարկե, նաև մյուս աղջիկների վրա, բայց Նանարի՝ գլխավորապես:

Այո, լավ չէ, երբ աղջիկն ինքն էլ է հպարտանում իրենով, բայց ինչպե՞ս կարող է Նանարն այլ կերպ: Չէ՞ որ նա այսօր հիշում է նախկին Նանարին և տեսնում է հսկայական տարբերությունը…

Եղավ մի ժամանակ, երբ նա մոռացավ երկու Մամբրեներին էլ: Այսինքն՝ ոչ թե մոռացավ, այլ դադարեց նրանցով շահագրգռված լինելուց: Ճիշտ են ասում, որ ժամանակը շատ բան է մաշում և ջնջում: Սև Մամբրեի սերը Նանարի նկատմամբ և Նանարի սերը Շեկ Մամբրեի նկատմամբ

թվացին անցած-ավարտված պատանեկության հուշեր: Դրանք այլևս չէին խանգարում աղջկան՝ երբեմն-երբեմն փոխադարձաբար պատասխանելու նրա վրա սիրահարված տղաներից մեկն ու մեկին: Նրանցից մեկը, հատկապես, շատ էր դուր գալիս աղջկան և Նանարն ինքն էլ կարգին սիրահարված էր նրա վրա: Տղան առաջարկել էր նրան ամուսնանալ: Մոտ մի տարի նրանք մտերիմներ էին, միշտ լինում էին միասին և հենց որ մնում էին մենակ՝ սկսում էին համբուրվել: Բայց նրանք չամուսնացան: Նանարը մերժեց նրան: Տղան մինչև վերջն էլ չհասկացավ, թե ինչու:

Ծանր է այդպիսի բան ասել, բայց մայրը Նանարի կյանքի ամենամեծ դժբախտությունն էր... Նա համարյա ատում էր մորը... Բայց ինչպե՞ս կարելի է ատել մորը... Իհարկե, Նանարը սիրում էր նրան, բայց և միաժամանակ ատում նրա համառությո՞ւնը, հետամնացությո՞ւնը թե ինչը…

Նանարի Երևանում սովորելու չորս տարիներին նրա մայրը խիստ պառավել էր՝ ոչ միայն տարիքից, այլև աղջկա կարոտից: Ճիշտ է, բոլոր ամառներն աղջիկն անց էր կացրել գյուղում, իսկ սովորելու ամիսներին համարյա ամեն կիրակի եկել էր մորը տեսության, բայց այդ ամենը շատ քիչ էր մխիթարել մորը: Նա գիշեր-ցերեկ երազել էր և սպասել այն օրվան, երբ աղջիկը կավարտեր, կգար գյուղ և նրանք նորից կապրեին միասին:

Երրորդ տարում մահացավ աղջկա պապը, այսինքն՝ մոր սկեսրայրը, որին մայրը սիրում էր հարազատ հոր պես: Դրանից հետո խեղճ պառավը մնաց բոլորովին մենակ: Նանարն առաջարկեց նրան տեղափոխվել քաղաք, իր մոտ:

Ահա այդտեղ պարզվեց մի չափազանց տհաճ, ուղղակի կարելի է ասել՝ ճակատագրական հանգամանք: Պառավն անսպասելի վճռականությամբ հայտարարեց, որ ոչ մի տեղ չի գնա իր հայրենի Խուտուտից, չի գնա թեկուզև մի շաբաթով, ո՛ւր մնաց՝ մշտական բնակության:

Սկզբում Նանարին թվաց, թե դա ժամանակավոր կամակորություն է մոր կողմից: Սկսեց համոզել: Անցան ամիսներ, անցավ մի տարի, աղջիկն արդեն ավարտում էր ինստիտուտը: Վերջապես նա համոզվեց, որ անհնար է կոտրել մորը:

Պառավը եսասեր կին չէր, նա խնդրում էր աղջկան՝ թողնել նրան մենակ և գնալ ապրել ուր որ նրա սիրտն է ուզում: Բայց Նանարի համար վճռված հարց էր, որ նա ոչ մի գնով չի թողնի իր մորը մենակ: Չի թողնի ոչ միայն նրա համար, որ սիրում է նրան, այլև թեկուզ տարրական մարդասիրությունից դրդված: Պառավն օր օրի կորցնում էր իր ուժերը, շուտով անընդունակ պիտի դառնար նույնիսկ ելումուտ անելու՝ առանց կողմնակի օգնության: Ինչպե՞ս կարելի էր թողնել նրան մենակ...

Տղան, որի վրա սիրահարված էր Նանարը, բոլորովին դեմ չէր, որ աղջկա մայրն ապրեր նրանց հետ: Բայց նա չգիտեր, որ դրա համար հարկավոր պիտի լիներ ապրել Խուտուտում և ուրիշ ոչ մի տեղ: Նանարը չէր ուզում ասել նրան այդ մասին, համոզված լինելով, որ տղան չէր կատարի այդպիսի զոհաբերություն: Տղան գուցե և կատարեր, բայց աղջիկը ոչ մի դեպքում չէր կարող ընդունել դա նրանից:

Նրանք բաժանվեցին: Որոշ ժամանակ անց տղան ամուսնացավ մի ուրիշ ուսանողուհու հետ՝ լավ աղջկա, և հիմա նրանք ապրում էին գոհ ու երջանիկ:

Նանարն սկսեց համարյա ատել Խուտուտը, այդ ողորմելի խորշը, որն այդպես ստրկացրել, առհավետ իր հետ էր կապել պառավին:

Բայց մի՞թե մեղավոր էր Խուտուտը: Մեղավորը, իհարկե, հետամնացությունն էր ընդհանրապես, անցյալի ծանր ժառանգությունը…

Նանարի մեջ այդ հետամնացության հանդեպ կուտակվեց մեծ ատելություն և զայրույթ, որը նա թափում էր իրեն սեր բացատրող անմեղ տղաների վրա: Նա կտրուկ, նույնիսկ կոպիտ մերժում էր նրանց՝ հաստատ իմանալով, որ քանի կենդանի է իր մայրը՝ չկա նրա համար երջանկություն:

Ավարտելով ուսումը, Նանարն ստիպված եղավ վերադառնալ գյուղ և աշխատել գյուղի փոքրիկ դպրոցում որպես ուսուցչուհի: Նա սիրում էր այդ գործը, որովհետև սիրում էր երեխաներին: Միաժամանակ նա գոհ էր, որ մայրն իրեն զգում էր երջանիկ: Աղջիկը նվիրվածորեն հոգում էր այն մասին, որ երկար լիներ նրա կյանքը, և թեև գիտեր, որ դրա հետ միասին երկար էր լինելու նաև իր երջանկության սպասումը…

Նանարի միակ մխիթարությունն այն էր, որ նա այժմ անհամբեր սպասում էր Մամբրեներին: Նրանք այժմ նորից մեծ տեղ էին գրավում նրա մտքերի ու երազանքների մեջ: Նա նույնիսկ ուրախ էր, որ նրան չէր հաջողվել ամուսնանալ ուրիշի հետ: Ինչպե՞ս կարելի էր հուսախաբ անել Սև Մամբրեին, որը սիրում էր նրան, և չսպասել Շեկ Մամբրեին, որին սիրում էր նա ինքը՝ առաջին, ամենաուժեղ սիրով…

Հարկավոր է հենց հիմա գնալ քաղաք՝ հենց թեկուզ նրա համար, որպեսզի տեսնի, թե նամակ կա՞ արդյոք Մամբրեից, գուցե և երկուսից…

Նանարն սթափվեց, նայեց ժամացույցին: Պետք է վեր կենալ: Նա նայեց շուրջը: Որտե՞ղ է երկրաբանը: Ահա նա գալիս է: Կարիք չկա ետ գալու, նրանք հենց այդ կողմ պիտի գնան:

— Ընկեր Բլանց, սպասեցեք ինձ,— ձայն տվեց նա:

Ծերունին լսեց, կանգ առավ:

Նանարը մոտեցավ նրան:

— Արդեն ժամանա՞կն է, գեղեցկուհի Նանար:

— Այո: Գնանք:

— Տվեք ձեր թևը:

— Շնորհակալություն: Ասացեք, ընկեր Բլանց, դուք է՞լ եք հանք փնտրում մեր գյուղի մոտերքում:

— Ես ամեն տեղ եմ փնտրում, աղջիկս:

— Եվ ի՞նչ գտաք այսօր:

— Դատարկություն: Բայց այսպես չեն փնտրում: Հարկավոր է հետախուզել:

— Դուք մտադի՞ր եք:

— Ոչ:

— Ինչո՞ւ:

— Դատարկություն է: Շանսեր չկան: Դա իսկույն երևում է: Ի միջի այլոց՝ թող փնտրեն ուրիշները՝ ավելի երիտասարդները: Թող հերքեն ծերունուս: Ես ուրախ կլինեմ:

— Ուրեմն ոչի՞նչ չկա մեր գյուղի մոտերքում...— Նանարը նույնիսկ կանգ առավ:

— Իսկ ձեզ ի՞նչ է հարկավոր, շողշողուն ադամա՞նդ,— հարցրեց ծերունին՝ սպասարկելու պատրատակամությամբ:— Ոսկի՞ եք ուզում՝ շրջանակվելու համար: Կգտնվի երկրի որևէ այլ մասում, դա միևնույնը չէ՞ ձեզ համար: Հայաստանի գիտությունների ակադեմիան հենց ոսկի գտնելու համար է հրավիրել ինձ: Միայն թե՝ ոչ շեկ, այլ սև: Ո՞րն է ձեզ համար ավելի սիրելի՝ սև՞ը, թե շեկը…

— Ինչ ասացի՞ք,— ցնցվեց Նանարը:

— Ես ձեզ հարցրի, շողշողուն ադամա՛նդ, թե ի՞նչ կերպ կուզենայիք փայլել՝ սևի՞ զուգորդությամբ, թե շեկի:

— Տեսնենք,— ժպտաց աղջիկը խորմանկ,— դա շուտով կպարզվի:

Մամբրե Բլանցը չհասկացավ նրան:

Թևանցուկը, որ արել էր Մամբրե Բլանցը Նանարին, հարկ եղավ թողնել համարյա իսկույն: Քարքարոտ բարձրավանդակով չէր կարելի նույնիսկ երկու քայլ կատարել միասին: Նրանցից յուրաքանչյուրն ըստ իր հայեցողության և կարողությունների ընտրում էր իր ճանապարհը, բարձրանում և իջնում քարերի վրա կամ շրջանցում դրանք: Ճիշտ է, ծերունի երկրաբանն ամեն քայլափոխին օգնում էր աղջկան:

Դա այն ճանապարհն էր, որով մի օր անցել էին Մամբրեները՝ գյուղից մեկնելիս: Նանարը մտածում էր այդ մասին: Շուտով նա հոգնեց, բայց աշխատում էր չարտահայտել այդ: Իսկ ծերունի երկրաբանը, իր կյանքում հազար ու մի այդպիսի վայր տեսած և ոտքի տակ առած, քայլում էր՝ ինչպես իր տանը: Նրա գետրիները փայլում էին ամեն անգամվա պես նոր ու ողորկ, իսկ կիսակոշիկները քերծված էին և գունաթափ՝ դարձյալ ամեն անգամվա պես: Ետևից նայելիս նա նման էր բավական աշխույժ երիտասարդի, ճիշտ է, խիստ նիհար:

Որտե՞ղ էր բենզինի կետը... Ճի՞շտ էին գնում նրանք արդյոք: Նանարը ոչինչ չգիտեր, նա միայն մոտավորապես էր հիշում այն ուղղությունը, որով մի օր գնացել էին երկու Մամբրեները:

Բավական ժամանակ քայլում էին նրանք, երբ Բլանցը բացականչեց.

— Շտապեցեք, Նանար, ավտոբուսը…

Թողնելով աղջկան, նա վազեց առաջ՝ ավտոբուսը պահելու համար:

Նանարը նայեց զարմացած: Ոչ թե ուղղակի դիմացը, այլ մի քիչ կողմ, քարերի ետևից երևում էր ավտոբուսի գորշ կտուրը և կարմիր կողի ամենավերին նեղ մի շերտ: Ճանապարհը գտնվում էր փոս տեղում:

Մի քանի քայլ հետո աղջիկը հասավ ճանապարհի եզրին: Նրա ոտքերի տակ ձգված էր ասֆալտի բավական լայն ժապավենը՝ մեքենաների երթևեկությունից մաքրված ու սև: Մյուս կողմում ևս փռված էր քարաստանը: Ճանապարհը կարծես ասֆալտած նեղ կիրճ լիներ երկու պատերի միջև: Դիմացի պատը մի տեղում մի քիչ ետ էր գնացել կիսաշրջանաձև՝ ստեղծելով գետնի վրա մի

կիսակլոր հարթակ, որտեղ կանգնած էր բենզինի կետը: Դա մի տնակ էր, իսկ դրա առջևում՝ բենզին բաց թողնող վառ կարմիր սյունիկը՝ սպիտակ թվացույցով ու սլաքով:

Երբ երկրաբանն ու աղջիկը մտան ավտոբուս, մի երիտասարդ իսկույն վեր կացավ և տեղ առաջարկեց ծերունուն: Բայց ծերունին, երիտասարդ կավալերի զգոնությամբ, տեղը զիջեց աղջկան: Նանարը չուզեց նստել: Վեր կացավ նաև մի ուրիշ երիտասարդ:

— Նստեցեք, նստեցեք,— ուսերից բռնելով, վար ձգեց նրան Մամբրե Բլանցը:

— Միևնույնն է, մենք արդեն հասնում ենք, շուտով պիտի իջնենք,— ժպտաց երիտասարդը:

— Դուք Խուտո՞ւտ եք գնում,— հետաքրքրվեց ծերունին՝ նստելով Նանարի կողքին:

— Ի՞նչ Խուտուտ,— զարմացավ երիտասարդը:

— Ոչ, Խնկանոս ենք գնում,— ասաց մյուս երիտասարդը, ապա բացատրեց ընկերոջը:— Դու չգիտես Խուտուտը: Գյուղի նման մի բան է: Հիմա կերևա:

Եվ, իրոք, շուտով ավտոբուսը դուրս եկավ այն լիցքի վրա, որը Խուտուտը և դրա դիմացի բարձրավանդակները կապում էր իրար: Երկրաբանն ու աղջիկը նստած էին ավտոբուսի այն կողմում, որը նայում էր ոչ թե դեպի Խուտուտի ձորակը, այլ լիցքի մյուս կողմը, որտեղ ձորակը վերածվում էր ընդարձակ հովտի և ուներ ծառեր, թփեր, հարուստ բուսականություն: Բայց տարվա այդ եղանակին շոգից ու երաշտից չորացել էին բոլոր թփերը և համարյա դեղնել ծառերը: Հովիտը երևում էր բավական տարածության վրա, բայց այնտեղ չկային բնակավայրեր:

— Նույնն է: Կարծես չեմ հեռացել...— չգիտես ափսոսանքո՞վ թե բավականությամբ, ասաց երկրաբանը կամացուկ:

Երեսը շուռ տալով մյուս կողմ, նա նայեց Խուտուտի ձորակին, որն արդեն մնացել էր ետևում:

— Դուք կարոտե՞լ էիք գյուղին,— հետաքրքրվեց Նանարը:

— Ոչ,— հառաչեց ծերունին:— Այսինքն՝ ամբողջ կյանքումս ես չէի էլ հիշում այն, բայց երբ գալիս էի Հայաստան՝ հիշեցի և զգացի, որ կարոտել եմ:

— Եվ դուք ընդամենը մի ժամ մնացիք այնտեղ…

— Բավական է: Եթե ստիպի որևէ գործ՝ կվերադառնամ: Իսկ այնպես՝ ոչ: Դուք ռոմանտիկ եք, գեղեցկուհի Նանար:

Խնկանոս գնացող երիտասարդները, որ կանգնած, անթարթ հիացմունքով նայում էին Նանարին, սթափվեցին, հառաչեցին — հարկավոր էր իջնել: Ավտոբուսը կանգ առավ Խնկանոսում, երիտասարդներն իջան, իջան նաև մի քանիսը, իսկ դրանց փոխարեն բարձրացան մի տասնյակից ավելի մարդիկ: Նրանք լցրին ամբողջ միջանցքը, փակեցին մյուս թևի վրա գտնվող տեսարանը:

Ավտոբուսն անցավ բավական մեծ գյուղի միջով՝ կառուցված հարթ տարածության վրա: Ջրի պակասությունն զգացվում էր նաև այդտեղ, գյուղը համարյա զուրկ էր ծառերից: Բայց նա չէր թողնում վատ տպավորություն: Ասֆալտած փողոցի վրա կանգնած էին զանազան գույնի քարերից կառուցված շենքեր, երբեմն նույնիսկ երկհարկանի: Հատող փողոցների վրա, որոնք ասֆալտապատված չէին, բայց դարձյալ բարեկարգ, կանգնած էին հին տիպի տներ՝ չերեսպատված քարից, բայց նույնպես կանոնավոր ու վայելուչ:

Ավտոբուսը կտրեց անցավ փողոցների մի աշխույժ խաչկետ՝ անկյունային խանութներով և մի փոքրիկ այգով: Մյուս թևի վրա գյուղի հրապարակն էր՝ գյուղխորհրդի շենքով և Լենինի արձանով: Բայց մարդիկ պատնեշել էին լուսամուտները, ոչինչ չէր կարելի տեսնել այդ կողմում: Նանարը երկրաբանին ցույց էր տալիս երևացող շենքերը և տալիս բացատրություններ, իսկ չերևացողների մասին պատմում էր: Կարևո՞ր էր երկրաբանին իմանալ այդ ամենի մասին թե ոչ՝ նա չէր մտածում: Դա կարևոր էր նրա՝ Նանարի համար, ինչպես և ամեն մի խուտուտցու: Խնկանոսի ամեն մի նորակառույց լցնում էր նրանց սիրտը նախանձի թախիծով:

— Հիմա մենք անցնում ենք արթեզյան ջրհորի մոտով: Դա մյուս թևի վրա է: Ճիշտ է, ջուր դեռ դուրս չի եկել, բայց շարունակում են փորել: Իսկ այստեղ կառուցում են կոլեկտիվ տնտեսության նոր պահեստը, որը...

— Սպասեցեք: Արթեզյան ջրհոր: Դա շատ լավ է: Հույս ունեմ, որ զուգահեռաբար նաև մանրամասն ուսումնասիրում են շերտերը: Նախապես կայի՞ն տվյալներ, թե՞ փորում են կուրորեն:

— Դա չգիտեմ,— ժպիտով խոստովանեց աղջիկը:

— Այդքան փոքր ռեսպուբլիկա եք, այդքան տաղանդավոր ժողովուրդ,— հանդիմանությամբ սկսեց Բլանցը, ասելով՝ «եք», և ոչ թե «ենք»,— ունեք այդքան շատ գիտական կադրեր, բայց ամբողջ ռեսպուբլիկայի երկրաբանական մանրամասն քարտեզ դեռ չունեք: Անթույլատրելի է՝ փոքրիկ Հայաստանում սպիտակ կետեր…

Նանարը՝ լիքը և փարթամ աղջիկ, որն ակամայից գրավել էր նստարանի համարյա երեք քառորդը՝ նիհար ծերունու համար թողնելով միայն մի քառորդը, խայթվածի նման շուռ եկավ դեպի նա և իր խոշոր, չափից ավելի խոշոր աչքերի նախատական խոր հայացքը հառելով երկրաբանի վրա, ասաց.

— Գիտե՞ք ինչ, ընկեր Բլանց…

Նա լռեց՝ ամաչելով իր տոնի չորությունից, պաուզա տվեց և ասաց ավելի հանգիստ.

— Զանազան մարդկանց պատճառով, որոնց մասին դուք ևս լավ պիտի իմանաք, մեր տնտեսության շատ բնագավառներ զարգացել են ավելի դանդաղ, քան կարող էին: Իսկ դուք…

— Ես ձեզ չեմ մեղադրում, ես ձեզ չեմ մեղադրում, հայրենասեր օրիորդ,— երկու չորուկ ձեռքերն օդում հին ձևով թափ տալով, ժպտաց ծերունին:

— Նույնը և գյուղատնտեսությունը,— շարունակեց աղջիկը:— Տեսնո՞ւմ եք, դուք մի ժամ էլ չկարողացաք մնալ Խուտուտում, իսկ մենք այնտեղ ապրում ենք ամբողջ մեր կյանքը:

— Հաշտություն, հաշտություն,— նորից ժպտալով, չորուկ ձեռքն աղջկա լիքը ձեռքի վրա դրեց ծերունին:— Ես լիովին հասկանում եմ ձեզ, գեղեցկուհի Նանար: Ես զգում եմ, որ ձեր հանդիմանությունն իր մի ծայրով կպչում է նաև ինձ, չէ՞ որ ես ոչնչով չեմ օգնել ձեզ, այսինքն՝ մեզ: Բայց, հաշվի առեք, ես Հայաստանից հեռացել եմ դեռ հեղափոխությունից առաջ: Այսինքն՝ հեղափոխությունը Ռուսաստանում արդեն կատարված էր, իսկ Հայաստանում՝ ոչ: Ասո՞ւմ է դա ձեզ որևէ բան…

Նանարը չպատասխանեց, նա լրիվ չէր հասկանում նրա ասածի իմաստը:

— Ասո՞ւմ է դա ձեզ որևէ բան, օրիորդ,— անսպասելիորեն խիստ ձայնով, բայց կամացուկ, որպեսզի չգրավի ուղևորների ուշադրությունը, կրկնեց Մամբրե Բլանցը:— Չե՞ք հասկանում: Հայաստանն այն ժամանակ ինձ համար հայրենիք չէր, այստեղ դաշնակներն էին: Ես գնացի Ռուսաստան՝ սովորելու և ծառայելու հեղափոխությանը: Իսկ հետո՝ երբ արդեն կարող էի վերադառնալ, հասկացա, որ մինչև չվերականգնվեն ու զարգանան Ուրալը, Դոնբասը, Պետրոգրադը, Մոսկվան, չի կարող լայն ուղու վրա կանգնել նաև Հայաստանը: Ի՛մ Հայաստանը,— կրկնեց նա շեշտելով:

— Ինչո՞ւ համար եք ասում ինձ այդ բոլորը,— կամացուկ հարցրեց Նանարը:

— Ես դա ձեզ չեմ ասում, այլ Արփիարին: Բարի եղեք հաղորդել դա նրան: Նա ինձ վիրավորեց հանդիպման հենց առաջին րոպեին: Այո, այո, մի՛ զարմանաք: Նա ասաց՝ «բարի եկաք, վերջապես»: Հասկանո՞ւմ եք, նա ասաց՝ «վերջապես»: Կարծես ես պարտավոր էի վերադառնալ Խուտուտ և ուշացել էի: Նա ինձ հանդիմանեց: Այո, այո, դուք իզուր եք ծիծաղում, Նանար, ես դա չեմ ներում ձեզ, թեկուզև դուք գեղեցկուհի եք: Ես ձեզ էլ եմ հասկանում: Ուզում եք ասել՝ «ծերացել է Մամբրե Բլանցը, դարձել է մրթմրթան»: Այո, այո: Ներեցեք, իսկ սա՞ ինչ գյուղ է: Կա՛մ մոռացել եմ, կա՛մ, այո, այո, սա առաջ այստեղ չկար…

5

Լավ էր, որ քաղաք հասնելուն պես և Մամբրե Բլանցին հրաժեշտ տալուց հետո Նանարն անմիջապես գնաց փոստ: Նամակ չկար, բայց նրան տվեցին մի հեռագիր: Հետաքրքրված, բայց առանց շտապելու, նա բաց արեց հեռագիրը: Հազիվ էին նրա աչքերը հանդիպել հակիրճ խոսքերին, երբ նա արագ նայեց ժամացույցին և դուրս վազեց փոստից:

Մամբրեն գալիս է... Սև Մամբրեն: Գնացքի ժամանելուն մնացել է ընդամենը քսան րոպե: Մամբրեն գալիս է... Ա՜յ քեզ զուգադիպություն, ա՛յ քեզ խելահեղ օր…

Կանգնեցնելով իր մոտով անցնող մի տաքսի, Նանարը նստեց և խնդրեց քշել՝ որքան կարելի է արագ: Նա անդադար, նայում էր ժամացույցին — ոչ մեքենայի մեջ ամրացվածին, որովհետև դա ճիշտ չէր աշխատում, շտապում էր — այլ իր ժամացույցին: Ի՜նչ վայրենին է այդ միլիցիոները, կանգնեցրեց շարժումն այդ փողոցով և ճանապարհ է տալիս հատող փողոցին: Իսկ վարորդն արմունկը դնելով ղեկանվին, երեսը հենեց ձեռքին՝ կարծես ինչ-որ խոր վշտի մեջ, սպասում է՝ առանց շտապելու, միանգամայն հանգիստ: Վերջապես շարժվեցին: Կորցրին ուղիղ երեսուն վայրկյան…

Վարորդի դիմաց՝ գլխավերևում ամրացված փոքրիկ հայելու մեջ, Նանարը տեսավ վարորդի աչքերը: Երիտասարդը նայում էր աղջկան: Հարկավոր է ուշադրություն դարձնել իր կեցվածքի, դեմքի արտահայտության, ամեն ինչի վրա. նա մենակ չէ, նրան նայում են...

Նանարը հպարտությամբ նկատեց, որ իրեն կարգի բերելու առանձնապես հարկ չունի.— ինչպես մարդկանց ներկայությամբ, այնպես էլ մենակության մեջ, ինչպես հանգիստ ժամանակ, այնպես և հուզված վիճակում, նա հավաքված է, կիրթ, և, իհարկե, գեղեցիկ... Կուլտուրան, ինչպես Շեկ Մամբրեն էր ասել մի օր, այնպես խորն էր մտել Նանարի էության մեջ, որ դարձել էր բնավորության պես մի բան: Ափսոս, որ գալիս է Սև Մամբրեն և ոչ թե Շեկը: Բայց ոչ, Նանարը վշտացած է Շեկ Մամբրեից: Երեք-չորս ամիս լինել Երևանում և գոնե երկտող չգրել իր մանկության ընկերուհուն: Շա՜տ հարկավոր է նա: Սև Մամբրեն մի քանի անգամ գրել էր իր նամակներում, որ իր ընկերն ու ախոյանն անտարբեր չէ ուսանողուհիներից ոմանց նկատմամբ: Առավել ևս նա հարկավոր չէ

Նանարին: Ինչո՞վ է Սև Մամբրեն Շեկից պակաս: Նանարը համարյա սիրում է Սև Մամբրեին: Ճիշտ են ասում, որ ուժեղ զգացմունքը վերջ ի վերջո առաջացնում է փոխադարձ զգացմունք, իսկ սառնությունը՝ սառնություն: Հա, ժամացույցը... Մնացել է երեք րոպե, իսկ կայարանին հասնելու դեռ կա երկու կվարտալ: Ախ, զզվելի միլիցիոներ, նորից կասեցրեց շարժումը: Իսկ այդ հիմարը նորից թևը դրեց ղեկանվին և գլուխն առավ ձեռքի մեջ: Սուտ է, ոչ մի վիշտ էլ չունի, պարզապես օգտվելով ընդմիջումից, փոքրիկ հայելու մեջ նայում է Նանարին: Բայց նրա աչքերը գեղեցիկ են…

Գնացքն արդեն ժամանել էր: Կառամատույցից դուրս էր գալիս մարդկանց հոսանքը՝ ճամպրուկներով և դիմավորողների նվիրած ծաղկեփնջերով: Շտապ վճարելով վարորդին և չսպասելով դրամի մանրին, Նանարը վազեց դեպի կառամատույցի մուտքը: Ախ, հարկավոր է տոմս վերցնել կառամատույցի համար, այսօր ամեն բան թարս է գնում դիտմամբ, Նանարին ուշացնելու համար:

— Նանա՛ր…

Վայելուչ հագնված մի բարձրահասակ երիտասարդ, թևի վրա գցած թեթև վերարկուն արագ դրեց իր կողքի ճամպրուկի վրա և նետվեց դեպի Նանարը: Մինչև աղջիկը կսթափվեր, բարձրահասակ երիտասարդը գրկեց նրան և ամուր համբուրեց նրա շրթունքները:

— Նանար... Նանար...

Ֆետրե թեթև շլյապա դրած, սպիտակ մաշկով, որի վրա ավելի սև էին երևում նրա աչքերը, նիհարած և առնականացած, բայց և միաժամանակ ինտելիգենտացած, Նանարին էր նայում համարյա անծանոթ մի դեմք: Բայց դա Սև Մամբրեն էր:

Նանարն իր փոքրիկ պայուսակից հանեց թաշկինակը, թեթևակի ձգվեց վեր և սկսեց սրբել երիտասարդի շրթունքների մոտերքը, որ կարմրել էին շրթնաներկից:

— Դա հենց նոր, քրոջս հետ համբուրվեցի:

— Նա այստե՞ղ է,— անախորժությամբ շուրջը նայեց Նանարը: Ուրեմն նա տեսավ, թե ինչպե՛ս եղբայրը համբուրեց աղջկան…

— Գնաց տաքսի բերելու: Այս ի՛նչ ես դարձել, Նանար... Գեղեցկուհի: Աննման գեղեցկուհի: Ես հիշում էի, իհարկե, որ դու գեղեցիկ էիր, բայց որ դարձել ես այսպիսին՝ չէի էլ երազում…

— Վերջ տուր, լսում են,— շշնջաց Նանարը:— Ինչպե՞ս ես:

— Ինչպե՞ս ես տեսնում,— ժպիտով հարցրեց երիտասարդը:

Նանարը լուռ, ուշադիր, սկսեց նայել Մամբրեին: Ոչ, դա խուտուտցի այն պարզունակ տղան չէր, որին գիտեր Նանարը: Նա հազիվ թե դուր գար աղջկան: Կանգնած էր ոչ միայն շքեղ կոստյումով, հիանալի հագնված, այլև այնպիսի կիրթ երիտասարդ, կարծես նա ծնվել, մեծացել և ամբողջ ժամանակ դաստիարակվել էր մեծ քաղաքներում, տոհմական ինտելիգենտ ընտանիքում: Նանարն այժմ նրա մեջ տեսնում էր ինչ-որ հաճելի օտարություն: Այո, այդպիսի տղայի հետ կարելի է ֆլիրտ անել, համբուրվել և, եթե ուժեղ սիրահարվես՝ նույնիսկ ամուսնանալ: Տես ինչպե՛ս է պահում իրեն, ինչպե՛ս է շարժվում... Երևի նաև հետաքրքիր զրուցակից է…

Նայելով նրան, Նանարը հանկարծ գիտակցեց ինքնիրեն՝ ինչպես որ կար նա հիմա, և հպարտությունն ուռցրեց նրա առանց այն էլ ուռուցիկ կուրծքը: Երիտասարդի աչքերի մեջ նա

կարդաց, որ ինքը նույնպես, խուտուտցի նախկին աղջիկը չէ, այլ բոլորովին ուրիշը, այնպիսի լավը և հետաքրքիրը, ինչպիսիք ուշադրության և հիացմունքի առարկա կարող էին լինել նաև այնտեղ՝ հեռավոր Մոսկվայում, որտեղ այդքան տարիներ ապրել էր երիտասարդը և որով այժմ չափվում է ամեն լավ բան, որին հավասարվել է ձգտում ամեն մարդ և ամեն ինչ՝ մեր ընդարձակ հայրենիքում ծայրեծայր:

Քարափի գլխին երբևէ նստած խուտուտցի անպաճույճ տղան ու աղջիկն այլևս չկային, նրանց այլևս չէր կարելի գտնել ոչ մի տեղ: Նրանք մի օր հանդիպել և նստել էին քարափի գլխին, խոսել էին ինչ-որ բանի մասին, դա նրանց գործն էր, դա Մամբրեին ու Նանարին չէր վերաբերում: Այժմ իրար են հանդիպել մի ուրիշ երիտասարդ և մի ուրիշ աղջիկ:

— Շատ եք փոխվել,— ասաց աղջիկը զուսպ և հասարակ, անցնելով սակայն «դուք»-ի: Նա նույնիսկ չասաց, թե ինչպե՛ս է փոխվել երիտասարդը: Թող նա չերևակայի, թե աղջիկն իսկույն հիացավ նրանով:

— Իսկ ինչպե՞ս է ձեր տպավորությունը,— նույնպես անցնելով «դուք»-ի, հարցրեց երիտասարդը,— ե՞ս եմ ավելի փոխվել, թե Շեկ Մամբրեն:

— Շեկ Մամբրեն է՞լ է եկել,— ցնցվեց աղջիկը:

— Մի՞թե դուք դեռ չեք տեսնվել: Արդեն մի ամիս է, ինչ նա Հայաստանում է: Գիտարշավի մեջ է և կարծեմ գտնվում է ձեզանից ոչ այնքան հեռու: Դուք, իհարկե, Խուտուտո՞ւմն եք ապրում:

Աղջիկը չպատասխանեց: Խոր վիրավորանքը, նորից, ավելի ծանր, խոցեց նրա սիրտը: Ուրեմն այդպես, Շեկ Մամբրեն վերադարձել է և նորից չի ուզում տեսնել Նանարին: Շա՛տ հարկավորս է, թող չերևակայի, նա ինձ բոլորովին չի հետաքրքրում:

Սթափվելով, աղջիկը պատասխանեց սպանիչ անտարբեր տոնով Շեկ Մամբրեի հասցեին.

— Մի՞թե վերադարձել է: Չգիտեի: Սա ձեր քույրը չէ՞, որ գալիս է տաքսիով, ես նրան վաղուց չեմ տեսել: Նա քաղաքո՞ւմ է ապրում:

Մեքենայի դռնակը բացվեց, այնտեղից դուրս ելավ միջին տարիքի մի կին՝ դեռ միանգամայն գեղեցիկ, և տեսնելով աղջկան իր եղբոր հետ, արագ, մի վայրկյանում, նայեց երկուսին, ապա յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին, փորձեց հասկանալ, հասկացավ և ապա թաքցնելով իր հասկացածը, պարզասիրտ զվարթությամբ առաջացավ դեպի աղջիկը.

— Նանա՞ր... Սիրելիս... Գեղեցկուհի... Տեսնո՞ւմ ես, Մամբրե, թե ինչպես բարձր է պահում Խուտուտն իր մարկան: Դու կարծեմ մի ժամանակ Երևանո՞ւմ էիր սովորում, Նանար, ես քեզ մի ժամանակ շատ էի տեսնում այստեղ…

— Այո...— պատասխանեց աղջիկը ներքին տհաճությամբ, որովհետև հիշեց, որ Մամբրեի քույրը հաճախ էր տեսել նրան այն ուսանողի հետ, որի վրա Նանարը սիրահարված էր մի ժամանակ:

Երբ երեքով նստեցին ավտո, Մամբրեի քույրը վարորդին տվեց իր հասցեն:

— Այո,— համաձայնեց եղբայրը,— բայց մենք միայն կճաշենք քեզ մոտ և իսկույն կմեկնենք Խուտուտ…

— Ի՞նչ ունես Խուտուտում,— զարմացավ քույրը՝ ետ նայելով վարորդի կողքի նստելատեղից։— Մերոնք բոլորը քաղաքում են։

— Խուտո՛ւտ, Խուտո՛ւտ, ոչ մի խոսք։ Կարոտել եմ անչափ, անսահման։ Կիջևանեմ հորեղբորս տանը։

— Իսկ գիտե՞ք, Մամբրե,— հայտնեց աղջիկը,— երկրաբան Մամբրե Բլանցն էլ է եկել Հայաստան։ Նա այսօր գյուղումն էր։

— Երկրաբան Բլանցն ինձ չի հետաքրքրում, Նանար,— ձեռքը թափ տվեց Մամբրեն։— Բայց նա գյուղո՞ւմ... Ի՞նչ գործ ուներ... Ավելի լավ է՝ դուք պատմեցեք ձեր մասին, Նանար…

Քույրը նորից նայեց եղբորն ու աղջկան, նորից հասկացավ, նորից թաքցրեց իր հասկացածը և այլևս չխոսեց՝ մտքերով տարված։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1

Հայնե Խուտուտացին հաճախ էր լինում Խնկանոսում, համարյա ամեն կիրակի։ Նա գնում էր ոտքով և ընտրում էր այնպիսի ժամեր, որ ճանապարհի վրա ուրիշ մարդիկ չլինեին և չուղեկցեին նրան։ Նա սիրում էր մենակության մեջ խորհել շրջապատի մասին կամ մտքում հարդարել իր նոր ոտանավորների հանգերը։

Վաճառքի մեջ եղած ամենաէժան կիսակոշիկները ոտքերին, գունաթափ շալվարով, երկարափեշ սպիտակ վերնաշապկի վրա կապած գոտիով՝ ինչպես այդ անում էին երեսուն տարի առաջ, առանց գլխարկի, գյուղավարի առատ և գյուղավարի խուճուճ մազերով, Հայնե Խուտուտացին կարծես իր գյուղի մի բեկորը լիներ, որ ոտք էր առել և քայլում էր լեռնային Հայաստանի այդ ճանապարհով։

Նախորդ կիրակի նա չէր կարողացել գնալ Խնկանոս, որովհետև գյուղ էր եկել Հայաստան վերադարձած Սև Մամբրեն, և Հայնեն սիրով ուղեկցել էր նրան՝ գյուղով ու դրա շրջակայքով շրջելիս։

Գյուղական բանաստեղծի հոգին լցվել էր հպարտությամբ, որ բարձրագույն կրթություն ստացած, այդքան տարիներ Մոսկվայում ապրած այդ շքեղ երիտասարդը մնացել էր նախկին խուտուտցին և այժմ այնպիսի սիրով ու հուզմունքով էր դիտում Խուտուտի ամեն մի տնակը, անկյունը, քարը... Իսկ երբ Սև Մամբրեն, ավելի շուտ ինքն իր հետ խոսելով, քան դիմելով իրենից վեց տարով փոքր բանաստեղծին, հայտարարել էր հանդիսավոր կերպով, որ ինքն անպայման մի բան կգտնի մեր գյուղի մոտերքում ու զարկ կտա մեր գյուղի զարգացմանը, Հայնե Խուտուտացու գլխում միանգամից ծագել էր նոր բանաստեղծությունը՝ «Խուտուտն ու խուտուտցին» վերնագրով։

Այժմ, քայլելով դեպի Խնկանոս, նա մշակում էր դրա տողերը։ Ի՞նչ է Խուտուտն առանց խուտուտացու.— ոչինչ։ Իսկ ի՞նչ է խուտուտցին առանց Խուտուտի.— առավել ևս ոչինչ։ Վեր կաց, խուտուտցի, տուր ձեռքդ, գնա առաջ, որոնիր հանքը, ծաղկեցրու քո գյուղը... Հազար խուտուտների ծաղկեփունջ է Հայաստանն այսօր։ Խուտուտ է ամեն գյուղ։ Եվ եթե ամեն գյուղի զավակ աշխատի իր գյուղի համար, ապա կծաղկեն բոլոր Խուտուտները, ամբողջ երկիրը։ Վեր կաց, Խուտուտ, տուր ձեռքդ, գնա առաջ։ Եվ թող Խնկանոսն օրինակ լինի քեզ…

Երբ դիմացը երևաց Խնկանոսը, Հայնեն դրան նայեց մի նոր զգացմունքով, քան միշտ:

Խնկանոս... Ամբողջ ժամանակ, ամեն րոպե, նա ներկա էր յուրաքանչյուր խուտուտցու կյանքում: Երբ ասում էիր՝ «Խուտուտ», անպայման ասում էիր նաև՝ «Խնկանոս»: Բայց այդ երկու անունները ոչ ոքի մոտ, համենայն դեպս Հայնեի մոտ, չէին գտնվում կողք կողքի, այլ իրար դեմ էին: «Բա ինչո՞ւ Խնկանոսն ունի, իսկ մենք՝ ոչ»: «Դե, մենք հո Խնկանոսը չե՞նք, որ մեզ էլ հաշվի առնեք»: «Խնկանոսում թատրոնի շենք են կառուցում՝ մեր ակումբից տասն անգամ մեծ»: «Խնկանոսից մի լավ ռադիոընդունիչ գնեցի»…

Ամեն անգամ, Խնկանոս մտնելիս, Հայնեն զգում էր, որ մտնում է ուրիշ բնակավայր, ուրիշների բնակավայր: Նրա և՛ քայլերն էին դառնում ավելի հուշիկ, և՛ ձայնն էր դառնում ավելի անվստահ՝ որևէ մեկի հետ խոսելիս: Խանութում բան գնելիս նա աշխատում էր չլինել պահանջկոտ, փողոցով անցնելիս՝ ճանապարհը զիջել ուրիշներին, տեղացիներին... Այդպես մարդ պահում է իրեն ուրիշի տանը, ոչ շատ մտերիմների…

Սակայն այս անգամ Խնկանոսը Հայնեի համար դարձել էր մի քիչ ավելի հարազատ: Մի թել էր ձգվել բանաստեղծի հոգուց դեպի այդ «ուրիշի տունը»: Բանն այն է, որ երկու շաբաթ առաջ Խնկանոսի շրջանային փոքրիկ թերթում տպվել էր Հայնե Խուտուտացու ոտանավորը: Առաջին տպագիր ոտանավորը... Ճիշտ է, տպագրությունն ապահովելու համար նա մի քիչ շողոքորթություն էր արել, գովել էր Խնկանոսը, բայց մի՞թե հանցանք էր դա: Խնկանոսը, իրոք որ, գովելու գյուղ էր, ավելի շուտ՝ ավան:

Թեև Հայնեն շրջանային կենտրոնին այնքան լավ էր ծանոթ, որքան որ իրենց գյուղին, այնուամենայնիվ ամեն անգամ նա մի նոր հետաքրքրությամբ էր դիտում այդ ավանը: Ոչ միայն դրա ծանոթ շենքերն ու փողոցներն էին ամեն անգամ մի նոր կերպ երևում նրան, պատճառում նախանձախառն տխուր բավականություն, այլև ամեն անգամ մի որևէ նորություն էր հայտնվում արագորեն աճող այդ շրջկենտրոնում: Դեռ հազիվ նախորդ տարի հիմք էին դրել մի սովխոզի՝ գյուղի ծայրին, իսկ այս տարի այնտեղ արդեն ավարտման վրա են սովխոզի աշխատողների բնակելի չորս շենքերը, բոլորն էլ երեք հարկանի, ամեն մեկը քսան-երեսուն բնակարանով... Իսկ մի ամիս առաջ, ավանի կենտրոնում, սկսել են փորել արթեզյան ջրհոր՝ խմելու ջուր հանելու համար: Դրա աշխատանքները ղեկավարում էր Շեկ Մամբրեն:

Հայնե Խուտուտացին որոշակի ամբարշտություն էր զգում նրա հանդեպ: Փոխանակ ծառայելու իր հայրենի գյուղին, գնացել աշխատում էր Խնկանոսի համար: Մի՞թե Խուտուտը նույնքան կարոտ չէր ջրի, եթե ոչ ավելի:

Ու թեև Հայնեն գիտակցում էր, որ Շեկ Մամբրեն ինքնագլուխ կերպով չէր արել այդ բանը, այլ նրան պատվիրել էին ու թեև գիտակցում էր նաև, որ ավելի մեծ բնակավայրին առաջին հերթին պետք էր տալ ջուր, իսկ ավելի փոքրին՝ դրանից հետո, բայց այդ բոլոր ճիշտ դատողությունները մտքեր էին միայն, որ պտտվում էին նրա գլխում, բայց չէին դառնում զգացմունք և իջնում դեպի սիրտը: Իր սրտում Հայնեն, այնուամենայնիվ, մնում էր խիստ դժգոհ Շեկ Մամբրեից:

Արթեզյան ջրհորի շուրջը, առավոտից երեկո, հավաքվում էին շատ գյուղացիներ և դիտում աշխատանքը: Գերաններից սարքված վիշկան՝ հորի վրա կանգնած, չուգունե խողովակները, էլեկտրալարերը, անջատիչներով ծածկված վահանակը, և, վերջապես, փորող սարքը, այդ բոլորն այնքան լուրջ էին ու վստահություն ներշնչող, որ ոչ ոք չէր էլ կասկածում հաջողության վրա: Բայց ջուր չկար ու չկար, թեև, ըստ գիտականորեն հիմնավորված ենթադրությունների, պետք է որ արդեն լիներ:

Հորի շուրջը գետինը շարունակ ծածկված էր խոնավ, իսկ երբեմն ուղղակի թաց հողի մեծ ու փոքր կույտերով, այդ հողը փոխադրող բեռնատար մեքենայի անիվների հետքերով:

Քիչ հեռվում կանգնած էր Լենինի արձանը և մատով ցույց էր տալիս կարծես հենց արթեզյան ջրհորը և ասում էր.— «Մի՛ հուսահատվեցեք, փորեցեք»…

Աշխատանքների ղեկավարը, սուր դիմագծերով ու բարկացկոտ դեմքով այդ երիտասարդը, Մամբրեն, բարի մարդ էր. գյուղացիները շուտով զգացին այդ: Նրանք չէին քաշվում շարունակ հարցեր տալ նրան: Ու թեև նա պատասխանում էր արտաքնապես բարկացած ու խիստ տոնով, բայց միշտ բացատրում էր նրանց ամեն ինչ, մանրամասն: Տեսնելով, որ երեխաները չափից ավելի են մոտենում ջրհորին, նա հանկարծ բղավում էր վախեցած.

— Փախե՛ք, ջուր է բարձրանում, կխեղդվեք…

Երեխաներն սկզբում հավատում էին նրան և լեղապատառ շաղ էին գալիս չորս կողմ, իսկ նա չէր էլ ծիծաղում:

Հայնեն մոտեցավ հավաքվածներին և կանգ առավ: Չնայած կիրակի օրվան, այդտեղ շարունակվում էր աշխատանքը, ընդհատել չէր կարելի, ջուրը կլցվեր ամբողջ հորը և հաջորդ օրը կխանգարեր աշխատելուն:

Շեկ Մամբրեն, բանվորական հագուստով, թևերը մինչև արմունկները վեր քշտած, աշխատում էր: Նա ինժեներ-մեխանիկի հետ միասին պնդացնում էր փորող սարքի վրա ինչ-որ պտուտակ: Սարքը, տեղ-տեղ ժանգոտված մասերով, ամբողջովին թաց էր:

Հայնե Խուտուտացու ետևում եկավ և կանգ առավ դեպի Երևան գնացող ավտոբուսը: Երևի ոմանք իջան ոմանք էլ բարձրացան, և ավտոբուսը շարունակեց ճանապարհը:

Հայնեն կլանված նայում էր ջրհորի շինարարությանը: Ոչ միայն նա, այլև բոլոր հավաքվածները լուռ էին, ամեն րոպե սպասողական: Սպասում էին շատրվանի, հողը դառնում էր ավելի և ավելի թաց, ուղղակի ջրախառն ավազ:

Հավաքվածների մեջ Հայնեն տեսավ էլի մի քանի խուտուտցիների: Նրանք էլ էին եկել իրենց կիրակին արթեզյան ջրհորի մոտ անցկացնելու: Ահա մոտեցավ նաև Նանարը. երևի իջել էր քիչ առաջվա ավտոբուսից:

Գործն ավարտելով, Մամբրեն բարձրացրեց գլուխը, նայեց շուրջը: Համարյա անմիջապես նա նկատեց Նանարին: Նրա աչքերը կլորացան զարմանքից:

— Նանա՞ր...— բացականչեց նա և մոտեցավ աղջկան:

— Դո՞ւ, Մամբրե,— նույնպես զարմացավ Նանարը:— Մի՞թե վերադարձել ես և այստեղ ես աշխատում…

Զարմացավ նաև Հայնե Խուտուտացին: Ի՜նչ մոռացկոտն է Նանարը: Չէ՞ որ դեռ անցյալ շաբաթ, հենց ինքը Հայնեն էր հայտնել Նանարին Շեկ Մամբրեի այդտեղ աշխատելու մասին: Դե, իհարկե, կմոռանա: Ուսուցչուհին բանաստեղծի հաղորդած նորությունը լսել էր ցրված հայացքով, անտարբեր…

Մամբրեն ու Նանարը քաշվեցին մի կողմ, սկսեցին զրուցել կիսաձայն:

— Ի՜նչ գեղեցիկ ես դարձել, Նանար...— հասան խոսքերը Հայնեի ականջին։— Ասենք, դու միշտ էիր գեղեցիկ, բայց այժմ ինչպիսի՜ հղկվածություն, ճաշակ…

— Վերադարձել ես և ոչ մի անգամ չես եկել քո հայրենի գյուղը,— լսվեց Նանարի հանդիմանական կիսաշշուկը։

— Մի՞թե դու այնտեղ ես ապրում։ Իսկ... հո չե՞ս ամուսնացել։

— Իմ մասին չէ խոսքը, Մամբրե։ Մի՞թե Խուտուտը քեզ չի հետաքրքրում։

— Խուտուտը՝ ոչ։ Դու հո չե՞ս ամուսնացել, ասա…

2

Ինչ-որ մեկի ձեռքը թեթևակի իջավ Հայնեի ուսին։

— Հա՞յկ…

Բանաստեղծը շուռ եկավ։ Կանգնած էր խուտուտցի մի ծանոթ մարդ, որն ահա մի քանի տարի էր, ինչ հեռացել էր այնտեղից, աշխատում էր Խնկանոսում։

— Հայնեն դու չե՞ս, Հայկ։ Բարի օր քեզ։

— Ես եմ...— կմկմաց բանաստեղծը՝ թուքը կուլ տալով։— Ի՞նչ կա որ…

— Բանաստեղծությունդ տպեցիր, բա հոնորարի մասին չե՞ս մտածում։

— Ինչի՞ մասին...— չհասկացավ Հայնեն։

— Հոնորարի, փողի։ Ես թերթի հաշվապահն եմ, իսկ ամսվա հաշիվն արդեն պիտի փակենք։

Հայնեն սառեց-մնաց իր տեղում։ Նա չգիտեր, որ բանաստեղծություն տպելու համար հեղինակը պետք է դրամ վճարի։ Իսկ նա գրպանում չուներ ոչ մի կոպեկ…

— Գնանք,— առաջարկեց հաշվապահը՝ բանալին հանելով գրպանից և խաղացնելով ձեռքում։— Էս է խմբագրությունը։

— Իսկ չի՞ լինի, որ մի ուրիշ անգամ...— կարմրեց Հայնեն։

Հաշվապահը, որ արդեն քայլում էր, զարմացած շուռ եկավ.

— Այ տղա, էդ ինչքա՞ն ես հարստացել, որ չես ուզում փողդ ստանալ։

Ստանա՞լ... Ո՞վ ստանա... Ինչո՞ւ համար...

Հայնեի գլխում ամեն ինչ խառնվեց իրար։ Առանց հասկանալու որևէ բան, նա քայլեց հաշվապահի ետևից, բարձրացավ շրջսովետի շենքի երկրորդ հարկը։ Նրանք մտան ինչ-որ սենյակ։ Հաշվապահը բաց արեց գրասեղանի դարակը, հանեց այնտեղից մի ցուցակ։ Հայնեն ընդարմացած ձեռքով ստորագրեց իր ազգանվան դիմաց, սարսափով վերցրեց հաշվապահի ձեռքից թղթադրամները և, խեղդվելով հուզմունքից, որ այդպես վիրավորեցին իրեն, վճարեցին նրա մաքուր զգացմունքների արգասիքի համար, նետվեց դուրս։ Բայց դեռ հազիվ էր ոտքը դուրս դրել շեմքից, երբ մոռացավ

ամեն ինչ, որովհետև նրա երեսն ի վար խփվեց սառը ջրի մի ուժեղ շիթ ինչպես հրշեջ խողովակից: Նա վախեցած ցատկեց մի կողմ, բայց դա ավելորդ էր, շիթն ինքը շուռ եկավ մի այլ կողմ: Ողջ հրապարակը թնդում էր ուրախության աղաղակներից: Համարյա բոլորը թրջված էին: Ջրհորի վրա կռացած մի քանի մարդիկ, ոտքից գլուխ թրջված, աշխատում էին ինչ-որ գործիք ամրացնել ջրհորի բերանի սարքի վրա: Վերջապես դա հաջողվեց, և Մամբրեն, կտրուկ շուռ գալով, թրջված, երջանիկ, նետվեց դեպի Նանարը, գրկեց նրան, շնորհավորեց և ամուր համբուրեց շրթունքները՝ չամաչելով ոչ ոքից:

3

Դրամն այրում էր Հայնեի ձեռքը: Նա մի պահ վճռեց շպրտել դա մի կողմ, բայց ափսոսաց, դրեց գրպանը: Գյուղացիների ամբոխն արթեզյան ջրհորի շուրջը շատանում էր ավելի և ավելի: Բոլորն ուզում էին թրջվել և պահանջում էին անարգել բաց թողնել ջուրն իրենց վրա: Ի՞նչ անել այդ դրամը... Մարդիկ շնորհավորում էին իրար, ծիծաղում: Բայց ջուր այլևս չկար: Հորի բերանը փակել էին և վրան ամրացրել չուգունե գլխիկ՝ չորս մեծ ծորակներով: Ջո՞ւր է հարկավոր՝ բաց արա ծորակը, վերցրու, նորից փակիր: Հայնեն երբեք չի ունեցել այդքան դրամ: Իր աշխօրերի մթերքն ու համեստ գումարները, իհարկե, ստացել է նրա հայրը: Ապա ինչպե՞ս: Իսկ սա նրա հույզերով վաստակած առաջին դրամն է: Հույզերով վաստակած... Ի՞նչ անել, ո՞ւր կորցնել այդ դրամը…

Նրա կողքին նորից հռնդաց ու կանգ առավ ավտոբուսը: Թվաբանության հետ երբեք գլուխ չունեցող Հայնեն կայծակի արագությամբ հաշվեց մտքում, որ իր դրամը ճիշտ և ճիշտ կբավականացնի երկու տոմսի համար՝ դեպի Երևան և ետ…

Նա նետվեց ավտոբուս: Երբ այն շարժվեց, Հայնեն մի բնազդական շարժում արեց՝ դուրս նետվեց այնտեղից՝ այնքան արտակարգ բան էր իր արածը...

Ավտոբուսում չկային կանգնած մարդիկ, նստելու տեղերը նույնպես, լրիվ չէին զբաղված: Հայնեն անվստահ նստեց մի ազատ տեղում: Նստեց և նրա մեջքով սարսուռ անցավ. նա երբեք չէր նստել այդպիսի փափուկ տեղ…

Նա կպավ լուսամուտին, սկսեց նայել դուրս: Ահա վերջացավ Խնկանոսը, դրանից այն կողմ ամեն ինչ անծանոթ է Հայնեին: Ամբողջ աշխարհը... Նրա սիրտը լցված էր թե՛ հպարտությամբ՝ իր երջանկության համար, թե՛ վախով՝ անծանոթի հանդեպ: Տես թե ինչպե՛ս հանկարծակի շուռ եկավ նրա բախտի անիվը — նա գնում է Երևան…

Հանկարծ Հայնեն մտածեց, որ ախր պետք է նայել նաև մյուս կողմ: Կտրուկ պոկվեց ապակուց, նայեց: Այն մյուս կողմի վրա ավտոբուսի լուսամուտները բաց էին: Նա փոխադրվեց այնտեղ:

Աջ ու ձախ շարունակ հանդիպում էին մեծ ու փոքր բնակավայրեր, Խնկանոսից էլ լավ: Դրանք երբեմն ունեին չորս, հինգ հարկանի շենքեր՝ ինչպես կինոնկարներում: Քանի իջնում էին լեռնաստանից, բուսականությունն այնքան առատ էր դառնում: Ահա նորից բնակավայր: Այս ինչքա՞ն մեծ է... Չլինի՞ հենց սա է Երևանը... Բայց ոչ: Կտրեցին անցան...

Կարծեցյալ Երևանից հետո հանդիպեցին էլի շատ բնակավայրեր: Հայնեին թվում էր, թե վաղուց, շատ վաղուց է, ինչ նա ճանապարհ է գնում: Ցանկություն զգաց բղավելու վարորդին՝ կանգնի՛ր, իջնում եմ, գնում եմ ետ... Բայց սրտապնդվեց: Հո հանգիստ նստա՞ծ են մյուս ուղևորները: Ափսոս, որ խուտուտցիներ չկան նրանց մեջ. Հայնեն ավելի կսրտապնդվեր:

Մեքենան դուրս ելավ մի լայն և քանոնի պես ուղիղ ճանապարհ, որի ասֆալտը սևացել էր երթևեկությունից: Եվ սկսեց այնպես սլանալ, որ Հայնեի սիրտը կանգ առավ միանգամից: Փորձանք չպատահի՞…

Թեև Հայնեն երբեք չէր ունեցել այդքան դրամ, բայց գիտեր, որ դա մի առանձին գումար չէ. նա գիտեր, թե ի՛նչ արժեն իր ոտների կիսակոշիկները, հագի գունաթափ շալվարն ու երկարափեշ սպիտակ վերնաշապիկը: Ուրեմն ինչպե՞ս չզարմանալ, որ պետությունը մի այդպիսի փոքրիկ վճարով քեզ ման է ածում այդքան տարածություն, այն էլ՝ այդպիսի փափուկ տեղ նստեցրած…

Սառը քրտինքը պաշարեց Հայնեին: Դիմացը ճանապարհն ընդհատվում էր, այնտեղ ընդհանրապես գետին չկար, այլ միայն երկինքն էր: Ավտոբուսը սլանում էր՝ ասես գահավիժելու երկնքի խորխորատը…

Հայնեն վեր ցատկելու մի շարժում արեց և միայն վերջին վայրկյանին ետ պահեց իրեն: Նրան ոչ թե հանգստացրեց մյուս ուղևորների հանգստությունը, այլ նա իր դիմաց տեսավ ճանապարհի կտրուկ շրջադարձը դեպի ձախ: Ավտոբուսը, հազիվ մի փոքր դանդաղեցնելով իր ընթացքը, շուռ եկավ:

Իսկ ի՞նչ կա աջում... Հայնեն նայեց և…

Կանցնեն տարիներ ու տասնամյակներ, շատ բան կտեսնի կյանքում Հայնե Խուտուտացին, բայց այսպիսի բան՝ երբեք…

Ներքևում, հովտում, մինչև հորիզոն, փռված էր Երևանը... Դա շենքերի ու ծառերի մի գույնզգույն ու բազմահարկ ծով էր... «Ես էդքան մեծ չէի պատկերացնում,— անցավ Հայնեի մտքով,— էս ի՞նչ բան է, ես զժվեցի, էս ի՞նչ բան է...»:

Ավտոբուսը շարունակ ու շարունակ իջնում էր վար: Ապա շրջվեց և նորից իջավ: Էլի շրջվեց և իջավ: Եվ ահա, Երևանը կորավ աչքից, մնաց մի լայն ու երկար փողոց: Բայց Երևանը դրա շուրջն էր, դա զգում էիր, դա չէիր կարող չզգալ…

Կանցնեն տարիներ ու տասնամյակներ, շատ բան կտեսնի աշխարհում Հայնեն... Ավտոբուսը կանգ առավ: Մարդիկ սկսեցին իջնել: Իջավ նաև Հայնեն Խուտուտացին՝ դժվարությամբ պոկվելով ավտոբուսից, որը վերջին կապն էր նրա ու Խուտուտի միջև և առանց որի նա բոլորովին մենակ էր մնում այդ անծանոթ քաղաքում... Ոտք դնելով ասֆալտի վրա, նա երերաց, քիչ մնաց ընկներ. երկար ճանապարհը ճոճել էր նրան:

Հայնե Խուտուտացին Երևանում… Առաջին անգամ...

4

Հայնեն Խուտուտ վերադարձավ մութն ընկնելուց դեռ շատ առաջ: Նա հասկացավ, որ մի ժամ ավելի կամ պակաս մնալը Երևանում ոչինչ չի փոխի, միևնույնն է, չես սպառի ամբողջ քաղաքը: Դրա համար հարկավոր են ոչ թե ժամեր, այլ ամիսներ: Եվ նա շտապեց վերադառնալ՝ վախենալով վրա հասնող երեկոյից այդ անծանոթ վայրում:

Ավտոբուսի կանգառից քայլելով դեպի գյուղ, նա մոլորված նայում էր իր շուրջը: Ամեն ինչ փոխվել էր նրա աչքում: Ահա և իրենց գյուղը: Մի՞թե, իրոք, սա է Խուտուտը... Մի՞թե սա է այն Խուտուտը, որը երեկոներին «ողողված էր բյուր հազար լույսերով», որի «փողոցներով ու հրապարակներով

սրընթաց սլանում էին ավտոները», որի «լայնարձակ դաշտերում հոնդում էին տրակտորներն ու կոմբայնները»…

Ոչ, Հայնեն չէր երազում, որ Խուտուտը դառնար Երևան: Նա հիմար տղա չէր և գիտեր, որ երկիրը կարող է ունենալ միայն մի մայրաքաղաք, մի շարք ուրիշ քաղաքներ՝ ավելի փոքր, և հազարավոր գյուղեր՝ շատ ավելի փոքր: Օրինակ, Խնկանոսից նա չէր հիասթափվել: Ավտոբուսով անցնելով շրջկենտրոնով, նա տեսել էր, որ դա էլի նույնն էր, չէր փոքրացել: Իսկ իրենց գյուղից հիասթափվել էր: Ինչո՞ւ…

Երևի Հայնեն, իրոք որ, աչքաբաց տղա էր, որովհետև նա իսկույն հասկացավ դրա պատճառը: Խնկանոսը զարգանում էր, իսկ Խուտուտը՝ ոչ: Կարևոր չէ, թե որտե՛ղ ես ապրում, կարևոր է, որ այդ բնակավայրը միշտ լինի ընթացքի մեջ և դու զգաս, որ ինքդ էլ ես մասնակից դրա շարժմանը, առաջխաղացմանը: Այ, մի քանի ժամ առաջ սկսեց գործել Խնկանոսի արթեզյան ջրհորը, իսկ հիմա կանայք դույլերով գալիս են ջուր տանելու՝ այնպիսի սովորական դեմքերով, կարծես ջրհորը նրանց մոտ գոյություն է ունեցել հուր հավիտենից սկսած: Ո՞վ գիտե, վաղը խնկանոսցիք կարող են բոլոր տներում ծորակներ անցկացնել՝ ինչպես նկարագրված է գրքերում, ջուրը վերցնելով այդ ջրհորից: Կամ, եթե ուզեն, կարող են առու փորել և ջուրը գետակի պես բաց թողնել, որ հոսի գյուղի մեջտեղով... Բավականություն է՝ Խնկանոսում ապրելը:

Իսկ Խուտո՞ւտը... Ինչո՞ւ մեր գյուղի անունը չեն փոխում՝ «Ուղտի Պոչ»: Ասենք, Խուտուտ անունն էլ դրանից լավը չի: Եվ ահա այդ գյուղն էր գովերգում Հայնեն իր ոտանավորների մեջ... Կարդացող անծանոթ մարդը պիտի կարծեր, թե իրոք, նա ապրում է փառահեղ մի գյուղում...

Մի ուրիշ բանից էլ էր դժգոհ Հայնե Խուտուտացին: Նա այժմ խիստ ամաչում էր, որ նախքան Երևանը տեսնելը նա ամեն լավ բանի չափանիշը համարել էր Խնկանոսը, միայն Խնկանոսը: «Մկան համար ամենամեծ գազանը կատուն է»,— մտածում էր նա՝ չարությամբ լցված ինքն իր հանդեպ: Իհարկե, Խնկանոսը լավ ավան է, բայց աշխարհը հո չի՞ ավարտվում դրանով... Ախ, ինչո՞ւ նա չի տեսել Երևանը մի քանի տարի առաջ, երբ դեռ նոր էր սկսել բանաստեղծություններ գրել: Չէր գրի այդպիսի հիմար ու ծիծաղելի տողեր…

Հայնեն մտավ իրենց բակը, ապա և տուն: Հայրը բակում էր, զբաղված իր հավիտենական գործով, մայրը՝ տանը: Նրանք, իհարկե, ոչինչ չգիտեին որդու ո՛ւր գնացած-եկած լինելու մասին և չնկատեցին նրա մեջ տեղի ունեցած հեղաշրջումը: Բայց Հայնեն զարմացրեց մորը՝ իսկույն խնդրելով.

— Մայրիկ, որտե՞ղ է մեր լուցկին, տուր…

— Սկսել ես ծխե՞լ...— կասկածով ու վախով հարցրեց տարիքոտ կինը:— Հերդ որ իմանա՛...

— Հենց ծխելն է ինձ պակաս,— քմծիծաղեց Հայնեն:

Լուցկին դնելով գրպանը, նա մոտեցավ իր թախտին, գլխատակից վերցրեց կարպետի տակ դրած իր բոլոր տետրակները՝ ոտնավորներով լի: Բայց որտե՞ղ վառել: Տանը՝ մայրն է, բակում՝ հայրը…

Տետրակներն օձիքի միջով կոխելով վերնաշապկի տակ, Հայնեն դուրս ելավ փողոց: Որտե՞ղ վառել... Կիրակի օր է, բոլոր գյուղացիները տանն են և փողոցներում, իսկ օրն էլ դեռ չի մթնել: Ասենք՝ ավելի վատ, եթե մթնի.— բոցը կերևա…

Իհարկե, պետք է դուրս գալ գյուղից: Բայց դուրս գալ դեպի Խնկանոսի ճանապարհը՝ նա չի կարող, որովհետև այնտեղով բոպեն մեկ վերադառնում են Խնկանոս կամ Երևան, գնացած խուտուտցիները: Մնում է՝ բարձրանալ քարափի գլուխը…

Այն լանջով, որով մի օր բարձրացել էին Նանարն ու Մամբրեները, առաջին անգամ իր կյանքում սկսեց բարձրանալ նաև Հայնե Խուտուտացին: Կածան, առաջվա պես, չկար, բայց նրա ոտքերը նույնպես, բնականաբար, գնացին նույն ուղղությամբ,— դեպի քարափի քանդոտված մասը, որտեղ քարերը թափթփվել էին սանդուղքի աստիճանների ձևով:

Հասնելով քարե սկուտեղին, Հայնեն մի պահ շունչ քաշեց հանգիստ, ապա, առանց ետ շրջվելու, կամ ներքև նայելու, պպզեց, հանեց տետրակները ծոցից, թափեց ներքև: Ափսոսանքի ոչ մի պահ չտատանեց նրա ձեռքը: Նա հանգիստ վերցրեց մի տետր, պոկեց թերթերը, ճմրթեց, թափեց գետնին: Վերցրեց երկրորդը, երրորդը... Ոչ, դա լավ է, որ մութը չի ընկել, դեռ արև է: Թե չէ բոցը պիտի բռներ ամբողջ աշխարհը... Բայց դու նորի՞ց չափազանցում ես, հիմար: Աշխարհը մեծ է շատ մեծ, իսկ քո բոցը պիտի երևար միայն Խուտուտում…

Հազիվ էր Հայնեն լուցկին մոտեցրել ճմրթված թղթերի մեծ կույտին, երբ լանջի կողմից լսվեց ոտնաձայն, ավելի շուտ՝ ոտքերի տակից գլորվող քարերի հնչյուն: Հայնեն զգաց վառվող թղթերի հոտը, տեսավ արագորեն բռնկվող բոցը և լսեց աղջկա մի վախեցած ճիչ.

— Էդ ի՞նչ ես անում, Հայկ...

Հայնեի շունչը եկավ տեղը: Նրա դիմաց կանգնած էր իրենց հարևանի աղջիկը՝ Նանարի անունով Նանար կոչված:

— Խորոված եմ անում,— հանգիստ պատասխանեց Հայնեն:

— Բա մի՞սը որտեղ է,— կասկածով հարցրեց Նանարը:— Բա թղթի վրա խորոված կանե՞ն: Էն էլ՝ քարափի գլխին…

— Հոգիս եմ խորովում:

— Էդպես էլ գիտեի,— տնքաց աղջիկը տագնապով, ապա, նոր միայն, գլխի ընկնելով, բացականչեց,— ոտանավորնե՞րդ ես վառում…

Նետվելով դեպի խարույկը, նա փորձեց հանել այնտեղից դեռ չվառված թղթերը:

— Ձեռք մի՛ տա,— խստությամբ բացականչեց Հայնեն:

— Դու որոշել ես վառել ու հետո կյանքիդ վե՞րջ տալ...— սարսափով կռահեց աղջիկը:

— Հիմար բան ես ասում: Որոշել եմ սկսել իմ կյանքը:

— Բան չհասկացա, Հայկ ջան:

— Ժամանակը որ գա՝ կհասկանաս: Նստիր, վարից կնկատեն քեզ:

Աղջիկը նստեց:

— Բա ի՞նչ արժեք ունի սրանից հետո քու կյանքը, Հայկ ջան, քանի որ վառում ես ոտանավորներդ: Ախր բանաստեղծ ես:

— Ձիբի՛լ եմ: Նոր պիտի դառնամ բանաստեղծ: Իսկ դո՞ւ ինչպե՛ս ծլեցիր քարափի գլխին:

— Ես վաղուց էի քեզ սպասում, Հայկ ջան, որ մի ուրախ լուր հայտնեի քեզ, բայց դու չկայիր: Ո՞ւր էիր գնացել: Մեկ էլ տեսնեմ, եկար, մտար ձեր տուն ու շուտով էլ դուրս ելար: Անցար մեր դռնով, չնայեցիր էլ մեր տան կողմը: Մտածեցի՝ էս ո՞ւր է գնում դեպի գյուղի վերևը: Սիրտս կասկած ընկավ՝ չլինի՞ Աստղիկենց կողմերը... Իհարկե, Հայկ, դա իմ ի՞նչ իրավունքն է, բայց... բայց հարևաններ ենք, ինչո՞ւ ուրիշը հայտներ քեզ ուրախ լուրը, երբ որ ինքս էի ուզում հայտնել: Չնեղանաս, Հայկ ջան, կասկածը սրտումս եկա քու ետևից: Տեսնեմ՝ սկի չնայեցիր էլ Աստղիկենց կողմը, բարձրանում ես դեպի քարափը: Դե, դու տղա ես, շուտ բարձրացար, իսկ ես հազիվ հասա շնչակտուր: «Չլինի՞ գնում է, որ իրեն վար գցի քարափից»,— մտածեցի հիմար ձևով: «Ո՞վ գիտե,— մտածեցի,— տղա է, գուցե սիրահարվել է, ու աղջիկն էնքան անճաշակ է, որ մերժել է նրան...»:

— Դու քու նորությունն ասա,— շփոթվելով ու կարմրելով, խոսքը փոխեց Հայնեն՝ աչքերը խարույկի սև մնացորդներին ուղղած:

— Բա դու չե՞ս լսել: Ամբողջ գյուղն է խոսում:

— Էդ ի՞նչ լուր է,— այս անգամ կենդանի հետաքրքրություն ցույց տալով, աղջկան նայեց Հայնեն:

— Հաստա՞տ չգիտես: Ախր մեր Խուտուտը լիկվիդացիա են անում:

— Ինչպե՞ս թե…

— Բա: Խնկանոսցի ենք դառնալու: Սովխոզի էն երեք հարկանի շենքերը տեսե՞լ ես: Խուտուտը տեղավորում են դրանցից երկուսի մեջ: Բանջարաբուծությամբ ենք զբաղվելու: Մեր գեղի տեղը լիճ է լինելու, որ ներքևի հովիտը ոռոգեն, պտղատու ծառեր տնկեն…

— Նանար...— բացականչեց Հայկն անչափ ուրախացած:— Նանա՛ր... Կարո՞ղ եմ համբուրել քեզ էդ լավ լուրի համար...

— Կարող ես, անգութ,— հառաչեց աղջիկը,— էս երկու տարի է, որ կարող ես, հաստագլուխ բանաստեղծ Հայնե Խուտուտացի…

— Էդպիսի բանաստեղծ չկա,— ժպտաց երիտասարդը:— Վառվեց: Կա բանաստեղծ Հայկ... Հայկ Նանարի…

Ամուլ քարաստանում ծաղկեց սիրո առաջին համբույրը:

1957